

# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ


ՄՈՎՍԵՍ ՔԵԹՈՂԱՀԱՅՐ
ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑԻ
ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ
ԽՍԱՅԻ ՆՋԵՑԻ
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ
ՄԱՏԹԵՈՍ ԴՊԻՐԻ


Ս. ԷՋՄԻԱԾԻՆ -1996

Հոգեւոր Գրադարան

Ե

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական
Դաստիարակության և Քարոզչության Կենտրոն

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Արարեալ երանելի հարցն մերոց
Մովսես քերթողահաւր եւ
Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի,
եւ երանելի հայրապետին
մերոյ Յովհաննես Օձնեցւոյ
եւ երանելի վարդապետացն մերոց
Պօղոսի Տարօնացւոյ եւ
Եսայեայ Նչեցւոյ
եւ երիցս երանեալ սուրբ հաւրն մերոյ
Գրիգորի Տաթեւացւոյ
եւ ոմն բանասէր գիտնականի
Մատթէի Դպրի

Ի վանորեաս Հայաստանեայց աշխարհի
Է-ԺԴ դար

# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
# ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ

Արված մեր սուրբ հայրեր
ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԱՀՈՐ եւ
ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ,
նաեւ մեր երանելի հայրապետ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ
եւ երանելի մեր վարդապետների՝
ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ եւ
ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ
եւ մեր երիցս երանելի սուրբ հայր
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ
Եւ մի բանասեր գիտնականի՝
ՄԱՏԹԵՈՍ ԴՊԻՐԻ
կողմից

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1997

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մատէք առ Տէր եւ առէք գլոյս. ալէլուիա:
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ալէլուիա:

*Պաշտամունքը, ծիսական արարողությունները առանցքն են հանդիսանում քրիստոնեական հավատքի: Առանց կրոնական ծիսակատարությունների և հասարակաց աղոթքի կրոն չկա: Քանզի պաշտամունքը դա անհատական աղոթքի կերպ չի, այլ հավաքական, ուր հավատացյալները միասնական կերպով մասնակցում են հոգևոր արարողությանը՝ երգերով, աղոթքներով և օրհնաբանություններով:*

*Հիսուս ևս մասնակցեց ծիսական արարողություններին, ուսուցանեց աղոթելու նոր ձև, հաստատեց խորհուրդներ և պատգամեց համայնաբար կատարել աստվածպաշտությունը:*

*Քրիստոնեության զարգացման և տարածման հետ մեկտեղ, Եկեղեցու հայրերը սահմանեցին հասարակաց աղոթքի ժամեր, գրեցին պատարագամատույցներ, որը դարերի ընթացքում ճոխացվեցին հոգևոր երգերով ու աղոթքներով:*

*«Ժամակարգութիւնները յօրինուեցին էապէս վանականներուն եւ հաւատացեալներուն առիթներ ստեղծելու համար որպէսզի հաւաքականօրէն եւ տեւաբար հաղորդութեան մէջ ըլլան Աստուծոյ հետ պաշտամունքի կրօնաբոյր եւ հոգեւոր մթնոլորտի մէջ, որ ինքնին անձնական աղօթքի, ներհայեցողութեան ու խորհրդածութեան կարելիութիւն եւ մղում ստեղծող ոյժ մը ունի իր մէջ: Մարդը չի կրնար այդ ոյժը լիովին զգալ եւ արժեւորել իր կեանքի մէջ, մինչեւ որ հաղորդակից, մասնակից չդառնայ ժամերգութեանց բովանդակութեանը»:*

*Այսպիսի բնորոշում է տվել Ժամերգության խորհրդին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:*

*Սակայն կրոնական պաշտամունքը հավատացյալի հոգևոր կյանքի նորոգություն չի դառնա, եթե նա անգիտակից և կրավորական կերպով մասնակցի արարողություններին: Սույն մտահոգությունից էլ դրդված Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի նախաձեռնությամբ պատրաստվեց այս գիրքը: Գրքի նպատակն է մեր Եկեղեցու հայրերի ժամերգության բացատրություններից և մեկնություններից հավաքելով համապատասխան լուսաբանող հատվածներ վեր հանել տվյալ ժամերգության թե՛ աղոթքի ու քարոզների և թե՛ շարականների ու սաղմոսների բացատրությունը և այդ ողջ արարողության կատարման նպատակաուղղվածությունը:*

*Հեղինակ և գլխավոր խմբագիր Արամ Դիլանյանի աշխատանքը շահեկան է ոչ միայն ժամերգությունների կատարման ընթացքի, ժամի և խորհրդապաշտության, այլև անհրաժեշտ տեղեկությունների նկատմամբ եկեղեցու, ժամագրքերի, ժամերգությունների ընթացքում օգտագործվող սպասքերի, համաքրիստոնեական բառերի ու բարեպաշտական սովորությունների բացատրությամբ:*

*Հավատացած ենք, որ սույն գիրքը կդառնա հայ հավատացյալի սրտին խոսող, ժամերգությունների ներքին բովանդակությունը և խորհուրդին հասու դարձնող, քրիստոնեական հարուստ կյանք տվող գիրք:*

Վազգեն վարդապետ Միրզախանյան

I

# ՄՈՒՏՔ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ժամերգությունները Եկեղեցու աղոթական կյանքի հիմքն են, որոնք իրենց հիմնական նշանակությամբ ընդհանրական աղոթքներ են, առանց որի Եկեղեցում չի կարող լինել հոգևոր կյանք: Ժամերգության ընթացքում ընթերցվում է Սուրբ Գիրքը, և շարականների միջոցով բացատրվում օրվա խորհուրդը, իսկ սարկավագի քարոզներից իմանում ենք, թե ինչպես պետք է մոտենալ սրբություններին և ինչպես մեր աղոթքները միահյուսել ընդհանուր աղոթքին, որը քահանան, վերցնելով ժողովրդից, մատուցում է Աստծուն:

Վերջին շրջանում բավականին նոսրացել են աղոթողների շարքերը: Հիմնական պատճառը, իհարկե, մեր ժամանակներն են, երբ մարդիկ հեռանում են Աստվածային լույսից և աշխարհի վայելքները գերադասում հոգևոր քաղցրությունից, իսկ չարն էլ իր հերթին սաստկացնում է պատերազմը մարդկանց հոգիների համար և օգտագործում ամեն զենք՝ հեռու պահելու մեզ աղոթելուց:

Եկեղեցի եկողներից շատերն էլ ժամերգությանը վերաբերվում են որպես լոկ երգեցողության և միայն մոմ վառելով՝ հեռանում են: Ոչ բոլորն են այսօր գիտակցում աստվածպաշտության անհրաժեշտությունը և անտեղյակ են ժամերգության խորհրդին:

Նաև այսօր ոչ բոլորին է հասկանալի ոսկեդարյան գեղեցիկ հայերենը, ուստի պարզ չէ նաև տվյալ ժամերգության ընթացքում հնչածը, բուն նպատակը և էությունը:

Այսպիսով, այս անբնական վիճակը գոնե որոշ չափով ուղղելու համար, ի մի բերեցինք ժամերգության մեկնությանը վերաբերվող մեր Եկեղեցու հայրերի ավանդած ժառանգությունը և, ընտրելով դրանցից առավել դյուրամատչելիները, շարադրեցինք այս գրքում՝ որպես ընդհանրական աղոթքների մասին նախնական ծանոթության ձեռնարկ:

Այս բնագավառում ամենամեծ հեղինակությունները յոթերորդ դարի երեք մեծանուն հայրերն են: Նրանցից առաջինը Մովսես Սյունեցին (Քերթողահայրն) է: Նա իր ժամանակին եղել է Հայ Եկեղեցու ավագ վարդապետը: Ապա Հովհաննես Օձնեցի հայրապետը և Մովսես Սյունեցու աշակերտ Ստեփանոս Սյունեցին, ով իր ժամանակին հայտնի է եղել Հռոմում և Կոստանդնուպոլսում:



Ապա հաջորդում են՝ Պողոս Տարոնացին, Եսայի Նչեցին և Գրիգոր Տաթևացին:

Վերջին շրջանի հեղինակներից ներառել ենք նաև Մաղաքիա Օրմանյանի, Գաբրիել Ավետիքյանի, Նորայր Պողարյանի գործերը և ևս մի հեղինակի, ում Օրմանյանը Մատթեոս Դպիր է անվանում, սակայն այս պարագան հավաստող մեկ այլ վկայություն չգտանք, չնայած գտանք այն ձեռագրի ընդօրինակությունը, որից 1759 ը և 1795 թթ. -ին Կոստանդնուպոլսի Հակոբ պատրիարքի հրամանով տպագրվել է «Մեկնութիւն Ժամակարգութեան» գիրքը: Օրմանյանը իր «Հայ Եկեղեցու ծիսագիտությունը» աշխատությունում մեջբերումներ է անում այս գրքից՝ նշելով, որ այն Մատթեոս Դպիրի գրչին է պատկանում:

Սկզբում նախատեսել էինք հրատարակել միայն այս գիրքը փոքրիկ հավելումներով, սակայն վերջիններս այնքան ստվարացան, որ իրենց ծավալով գերազանցեցին հիմնական նյութին: Վերջապես որոշվեց այս ամենը հրատարակել մի ամբողջական գրքույկում:

Մենք գիտակցաբար այստեղ չենք ընդգրկել Խոսրով Անձևացու, Գրիգոր Խլաթեցու և Մովսես Երզնկացու գործերը, որովհետև դրանով գրքի ծավալը ևս մի քանի անգամ կմեծանար, այլ թողել ենք հետագային:

Ասենք, որ գրքում չկան ժամերգության ընթացքին վերաբերող մանրամասներ և առանձին աղոթքների մեկնություններ, այլ հիմնական շեշտը դրված է տվյալ ժամի խորհրդի և աղոթելու պատճառների վրա: Օրինակ՝ նախ նկարագրվում է Եդեմի պարտեզը, ու պատմվում է Ադամի և Եվայի հետ այդ ժամին կատարվածի մասին: Այնուհետև, անցնելով Հին Ուխտի ժամանակաշրջանին, վեր են հանվում այն իրադարձությունները, որոնք բանալի կարող են լինել տվյալ ժամի խորհուրդը հասկանալու համար: Եվ որ ամենակարևորն է, պատմվում է Ավագ շաբաթվա և նրան հաջորդող դեպքերի մասին, որոնք ևս տվյալ ժամին կատարվեցին:

Այսինքն՝ նշվում է, թե ժամակարգության իննը ժամերից յուրաքանչյուրին նախասահմանված ամենը՝ Ադամն ու Եվան, ինչ մեղքեր գործեցին, և հետագայում այդ նույն ժամերն Քրիստոս Իր կրած չարչարանքներով

ինչպես քավեց այդ մեղքերը և մարդկության առջև վերստին բացեց փրկության ճանապարհը ու դրախտի փակված դուռը:

Եվ վերջապես հիշեցվում է Տիրոջ երկրորդ գալստյան մասին և հորդորվում է ժողովրդին՝ ապրել աղոթալից կյանքով և պատրաստ լինել այդ Մեծ օրվան:

Այսպիսով, զուգահեռի մեջ դնելով Հին և Նոր կտակարանները, իրար են կապվում որոշ դեպքեր, որոնց միջև հագարամյակների հեռավորություն կա, և մեկով բացահայտվում է մյուսի խորհուրդը: Հիմնականում նշվում է այն հանգամանքը, որ Եդեմի պարտեզում նախաստեղծների կատարած ամեն մի մեղանչման դիմաց մեր Տերը Իր տնօրինությամբ համապատասխան փրկչական գործողությունը կատարեց:

Ինչ վերաբերում է գրքի կառուցվածքին, այն պայմանավորելով Ժամագրքով և ժամակարգության ընթացքով, մեր շարադրանքում թարգմանաբար առանձին հատվածներով բերել կամ իրար ենք միահյուսել միևնույն խորհրդի, հասկացության կամ դրվագի մասին Եկեղեցու հայրերի գործերի փոխադարձաբար իրար լրացնող համապատասխան մասերը, շնորհիվ որի այս գործում հավաքաբար ներկայացվում են մեր Եկեղեցու վերը հիշված հայրերի մեկնությունները, որոնք ընթերցողին կօգնեն առավել խորությամբ հասու լինել ժամերգության խորհրդին և ընթացքին:



# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ

Ցաղօթս կացցեն առ Քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի
Սաղմ ԼԱ.6

# ՆԱԽԱԲԱՆ

## ԺԱՄԱԳՐՔԻ ՄԱՍԻՆ

*Ժամագիրք անվանումը ծագում է «ժամ» կամ «ժամասացություն» բառից՝ որը նշանակում է՝ «Գիր աղօթից պաշտելոյ ըստ ժամուց»: Սկզբնական շրջանում կոչվում էր՝ «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից», այստեղից էլ՝ «Ժամակարգություն»: Հետագայում անվանվել է նաև «Գիրք աղօթից» և «Աղօթամատոյց», իսկ տասնհինգերորդ դարից «Ժամագիրք»: Լեզուն ոսկեդարյան շրջանի գրաբարն է:*

*Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրոք* **(239-326)** *Հայ եկեղեցում պաշտամունքները՝ հասարակական աղոթքները, ըստ առաքյալների սահմանած կարգի, հիմնականում Աստվածաշնչի ընթերցանությունից և սաղմոսերգություններից էին կազմված և կատարվում էին հունարեն ու ասորերեն լեզուներով:*

*Նախքան Սուրբ Գրքի հայերեն թարգմանվելը եկեղեցում ընթերցումները կատարվում էին նշված լեզուներով, ապա՝ տեղում թարգմանվում հայերեն, և դրա իմաստը քարոզի ձևով տրվում էր ժողովրդին ու մեկնաբանվում:*

*Առաջին անգամ Հայ Եկեղեցում «Ժամագիրքը» ներմուծեցին և հիմնավորապես ժամասացությունը կարգի դրեցին սուրբ Սահակ Պարթև* **(387-436)** *ու սուրբ Մեսրոպ Մաշտոցը* **(361-439)**՝ *հիմք ընդունելով Հույն Եկեղեցու ժամագիրքը: Նրանց են վերագրվում նաև Գիշերային ժամերգության քարոզներն ու աղոթքները:*

*Ըստ նրանց հաստատած կարգի՝ ամեն օր ասվում էին Դավթի սաղմոսները, որոնք բաժանված էին ութ կանոնների և որոնց կցվում էին տասը մարգարեական օրհնություններն ու աղոթքները՝ իրենց համապատասխան քարոզներով: Առավոտյան ժամերգությանը ասվում էր «Հարց»-ը իր փոխերով՝ կիրակի օրերին ավելացվում էր «Մեծացուսցէ»*



*-ն՝ իսկ տերունական և սրբերի տոներին համապատասխան ընթերցումներ էին կատարվում: Սրանց հետ կարգված էին ութ եղանակային ձայները և երկու ստեղիները՝ որ հետագայում չորս դարձան՝ իրենց հոգելից շարականներով հանդերձ:*

*Այնուհետև Հայ Եկեղեցու հայրերը շարունակեցին Ժամագրքի կազմավորման գործը՝ համալրելով իրենց կողմից նոր աղոթքներով:*

*Այսպես՝ Գյուտ հայրապետին* **(461-478)** *է վերագրվում Արևագալի ժամերգության «Յարևելից մինչև ի մուտս արևու, ընդ ամենայն տեղիս» քարոզը:*

*Հովհաննես Մանդակունի հայրապետին* **(478-490)** *վերագրվում է Գիշերային ժամերգության «Զարթուցեալք» քարոզը և «Զքեն գոհանամք» աղոթքը, նաև «Ճաշու» երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերի «Աղուհացից» -ը և մեծ քարոզներն ու աղոթքները:*

*Եզր կաթողիկոսը* **(630–641)** *սահմանել է «Փառք ի բարձունս» -ին հաջորդող «Եղիցի» սաղմոսը: Նրան է վերագրվում նաև առավոտյան ժամերգության վերջին մասի գատումը և «Արևագալի» անվան ներքո առանձին ժամերգության կազմումը:*

*Սուրբ Գրիգոր Նարեկացու* **(951-1003)** *«Աղօթամատեան» -ից վերցված են մի քանի աղոթքներ՝ Բան ԺԲ՝ «Մաղթանք գօրաւոր», Բան ԽԱ՝ «Աղօթք գօրաւոր», Բան ՂԳ՝ «Մաղթանք ի դիւաց պահպանութեան» և Բան Ջ՝ «Աղերս առ Տիրամայր ս. Աստուածածինն», որոնք կարդացվում են Հանգստյան ժամերգության ընթացքում:*

*Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը* **(1166-1173)**՝ *առանց խախտելու ժամակարգությունը՝ մեծ թվով նոր աղոթքներ, հորդորներ ու երգեր հյուսեց ժամերգությունների համար:*

*Գրիգոր Անավարզեցի հայրապետը* **(1293-1307)** *«Մեծացուսցէ» -ն ամենօրյա դարձրեց և իր կողմից մի շարք «Մեծացուսցէ» -ներ շարադրեց:*

*Հետագայում սուրբ Գրիգոր Տաթևացին* **(1346-1410)** *և ուրիշները արդեն կազմավորված Ժամագրքի մեջ նոր աղոթքներ, գանձեր ու տաղեր ավելացրեցին, որով և Ժամագիրքը, Թովմաս Մեծոփեցու* **(1378-1446)** *վերջնական խմբագրումից հետո, ստացավ իր այսօրվա տեսքը:*

*Իսկ ժամակարգության խրատները խմբագրեց Գրիգոր Տաթևացու ժամանակակից և դասընկեր Գրիգոր Խլաթեցին* **(1349-1425)**, *որը նաև Ծերենց անվամբ է հայտնի:*

# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԿԱՐԳԸ

*Հայտնի է՝ որ մովսիսական հին օրենքի համաձայն՝ օրը յոթ անգամ էին ընդհանրական աղոթք կատարում, ինչպես Դավիթն է ասում՝ «Օրվա մեջ յոթն անգամ Քեզ պիտի օրհնեմ» (Սաղմ. ՃԺԸ 164):*

*Հրեաների ամենօրյա աղոթքների համար սահմանված առաջին ժամը երեկոն էր՝ որովհետև օրվա սկիզբը երեկոն էր համարվում համաձայն Դավիթ մարգարեի խոսքի՝ «Ես Աստծուն ձայն տվի, և Տերը ինձ լսեց: Երեկոյան, առավոտյան և կեսօրին պատմեցի ու խոսեցի, և Նա իմ ձայնը կլսի» (Սաղմ. ԾԴ 1718): Այնուհետև հաջորդում էր Հանգստյան ժամի աղոթքը և ապա՝ Գիշերային ու Առավոտյան ժամերինը: Ինչպես Դավիթն է ասում՝ «Կեսգիշերին ելնում էի գոհություն մատուցելու քեզ» (Սաղմ. ՃԺԸ 62), և՝ «Առավոտյան կանուխ խոսում էի Քեզ հետ» (Սաղմ. ԿԲ 7):*

*Այս չորս ժամերգությունները, ըստ հին օրենքի, գիշերն էին կատարվում, և ևս երեք ժամերգություններ՝ ցերեկը, որոնք են՝ Երրորդ ժամը, Վեցերորդ ժամը և Իններորդ ժամը, որը և նրանց վերջին աղոթժամն էր:*

*Իսկ Նոր Ուխտի քրիստոնեական Եկեղեցում ավելանում են ևս երկու ժամերգություններ. դրանք են՝ «Արևագալը», որն Առավոտյան ժամից հետո է կատարվում, և «Խաղաղականը»՝ Երեկոյան ժամից հետո, որպեսզի ինը ժամերգություններ լինեն՝ ըստ հրեշտակների ինը դասերի: Եվ Եկեղեցու դասերը նույնպես թվով ինն են:*

## Ընդհանրական աղոթքի պատճառները ըստ Մատթեոս Դպիրի

*Հարց. -Ինչո՞ւ ենք ինն անգամ աղոթում և ոչ ավելի կամ պակաս:*

*Պատասխան. -Որովհետև երկնքում հրեշտակների ինը դասերը մշտապես փառաբանում են Ամենասուրբ Երրորդությանը՝ իսկ մենք՝ հողեղեններս՝ ըստ սուրբ հայրերի սահմանած ավանդույթների ու կանոնների՝ ինն անգամ աղոթք մատուցելով՝ հետևում ենք հրեշտակներին՝ Տեր Աստծու երկնային փառաբանիչներին: Ինչպես Դավիթ մարգարեն է հորդորական ձայնով երգելով ասում՝ «Օրհնեցե՛ք Տիրոջը՝ նրա բոլո՛ր հրեշտակներ» (Սաղմ. ՃԲ 20)՝ և՝ «Օրհնեցե՛ք Տիրոջը՝ նրա բոլո՛ր գործերը» (Սաղմ. ՃԲ 22): Այսինքն՝ երկնքի ու երկրի բնակիչներ՝ օրհնեցե՛ք Աստծու Ամենակալ Տերությունը:*

*Ինչո՞ւ: Որովհետև՝ եթե բոլոր արարածները պարտավոր են օրհնել Արարչին՝ ապա առավել ևս մենք՝ երկրածիններս, պարտավոր ենք օրհնություն և գոհություն վերառաքել առ Աստված բազում պատճառներով:*

*Նախ՝ որ մեզ անգոյությունից գոյության բերեց՝ ըստ առաքյալի խոսքի՝ «Ջեղած բաները գոյության է կոչում» (Հռոմ. Դ 17): Նույնն են վկայում Դավիթը՝ «Նա ստեղծեց մեզ՝ և ոչ թե մենք եղանք» (Սաղմ. ՂԹ 3) և Մովսես մարգարեն՝ «Մի՞թե նա այն Հայրը չէ՝ որ քեզ շահեց՝ քեզ արարեց ու հաստատեց քեզ» (Բ Օրենք ԼԲ 6):*

*Երկրորդ՝ որովհետև Աստված Իր պատկերով ստեղծեց մեզ՝ ըստ այնմ՝ թե՝ «Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդ. Ա 27):*

*Երրորդ՝ ամեն ինչ տվեց մարդուն վայելելու համար. տեր և իշխան կարգեց նրան բոլոր արարածների վրա՝ ըստ այնմ՝ թե՝ «Ամեն ինչ դրիր նրա ոտքերի ներքո՝ ոչխար՝ արջառ և ամեն ինչ» (Սաղմ. Ը 8):*

*Չորրորդ՝ դրախտում կարգեց բնական օրենքը՝ որպեսզի դրանով ելնենք վերին արքայություն: Սակայն Արարչի պատվիրանը խախտելով՝ կորցրեցինք Տերունական կերպարանքը՝ որը հետո Քրիստոսով դարձյալ ետ ստացանք՝ առավել՝ քան ունեինք:*

*Նախ՝ որովհետև այնժամ դրախտում պատկերը կորցրեցինք՝ իսկ այժմ՝ շնորհով Աստծու որդի եղանք՝ ըստ այնմ, թե՝ «Իսկ ովքեր նրան ընդունեցին՝ նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ» (Հովհ. Ա 12):*

*Երկրորդ՝ այնտեղ դրախտից արտաքսվեցինք՝ իսկ այստեղ արքայությունը տրվեց մեզ՝ ըստ Քրիստոսի խոսքի՝ «Ինչպես և իմ Հայրը ինձ խոստացավ տալու արքայությունը՝ այնպես էլ ես եմ ձեզ խոստանում» (տե՛ս Ղուկ. ԻԲ 29):*

*Երրորդ՝ այնտեղ մարդը կյանքի և մահվան միջև էր՝ այստեղ նրան*

անմահություն չնորհվեց՝ ինչպես Քրիստոս ասաց՝ «Եթե մեկը իմ խոսքը պահի՝ մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ. Ը 51):

Զորրորդ՝ այնժամ ընկերակից էր հրեշտակներին՝ իսկ այժմ նրանցից ավելի բարձր է՝ ըստ այն խոսքի՝ թե՝ «Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրիր նրան և փառք ու պատվով պսակեցիր» (Սաղմ. Ը 6): Նաև առաքյալն է ասում՝ «[Հրեշտակները] սպասարկող հոգիներ են՝ որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց՝ որ ժառանգելու են փրկությունը» (Եբր. Ա 14):

Այս և ուրիշ պարգևների համար պետք է օրհնել Պարգևատուին՝ որպեսզի ապերախտ չգտնվենք: Այս պատճառով առաքյալը սթափեցնում է մեր միտքը ճանաչելու համար Աստծու երախտիքները՝ ասելով՝ «Ի՞նչ բան ունես՝ որ ստացած չլինես. և եթե ստացել ես՝ ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես» (Ա Կորն. Դ 7): Այսինքն՝ ստանալով պարգևները՝ հանդգնում ես ուրանալ՝ առանց մտաբերելու ու վկայելու: Իսկ երբ աղոթում ենք՝ այդպիսով հայտնում ենք՝ որ չենք մոռացել Աստծու բարիքները:

Սակայն դու տե՛ս և ուշադրություն դարձրու՝ որ արարչագործության սկզբում նախաստեղծ Ադամը բերկրում էր հրեշտակների հետ դրախտում և ցնծալով ու խայտալով օրհնում Աստծուն: Իսկ երբ բանսարկուի պատրանքներով տարված՝ գանց առավ տերունական հրամանը՝ այդժամ չեղվեց հրեշտակների ընկերակցությունից և դրախտի վայելչությունից: Թեպետև հրեշտակների միաբանության մեջ անմիաբան եղավ՝ այդուհանդերձ Աստված նրան խպառ չլքեց՝ այլ կամեցավ դարձյալ հրեղեններին դասակից դարձնել՝ և սա՝ ոչ սակավ՝ այլ զանազան նշաններով՝ կամեցավ իր ծառաներին ցույց տալ: Երբեմն խորհուրդները զանազան օրինակներով նահապետներին պատկերելով՝ երբեմն էլ մարգարեները հայտնապես կանխաճառեցին՝ ինչը հայտնի է նրանց գրքերից:

Իսկ եթե ուզում ես այս մեկնությունները առավել մանրամասն գիտենալ՝ հարցրո՛ւ ու սովորի՛ր՝ կամ ընթերցի՛ր ու իմացի՛ր: Դիմի՛ր նահապետներին և սովորի՛ր Հակոբի սանդուղքի տեսիլքից, թե ինչպես հրեշտակները վայր էին իջնում և մարդիկ վեր ելնում: Այսինքն՝ հրեշտակները և մարդիկ պիտի միմյանց խառնվեն և միաձայն օրհներգեն Աստծուն: Այս հայտնությունը մարգարեություն էր բոլոր հեթանոսների մասին:



## Երկրպագության ժամանակ դեմքով դեպի արևելք շրջվելը ըստ Պողոս Տարոնացու

Ինչպես ավանդել են սուրբ առաքյալները, Քրիստոսին հավատացողները Աստծուն երկրպագելիս դեմքով դեպի արևելք են դառնում: Ըստ Ղուկաս ավետարանչի՝ Փրկչի համբարձման ժամանակ առաքյալները երկրպագեցին Տիրոջը ու վերադարձան Երուսաղեմ: Եվ այդ վայրը՝ Ձիթենյաց լեռը, որտեղից Քրիստոս համբարձվեց, Երուսաղեմի արևելյան կողմում է գտնվում:

Կյուրեղ Երուսաղեմցի հայրապետը գրում է՝ «Նա, Ով Գողգոթայից իջավ դժոխք, արևելյան կողմից՝ Ձիթենյաց լեռան վրայից վերացավ առ Հայր»:

Եղիսե մարգարեն երկրպագություն նշանակեց Հովաս արքային արևելյան կողմում՝ ասելով. «Ա՛ռ քո աղեղն ու նետերը: Աղեղը ձեռքովդ լարի՛ր: Բա՛ց արևելյան կողմի պատուհանդ և արձակի՛ր: Սա Տիրոջ փրկության նետն է» (Դ Թագ. ԺԳ 17): Սա նշանակում է բացել և դեպի արևելք ուղղել մեր մտքի ու մարմնի աչքերը, և լարելով լեզվի աղեղը՝ Աստվածային Խոսքով նետահարել դևերի բազմությանը:

Իսկ բազում օրեր լաց ու կոծը առաջին մարդու անկման համար է, և ծնկի գալով նրան ենք նմանվում: Մինչդեռ կիրակի օրը ծնկի չենք գալիս, այլ՝ որպես Քրիստոսի հետ հարություն առած հոտնկայս ենք աղոթում՝ նորոգված Տիրոջ հարությամբ, որը լինելու է վերջին օրը: Այդօրինակ երկրպագությունը նաև սրբերի երկնային բարձրության ակնկալությունն ունի:

Դեմքով դեպի արևելք՝ սուրբ նշանի առջև խոնարհվելը, Խաչյալ Քրիստոսին երկրպագելու խորհուրդն ունի, իսկ ծնկի գալը՝ Ահավոր Դատավորի առջև լինելու խորհուրդը, ըստ մարգարեի խոսքի՝ «Տիրոջ դիմաց պիտի սփռեմ աղոթքն իմ և Նրա առջև նեղությունս պիտի պատմեմ» (Սաղմ. ՃԱ 24): Նաև՝ «Աստվա՛ծ, կյանքս Քեզ կպատմեմ, արցունքներս առջևդ կդնեմ, ինչպես Դու ինձ խոստացար» (Սաղմ. ԾԵ 9):

# Սուրբ Եկեղեցին ընդհանրական աղոթքի վայր

*«Իմ Տունը աղոթքի Տուն պիտի կոչվի»*
*(Եսայի ԾԶ 7)*

*Ինչպես Փրկիչն է ասում՝ «Հոգի է Աստված, և Նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. Դ 24): Նաև ս. Ամբրոսիոսն է ասում՝ «Աստծուն տիեզերքը չի կարող պարունակել՝ սակայն մտքով ինչ-որ կերպով ճանաչում ենք Նրան՝ որովհետև միտքը դրա համար է ստեղծված»: Եվ այդ պատճառով է մարդն Աստծու տաճար կոչվում՝ ըստ Պողոսի խոսքի՝ «Չգիտե՞ք որ Աստծու տաճար եք դուք, և Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորն. Գ 16):*

*Հետևաբար՝ ուր էլ որ լինես, աղոթի՛ր Աստծուն՝ որովհետև ամենուր ես Աստծու տաճար՝ «Ուզում եմ՝ որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ՝ սուրբ ձեռքերը բարձրացնեն դեպի վեր առանց բարկության և երկմտության» (Ա Տիմ. Բ 8): Այս պատճառով՝ ուր էլ որ լինեք ամենուր պետք է վկայել, գոհություն մատուցել և աղոթել Աստծուն՝ Նրա անսպառ բարության համար:*

*Ամեն տեղ էլ կարող ենք վշտանալ և կարոտել Աստծու օգնությանը: Ինչպես և ասվում է՝ «Աստծու արարածների հետ տհաճություններ են լինում ու գայթակղություններ՝ մարդկանց որդիների համար, նաև անզգամների ոտքերի տակ որոգայթներ են լինում»: Դրա համար, ուր էլ որ լինես, մտի՛ր քո մտքի սենյակը և աղոթի՛ր քո Տեր Աստծուն: Հայտնի է՝ որ աղոթքները լինում են ընդհանրական, երբ հավաքվում են բոլոր հավատացյալները, որպեսզի դյուրությամբ լսելի լինեն, և առանձնական:*

*Առանձնական աղոթքը կարող է ամենուր լինել՝ մի որևէ մեկուսի վայրում՝ ինչպես ասվում է Ավետարանում՝ «Այլ դու երբ աղոթես՝ մտի՛ր քո սենյակը՝ փակի՛ր քո դռները և ծածուկ աղոթի՛ր քո Հորը» (Մատթ. Զ 6), ինչպես և Փրկիչը վարվեց՝ «Եվ Ինքը հեռացավ նրանցից մոտ մի քարընկեց, ծնրադրեց՝ աղոթում էր և ասում» (Ղուկ. ԻԲ 41):*

*Ընդհանրական աղոթքը ամենուր չի արվում՝ այլ դրա համար հատուկ սահմանված վայրերում՝ այսինքն՝ եկեղեցում՝ որովհետև եկեղեցու շինությունը իր բազմաթիվ մասերով խորհրդանշում է աղոթողնե-*



*րի միաբանությունը և միակամությունը:*

*Եվ այս ամենի համար ավետարանիչն ասում է՝ «Իմ տունը պետք է աղոթքի տուն լինի» (Ղուկ. ԺԹ 46): Որովհետև եկեղեցում ասված աղոթքը առավել լսելի է՝ ինչպես գրված է՝ «Այժմ Իմ աչքերը բաց կլինեն ու Իմ ականջները սուր՝ որ լսեմ այս տեղում կատարվող աղոթքը» (Բ Մնաց. Է 15): Այնուհետև ասում է՝ «Ահա ընտրեցի և սրբագործեցի այս տունը՝ որպեսզի Իմ անունը այստեղ լինի հավիտյան և Իմ աչքն ու սիրտը այստեղ լինեն ընդմիշտ» (Բ Մնաց. Է 16): Այսինքն՝ որպեսզի լսի աղոթողների աղաչանքները:*

*Իսկ հետևյալ խոսքը՝ «Երկնքից կրակ իջավ ու լափեց ողջակեզն ու զոհերը: Տիրոջ փառքը լցրեց տաճարը» (Բ Մնաց. Է 1-2)՝ ցույց է տալիս՝ որ եկեղեցում մատուցած աղոթքը Աստված սիրով ընդունում է և պահում ու պահպանում է այս տեղը, որը իրեն հաճելի է:*

*Ղուկաս ավետարանիչը գրում է՝ որ Տերը այնտեղ ոչ միայն սովորեցնում էր՝ այլև այնտեղ գտավ Նրան Իր մայրը: Ավետարանիչը նաև գրում է՝ «Չգիտե՞ք՝ թե ես Հորս տանը պետք է լինեմ» (Ղուկ. Բ 49):*

*Ոսկեբերանը Ղուկասի խոսքերի կապակցությամբ ասում է. «Ինչպես Աստծու Որդին քաղաք մտնելով գնաց Իր Հոր տունը՝ այնպես էլ դուք՝ Քրիստոսին հավատացողնե՛ր և աշակերտնե՛ր, քաղաք մտնելով՝ գնացե՛ք եկեղեցի»: Փրկիչը եկեղեցին պատվում է նաև Իր Մարմնի ու Արյան խորհրդով, ինչպես և գրված է՝ «Տիրոջ փառքը լցրեց տաճարը» (Բ Մնաց. Է 1), «Ամպը ծածկել էր վկայության խորանը, և խորանը լցված էր Տիրոջ փառքով» (Ելք Խ 30): Տիրոջ փառքը մարմնացյալ Բանն է ամպի խորհրդի տակ ծածկված: Սա է սուրբ և նվիրական տունը՝ ուր Տերն է զոհվում Կենդանի Աստծուն: Այստեղ և ո՛չ ուրիշ վայրում, մեկ հարկի տակ պետք է սահմանված ժամերին հավաքվենք աղոթելու:*

*Անհրաժեշտ է իմանալ՝ որ Սուրբ Եկեղեցին է ընդհանրական աղոթքի վայրը ըստ այն խոսքի, թե՝ «Իմ Տունը աղոթքի Տուն պիտի կոչվի» (տե՛ս Եսայի ԾԶ 7): Եվ մենք՝ քրիստոնյաներս՝ այս մտքով ենք եկեղեցում աղոթում՝ քանզի եկեղեցին երկնքի օրինակն է՝ իսկ ջահերն ու կանթեղները հրեշտակների դասերն են խորհրդանշում:*

*Եկեղեցում Քրիստոս աներևութաբար բազմած է Սուրբ Սեղանին ու իր ծառաների մաքուր սրտերում՝ ըստ այնմ՝ թե՝ «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով՝ Ես այնտեղ եմ՝ նրանց մեջ»*

)Մատթ. ԺԸ 20(: Դրա համար էլ մենք հավաքվում ենք եկեղեցում և ճրագներ վառում՝ որպես թե հողեղեններս հրեղեններին երգակցելով՝ օրհնում ենք մեզ Օրհնողին՝ ինչպես շարականում է երգվում՝ «Երկրավորներս՝ երկնայինների հետ՝ հողեղեններս՝ հրեղենների հետ միաձայն երգում ենք՝ ասելով՝ Ալելուիա»:

Այս բոլոր մեկնությունները վերաբերում են մարդկանց ու հրեշտակների միաբանությանը՝ և պետք է՝ որ հրեշտակներն ու մարդիկ միշտ միասնաբար գոհաբանեն բոլորիս Արարչին:

## Եկեղեցին ըստ Եսայի վարդապետի

Եկեղեցին դուստրն է վերին Սիոնի ու քաղաքն Անմահ Արքայի: Այն երկնայինի օրինակով կառուցվեց երկրի վրա և դրված է որպես երկնայինների ճշմարիտ նմանությունը երկրի բոլոր կողմերի համար:

Խորանը վերին երկնքի օրինակն է, ուր Աստվածությունն է հանգչում, իսկ տաճարը՝ իր մաքրությամբ, ձևով ու հարմարությամբ՝ հրեշտակների կայանի:

Գավիթը երկրի մերձակա բնության տեսքն ունի: Հնում էլ այդպես էր: Եռահարկ խորան կառուցվեց ու երիցս բարեկարգվեց և այստեղ քահանայապետի, քահանայի, հրեայի, հեթանոսի, եկվորի, մաքուրների և չսրբվածների համար ըստ արժանավորության աստիճանի՝ տեղեր սահմանվեցին: Նույնն է և Նոր Եկեղեցին, որը սկիզբ առավ հնի մեջ, նորոգվեց նորում ու կամբողջանա հանդերձյալում:

Եկեղեցին երեք տարբեր մասերով տարածել է իր գոգը: Առաջին մասը աստվածընկալ խորանն է, ուր սուրբ սեղանն է ու պատկերը Հիսուսի և որտեղից Տիրոջ Մարմինն է բաշխվում: Քահանայապետական կարգերը և ամեն ինչ իրենց տեղն ունեն, ուր ամփոփվում ու գործում է աստվածանմանությունը: Տաճարը, վերին երկնքի օրինակով, լի է սուրբ բնակիչներով, ովքեր իրենց մաքրությամբ երկնային կայանն են իրենց համար օրինակ վերցրել:

Գավիթը երկրի խորհուրդն ունի, որպեսզի երկնքից ընկած սատանան, դրախտից արտաքսված մարդը և ստեղծված կենդանիները, ցավերով ու հոգեկան և մարմնական հիվանդություններով բեռնավորված,



այդտեղ հանգրվանեն:

Եկեղեցու սրահում մեղքերով աղտոտվածները ու ցանկություններով գերվածները, ինչպես նաև դիվական ախտերով այսահարվածներն ու եկեղեցու տարագրյալները դեգերում են և ապաշխարությամբ ու Սուրբ Գրքի խրատներով կերակրում իրենց անձերը, բժշկում հոգու ու մարմնի ախտերը և իրենց ժամին փրկությունը գտնում:

Եվ այս է եկեղեցու կարգը, ըստ մարգարեի խոսքի՝ «Բոլոր սրբերը հարմար ժամին աղոթքի կկանգնեն Քո առջև» (Սաղմ. ԼԱ 6): Նաև ըստ բժշկության օրենքի՝ պետք է իմանալ դեղ ընդունելու և վերքերի վրա սպեղանի դնելու ժամանակը: Նմանապես և հոգու բժիշկները՝ առաքյալները, մարգարեներն ու վարդապետները, մեր ախտակիր բնությունը ապաքինելու համար տեղ ու ժամանակ սահմանեցին և կյանքի դեղը տվեցին:

## Աստծու պարգևը հայ ազգին ըստ Մատթեոս Դպիրի

Իսկ այն՝ որ մեր՝ հայ ազգին շնորհած պարգևներն ավելին են՝ քան երևում են՝ իմանում ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքից՝ երբ տեսավ Միածնի՝ Աստծու Բանի՝ Վաղարշապատ քաղաք իջնելը և Նրա հետ երկիր իջած հրեշտակների զորքերի բազմությունները՝ որոնք նման էին շողի մեջ երևացող մանրամաղ փոշու:

Այս տեսիլքը գգաստացնում է մեզ՝ քանզի՝ մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ մեր հաբեթական ազգը կուռքերին ու դևերին էր դաշնակից ու խորհրդակից և նրանց էր նմանվում: Ինչպես Դավիթն է ասում՝ «Նրանց նման կլինեն դրանք ստեղծողները և բոլոր նրանք՝ որ իրենց հույսը դնում են դրանց վրա» (Սաղմ. ճԺԳ ը8): Եվ Սիրաքն է ասում՝ «Ով դիպչի ձյութին՝ նրանով կպղծվի» (Սիրաք ԺԳ 1):

Այսպես՝ մեր ազգը կռապաշտությամբ դևերին էր նմանվել ու մեղքերով ապականվել: Մարդասերն այս տեսիլքով ցույց տվեց՝ որ աստվածպաշտության ցերեկը մոտեցավ և կռապաշտության գիշերը մերժվեց. մինչ այժմ խավար էիք՝ այժմ լույս եք Տիրոջով՝ որ դևերին էիք հավասար՝ այժմ հրեշտակներին եղաք դասակից: Հրեշտակները բնակակից են մարդկանց՝ իսկ մարդիկ՝ հաղորդակից հրեշտակներին: Երկրավորներդ նմանվեցիք երկնավորներին՝ ստորադույններդ՝ բարձրացաք:

# ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀՍԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիշերային ժամի ընդհանրական աղոթքի կարգը՝ որ միշտ կատարվում է Հայաստանյայց եկեղեցիներում՝ ի դեմս Հոր Աստծու

## Գիշերային ժամ

*Հարկ է լիովին իմանալ գիշերվա խորհուրդը: Նախ՝ գիշեր անգիտություն է նշանակում, երկրորդ՝ գիշերը եգիպտական ախտակրության խավարն է: Քանի դեռ անգգա էինք մեղքերի մեջ, գիշերվա մեջ էինք և մեր Կենդանարարի հարությամբ կենդանացանք:*

*Գիշերային ժամերգությունը օրվա առաջին ժամերգությունն է: Դավիթ մարգարեն ասում է. «Կեսգիշերին ելնում էի գոհություն մատուցելու Քեզ Քո արդար դատաստանների համար» (Սաղմ. ՃԺԸ 62): Իսկ Եսային ասում է. «Գիշերը իմ հոգին դեպի Քեզ է շտապում, Աստվա՛ծ» (Եսայի ԻԶ 9): Նաև Պողոսն ու Շիղան էին գիշերն աղոթում:*

*Երկրորդ՝ Փրկչի հարությունը ևս գիշերը եղավ:*

*Երրորդ՝ որովհետև գիշերն է լինելու մեռելների համընդհանուր հարությունը՝ ըստ այն խոսքի՝ թե՝ «Կեսգիշերին ձայն լսվեց՝ ահա՛ փեսան գալիս է՝ նրան դիմավորելո՛ւ ելեք» (Մատթ. ԻԵ 6): Այդ է պատճառը՝ որ մենք նույն այդ ժամին ենք արթնանում և աղաչում Աստծուն՝ որ հարության օրը չդատապարտվենք և ընտրյալների թվում դասվենք:*

*Չորրորդ՝ որովհետև հնում աղոթքներն ու տոնակատարությունները երեկոյան էին սկսվում՝ իսկ նոր ժամանակներում գիշերն ենք սկսում աղոթել ու տոները կատարել: Այսպես՝ գիտենք՝ որ նախաստեղծ Ադամը երբ ստեղծվեց, լույս էր՝ սակայն մեղանչելով՝ լույսից խավարն ընկավ: Իսկ Քրիստոս՝ նոր Ադամը՝ մարդկային ցեղը խավարից լույսի բերեց: Այդ իսկ պատճառով գիշերը ծնվեց՝ մեր մեղքերի խավարը մեզ ճանաչել տալով: Դրա համար էլ մենք գիշերն ենք արթնանում աղոթելու՝ որ փարատվի մեր մեղքերի ու անգիտության խավարը՝ և մեր միտքը լուսավորվի՝ ի գորու դարձնի մեզ ընթանալ լուսաշավիղ ճանապարհով՝ որպեսզի անմոլոր ընթացքով ժամանենք ապահով ու խաղաղ նավահանգիստը՝ այսինքն՝ հավիտենական կյանքը:*

*Այս ամենից հետևում է, որ աղոթելու համար պատշաճ է գիշերը վեր կենալ:*

## «Տէր շրթանց»-ի մասին

*Աստվածային խաղաղության հասնելու մասին է խորհում սուրբ Եկեղեցու ժողովուրդը չարի պատճառած վրդովմունքի պահին, և դեմ առ դեմ Մեծ Դատավորի առջև կանգնելով՝ համարձակություն է խնդրում՝ բացելու համար իր բերանը, ասելով. «Տէ՛ր եթէ զշրթունս իմ բանաս՝ բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» (Տե՛ր՝ եթե շրթներս բացես՝ բերանն իմ կերգի օրհնությունը Քո) (Սաղմ. Ծ 17), և հինգ սաղմոսներով ամրապնդում է իր հինգ զգայարանները:*

*Հարց. -Ինչո՞ւ ենք Տիրոջը խնդրում՝ որպեսզի բացի մեր բերանը:*

*Պատասխան. -Նախ՝ երբ նախաստեղծները բացեցին իրենց բերանները և կերան պտղից՝ մերկացան շնորհներից՝ որից հետո նրանց բերանները Աստծուն օրհնաբանելու համար փակվեցին: Դրա համար էլ մենք՝ մեղուցյալ որդիներս՝ խոստովանում ենք մեր մեղքերը և արձակում խնդրում մեր հոգու և մարմնի բերանների համար. «Ինչպես մենք փակեցինք մեր բերանները՝ Դու այժմ բա՛ց՝ որպեսզի օրհնենք քեզ՝ Տե՛ր»:*

*Դարձյալ՝ ինչպես մարգարեն ասում է՝ «Բացեցի իմ բերանը և ստացա հոգի» (հմմտ. Սաղմ. ՃԺԸ 131)՝ այնպես էլ մենք ենք բացում մեր մտքի բերանը, որպեսզի շնորհների հոգին առնենք և դրանով աղոթական խոսքեր ասենք: Եվ չնայած շուրթերը մեր մարմնից են՝ սակայն հոգու, որ Նրա պատկերն ունի, բերանը Տերն է բացում :*

*Երկու հանգույցներով է կապված մեր բերանը՝ առաջինը հրամանն է՝ երկրորդը՝ սուրբ երկյուղը:*

*Տերը հրաման տվեց Ադամին, որպեսզի չուտի արգելված պտղից՝ իսկ նա կերավ՝ առանց հրամանին ենթարկվելու: Այդ պատճառով էլ մենք հրամանով ենք բացում մեր բերանը օրհնության պտղի համար:*

*Երկյուղի մասին «Եկեսցէ» -ում է ասվում՝ «Բևեռե՛ա ընդ երկիւղ Քո զմարմին իմ» Մարմինն իմ գամիր Քո երկյուղին՝ քանզի սաստիկ*

*վախեցա Քո դատաստանից» (Սաղմ. ՃԺԸ 120)։*

*Այս պատճառով ստանալով համարձակություն Ողորմած Դատավորից՝ քահանան երկու անգամ ասում է այս խոսքերը՝ հոգու և մարմնի համար։*

## «Տէ՛ր՝ գի բազում»

*Աղոթքների առաջին կարգը՝ որ «Տէ՛ր՝ գի բազում» -ն է, Հայր Աստծուն ենք երգում այն պատճառով՝ որ սատանան՝ որն ի սկզբանե մեզ թշնամի է՝ այս գիշերաժամին տեսակ-տեսակ մեղքերով նեղեց մեզ՝ և այժմ արթնանալով՝ գանգատվում ենք Տիրոջը և մեր մեղքերից ազատում ու թողություն հայցում։*

*Եվ իմացի՛ր՝ որ «Տէ՛ր՝ գի բազում» -ը ծայրից ծայր վաթսունվեց տուն է և բաժանված է չորս փոխերի։ Նախ՝ որովհետև իննից չորս ժամերգությունները գիշերային են։*

*Երկրորդ՝ չորս տարրերից կազմված մեր նյութեղեն բնության քավության համար՝ որի պատճառով ամեն օր մեղանչում ենք։ Այս չորս փոխերը նաև մեր քառատարր բնության կողմից մատուցված փառաբանությունն է Աստծուն։*

*Երրորդ՝ չորս տարրերից գոյացած մեր մարմինը մինչև գիշերվա չորրորդ պահը անվնաս պահեց՝ որի համար շնորհակալություն ենք հայտնում Աստծուն։*

*Չորրորդ՝ մարդու փրկության համար իր կյանքի տարիքային չորս շրջաններում՝ որոնք համապատասխանում են գիշերվա չորս պահերին՝ երեկոյին՝ գիշերին՝ աքլորականչին և առավոտին, որոնց ընթացքում բազմիցս նեղվեցինք թշնամուց, որի համար գանգատվում ենք ու Տիրոջից փրկություն խնդրում։ Ըստ որում երեկոն խոր ծերությունն է՝ գիշերը՝ երիտասարդությունը՝ հավախոսը՝ պատանեկությունը՝ իսկ առավոտը՝ մանկությունը։*

*Հինգերորդ՝ Քրիստոսի չորս տնօրինությունների համար, այսինքն՝ որ խաչվեց՝ թաղվեց՝ հոգով դժոխք իջավ և մեռելներից հարություն առնելով՝ ազատեց հոգիներին։*

*Իսկ այն, որ վաթսունվեց տներից է բաղկացած, հետևյալ պատճառն*



*ունի։ Երկուական տները մեկ շնչով ասելով՝ վաթսունվեց տունը վեր է ածվում երեսուներեքի՝ որը Փրկչի տնօրինության տարիների թիվն է, որ երեսուներեք տարի շրջեց աշխարհում և փրկության դուռ բացեց մարդկության առջև։*

## Մեկնություն ըստ Տարոնացու

*Նա, Ով մեզ համար մարմնով վիշտ կրեց, մեզ հետ պաղատում է՝ ասելով. «Տէր՝ զի՞ բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան ի վերայ իմ» (Տե՛ր, ինչո՞ւ բազմացան ինձ հալածողները, և շատերը ելան իմ դեմ) (Սաղմ. Գ 2)։ Այս խոսքերով նախաստեղծների անունից Հորն ենք կանչում։ Սա նաև կանխասացություն է եկեղեցու թշնամիների մասին, ովքեր ծածուկ և հայտնապես պատերազմում են եկեղեցու դեմ։ Սակայն Տիրոջ զորությամբ տկար և անզոր են լինում համաձայն այն խոսքի, թե՝ «Այլ դու՝ Տէ՛ր՝ օգնական իմ ես՝ փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ» (Բայց Դու, Տե՛ր, իմ օգնականն ես, իմ փառքը և գլուխս բարձրացնողը) (Սաղմ. Գ 4)։*

*Եվ որովհետև Եկեղեցու գլուխը Քրիստոսն է, որ մեռավ մեզ համար, ասում է. «Ես ննջեցի եւ ի քուն եղէ՝ զարթեայ եւ Տէր ընդունելի իմ է» (Ես ննջեցի և քուն մտա. զարթնեցի և Տերն իմ ապավենն է) (Սաղմ. Գ 6)։ Ում և պաղատում է Եկեղեցին, ասելով՝ «Արի՝ Տէր՝ եւ փրկե՛ա զիս՝ Աստուա՛ծ իմ. զի Դու հարեր զամենեսեան ոյք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց՝ եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես» (Արի՛, Տե՛ր, փրկի՛ր ինձ, Աստվա՛ծ իմ, քանզի կործանեցիր բոլորին, ովքեր իզուր թշնամացել էին ինձ հետ. Դու մեղավորների ատամները կփշրես) (Սաղմ. Գ 8)։ Այսինքն՝ դևերի բանսարկությունը և հերձվածողների հայհոյությունը։ Ապա Տիրոջից փրկություն և օրհնություն է շնորհվում։*

*Զէ սաղմոսը Հոր առջև Քրիստոսին ներկայացնում է որպես Եկեղեցու Գլուխ, պատմում է Նրա՝ մեզ համար կրած չարչարանքների, նաև այն աղետալի վտանգների մասին, որին մարդկությունը ենթարկվեց Բելիարի ապստամբությամբ։*

*«Տէր Աստուած փրկութեան իմոյ՝ ի տուէ կարդացի եւ գիշերի առա-*

ջի Քո» (Իմ փրկությա՛ն Տեր Աստված, գիշեր-ցերեկ քե՛զ կանչեցի) (Սաղմ. ՁԷ 1):

«Զի լցաւ չարչարանօք անձն իմ՝ եւ կեանք իմ ի դժոխս մերձեցան», (Քանզի հոգիս չարչարանքով լցվեց, և կյանքս դժոխքին մերձեցավ) (Սաղմ. ՁԷ 4): Այսինքն՝ պատերազմելով իմ դեմ և գուբը գցելով՝ ջանում են ինձ խեղդամահ անել, ինչպես հանցանքների վերքերով վիրավորվածներին, համաձայն այն խոսքի, թե՝ «Եդին զիս ի գբի ներքնումն՝ ի խաւարի եւ ի ստուերս մահու» (Ինձ խորախոր փոսի մեջ դրին, խավարի և մահվան ստվերների մեջ) (Սաղմ. ՁԷ 7), այսինքն մեղքի աղջամուղջի մեջ:

«Հեռի արարեր յինէն զծանօթս իմ» (Իմ ծանոթներին ինձանից հեռացրիր) (Սաղմ. ՁԷ 9), այսինքն՝ հրեշտակների օգնությունը: Խոսքերի որոշ մասը պատշաճում է Տիրոջը, որոշ մասն էլ՝ մարդկային բնությանը:

Իսկ ՃԳ սաղմոսում բազմաթիվ մխիթարություններով գոհություն է արտահայտվում կրած բազում վշտերի և մեծագույն, լուռ հեծեծանքների համար, որի մասին արդեն ասվել է:

«Օրհնե՛ա՝ անձն իմ՝ զՏէ՛ր» (Օրհնի՛ր Տիրոջը, ով իմ անձ) (Սաղմ. ՃԳ 1): Դարձյալ՝ օրհնի՛ր Տիրոջը և մի՛ մոռացիր Նրա բոլոր տվածները, նաև, որ Նա քավում է քո մեղքերը: Այնուհետև հիշելով անմարմինների օրհնությունը՝ հարակցվում է այն մեր օրհնությանը առընթեր, նույնը և մեզ ասելով, ապա՝ աղերս է ուղղվում՝ «Տէ՛ր՝ լո՛ւր աղօթից իմոց», (Տե՛ր, լսի՛ր աղոթքն իմ) (Սաղմ. ՃԽԲ 1): Ինչպես սկզբում ասվեց՝ «Տե՛ր՝ եթե շրթներս բացես», նույնպես և այժմ, նախ՝ Տիրոջ անունն է հայցում՝ ասելով. «Տե՛ր, լսի՛ր աղոթքն իմ և ծառայիդ հետ դատաստան մի՛ տես, քանզի ոչ մի կենդանի մարդ չի արդարանա Քո առջև» (Սաղմ. Ճ Բ 1-2):

Որից հետո պատմվում է թշնամիներից կրած բոլոր չարչարանքների մասին ասելով. «Հալածեաց թշնամին զանձն իմ՝ խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից» (Թշնամին հալածեց ինձ, կյանքս հողին հավասարեցրեց և ինձ նստեցրեց խավարի մեջ՝ հավիտյան մեռածի պես) (Սաղմ. ՃԽԲ 3):

-Վսեմ, անբիծ և լուսառատ երկիր էր իմ հանգրվանը, իսկ նախանձամիտ թշնամին այդ վայրից այս ներքին խավար երկիրը ինձ վտարեց



և այսպես ըմբոստանալով ու սին հույսերով հրճվում է վրաս՝ իբր թե անկենդան մեռելությամբ պիտի հարատևեմ այստեղ: Իսկ իմ անձը այս ամենից ձանձրացած՝ հիշեց առաջին օրերը, այսինքն՝ մկրտությամբ հոգուց ծնվելը, մեղքերից ազատվելն ու սրբվելը: Ինչպես ցամաքած հողը ծարավ է ջրի, այնպես իմ անձն է մեղքերից փրկություն և սուրբ ու ազատ կյանք փափագում (հմմտ. Սաղմ. ՃԽԲ 6): Տիրոջ ողորմությամբ խնդրում է լսել մեռելների հարության լուրը Մեծ Առավոտին՝ փրկվելու համար դևերի պատերազմից և սովորել կատարել Տիրոջ կամքը:

Նաև Սուրբ Հոգուն է աղաչում, որ առաջնորդի իրեն արդարների երկիրը: Խնդրում է նաև կործանել դևերին, որովհետև նրանք են մեր անձերի ճնշողներն ու հալածողները: Ապա ասում է, որ ինքը չի հնազանդվի դևերին ու Տիրոջ ստեղծած ծառան է՝ Նրա սուրբ արյամբ գնված:

## «Յիշեսցուք ի գիշերի» -ի մեկնությունը ըստ Գրիգոր Տաթևացու

Սուրբ Ներսես Շնորհալու Գիշերային ժամերգության համար հյուսած երգը չորս մասերից է կազմված:

Առաջին մասն այսպես է սկսվում. «Յիշեսցուք ի գիշերի զանուն Քո Տէր»: Հանդերձյալ աշխարհի համեմատությամբ այս կյանքը գիշեր է համարվում: Սա, շաբաթվա վեց օրերի պես, վեց տներից է կազմված՝ նաև այս կյանքի տևողությունը վեց դար է՝ սկսած Ադամից մինչև վախճանը:

Արեգակը ևս վեց կենդանակերպերով է խոնարհվում և վեցով բարձրանում: Նաև մարդն իր բոլոր գործողություններում՝ և՛ չար, և՛ բարի, ունի հնարավորություն շարժվելու վեց ուղղություններով [վերև, ներքև, աջ, ձախ, ետ և առաջ]:

Երկրորդ մասը՝ «Զարթիքը», կազմված է տասը տներից և այն տասը կույսերի անունից է ասվում՝ ովքեր գերեզմանում ննջեցին մարմնով՝ բայց հոգու կայանում հանգչեցին հոգով:

Երրորդ մասի երեք տները՝ «Զարթի՛ր, ընդէր ննջես»-ը՝ կրում է ինչպես Քրիստոսի՝ այնպես էլ ողջ մարդկության հարության խոր-

հուրդը: Քանի որ Հարությունը Երրորդության զորությամբ է լինում՝ մենք էլ, երեք տներով, հավիտյանս փառք ենք տալիս Սուրբ Երրորդությանը:

Չորրորդ մասը՝ «Զարթուցյալը» հինգ տներից է կազմված՝ որպեսզի հինգ զգայարաններով քնից արթնանաք: Իսկ հարության օրը, Աստծուն փառաբանելու համար, պիտի բոլոր զգայարաններով հառնենք:

Եվ ընդհանուրը կազմում է քսանչորս տուն՝ օրվա քսանչորս ժամերի պահպանության համար: Նաև հանդերձյալ կյանքի քսանչորս երեցների խորհուրդը ունի՝ ինչպես նաև՝ տասներկու առաքյալների և տասներկու մարգարեների խորհուրդը:

## «Զարթուցեալք» քարոզը

Ապա սարկավագը առաջ գալով, քարոզում է՝ զգուշացնելով բոլոր հավաքվածներին, ովքեր երկնային հրեշտակների նմանությամբ փառավորիչ են կարգված. լինել երկյուղած, հավատով լի, աներկմիտ սրտով Տիրոջից քավություն խնդրել, գոհանալ ստացած երախտիքների համար և հայցել, որպեսզի առաջիկայում, ըստ Տիրոջ կամքի կրոնավորել և արժանանալ խոստացած հավիտենական բարիքներին ու աղոթքով Աստծուց հոգու և մարմնի համար բազմապիսի շնորհներ խնդրել:

## «Տէ՛ր ողորմեա» ասելու կարգը

Քարոզից հետո՝ եթե ապաշխարության օր է՝ հարյուր «Տէ՛ր ողորմեա» է ասվում՝ Տերունական առակի հարյուր ոչխարի խորհրդով (Ղուկ. ԺԵ 3-7): Եվ ինչպես որ այն հովիվը գտավ այդ հարյուրից մեկ մոլորված ոչխարին և իր բարեկամների ու դրացիների հետ ուրախացավ՝ այնպես էլ մենք հարյուր «Տէ՛ր ողորմեա» ենք ասում՝ որպեսզի մեղքով մոլորվածներիս Տերը գտնի և դարձյալ դասի իննսունիննի հետ՝ որոնք մոլորված չեն:

Իսկ Մարտիրոսաց տոնին հիսուն «Տէ՛ր ողորմեա» է ասվում՝ որովհետև հիսունը հոբելյանական թիվ է, և ազատությունն է խորհրդան-



շում: Մարտիրոսները, իրենց երկրային կյանքը նահատակությամբ ավարտելուց հետո՝ ազատվեցին ալեկոծ աշխարհից՝ մարմնական կրքերից, չար բռնակալներից ու սատանայական փորձություններից, և՝ դժնդակ նեղությունների հարվածներից վախճանվելով՝ բարձրացան երկնակամարը՝ խառնվեցին հրեշտակների գնդերին ու հասան Քրիստոսին և արժանացան հավիտենական հանգստին: Դրա համար էլ մենք հիսուն «Տէ՛ր ողորմեա» ենք ասում՝ որպեսզի Աստված մեզ նրանց պսակին արժանացնի:

Իսկ Տերունական տոնին, ի դեմս Սուրբ Երրորդության, մեր հոգու, մարմնի և մտքի մաքրության համար ասում ենք երեք «Տէ՛ր ողորմեա»՝ քանի որ Տերունի օրերին միջնորդի կարոտություն չենք ունենում՝ այլ անմիջապես Աստծուն ենք աղերսում:

## «Զքէն Գոհանամք» աղոթքը

Այնուհետև հաջորդում է «զՔէն գոհանամք» քահանայական աղոթքը գոհության հետ միասին, որը նշանակում է, թե՝ արթնանալով մարմնավոր քնից՝ այսինքն՝ մեղքերի ծանրությունից՝ գոհանում ենք Քեզանից, Ո՛վ Աստված՝ որ մեզ այս ժամին ես հասցրել՝ և այժմ մենք՝ ամենազգաստ արթնությամբ, Քո՝ Հզոր Տիրոջդ առջև ենք կանգնած:

Ապա Տիրոջից հայցում ենք ողորմություն Արարչին երկրպագելու ժողովվածների համար, որպեսզի Տերը նրանց քաղցրությամբ նայի և խաղաղության հրեշտակին առաքի՝ որպես օգնական և պահապան նրանց անձերին:

Աղոթքից հետո ասվում է՝ «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Ալէլուիա. ալէլուիա» արտահայտությունը հետևյալ նշանակությամբ:

Նախ՝ քանի որ օրհնությամբ ենք սկսել, պետք է օրհնությամբ էլ ավարտենք: Նաև մեր բոլոր աղոթքները Քրիստոսին ենք նվիրաբերում՝ որպեսզի Նա էլ Հորն ընծայի: Ապա հաջորդում են յոթ գուբղաներից կազմված սաղմոսների կանոնները, որը նշանակում է այս կյանքը հանդերձյալի հետ միասին:

## Սյունաց եպիսկոպոս տեր Ստեփանոսի խոսքը սաղմոսների կանոնի մասին

Հարց. -Ինչո՞ւ է յոթ գուբղաներով կանոնակարգված Դավթի սաղմոսները, որով ամեն օր կատարում ենք մեր աղոթքները, կամ ի՞նչ պատճառով են այլ մարգարեների երգերը որպես օրհնություն կցված սաղմոսներին, որին հաջորդում է քարոզը և քահանայական աղոթքը:

Պատասխան. -Հայտնի է, որ ամեն ինչ Աստծու փառքի համար է կերտված, առավել ևս նախաստեղծ ամենագերապայծառ լույսը, որով սահմանվեց ցերեկն ու գիշերը, և որով այժմ յոթնօրյա շաբաթներով հանդերձ, ընթանում է ժամանակը:

Թեպետ շատ ութնյակներ կան մեր շրջապատում, սակայն ավելի ճիշտ է սաղմոսները յոթ գուբղաներով կանոնավորել, քանի որ մեր երանելի հայրերը ոչ այլ, քան Սուրբ Հոգու տված իմաստությամբ են հորինել՝ յուրաքանչյուր յոթ գուբղային մի կանոն՝ այսինքն՝ հաստատություն անվանելով, որով յոթնօրյա շաբաթի համեմատությամբ յուրաքանչյուր օրվան մեկ գուբղա է համապատասխանում և որով առաջնորդվելով՝ ջանում ենք հասնել վերին փառքին: Վեցը՝ ըստ վեցօրյա չարչարանքների, իսկ յոթերորդը, որպես շաբաթվա գլուխ և հանգստյան օր, որտեղ ճգնակյաց սրբերը պսակվում են ի Քրիստոս:

Դեռևս չի եկել ամբողջացնող ութերորդ դարը, որին օրհնություններ ենք ուղղում, որոնք յոթհազարյա դարաշրջանին հաջորդող հանգստյան օրերն են: Եվ յոթ գուբղաներից հետո կատարվում է ութերորդ օրհնության կարգը: Այս իմաստը ունի նաև կիրակի օրվա խորհուրդը, որն ութերորդն է և աշխարհի փրկության սկիզբը:

Այսպիսի եզրակացության ենք հանգում մեր աղոթքներից և Քրիստոսի բոլոր՝ ծննդյան, մահվան և հարության տնօրինություններից: Այսպիսի եզրակացության ենք հանգում նաև նայելով առաջին տվչությանը, երբ Աստված հրամայեց Աբրահամին ութօրյա թլփատություն կարգել իր տոհմի բոլոր արու զավակների համար, որպեսզի մարմնական յոթնօրյա մտածմունքները թողնելուց հետո ութերորդ օրը, հարություն առած, ճախրենք դեպի Քրիստոս: Սրա նման է նաև քահանայի հուղարկավորության ութօրյա կարգը:

Կան նաև այլ յոթնյակներ, որ քրիստոնեության խորհրդով ութնյա-



կի են վերածվում: Ինչպես բաղարջակերաց օրերը կամ տաղավար տոները: Ըստ հրեական խորհրդի, թողությունը ծառաների համար յոթնյակով էր լինում (տե՛ս Բ Օրենք ԺԵ 1): Ըստ որում և թագավորազնի որդին յոթերորդ ժամին ապաքինվեց ախտից (տե՛ս Հովհ. Դ 52): Եվ ութերորդին է լինելու հարուցյալների նորոգումը:

Այսպիսի խորհուրդներով սուրբ Եկեղեցին, ըստ շաբաթվա օրերի, ժամանակի ավարտին վեր է բարձրանալու և ի Քրիստոս ուղղափառ հավատով պատվիրում է ամենքին զգուշանալ իրենց կենցաղավարության մեջ և Քրիստոսի չարչարանքները իրենց մարմնի վրա կրել: Լինել մշտարթուն և զվարթ Նրա առջև և բանական պատարագներ մատուցել ու արժանանալ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հանդերձյալ փառքին, որին վայել է փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

## Սաղմոսների բացատրությունը ըստ Պողոս Տարոնացու

Սաղմոսների կանոնով յոթ գուբղա ասելը, և ավարտից հետո Աստծուն օրհնելը, նշանակում է վեցօրյա գործերից հետո յոթերորդ օրը Նրա հետ հանգստանալ:

Հեսուն վեց օր լուռ շրջեց Երիքովի պարիսպների շուրջը, իսկ յոթերորդ օրը բարձրաձայն աղաղակեց, որից և կործանվեց չարի քաղաքը: Այստեղից էլ վեց գուբղան ցածրաձայն է ասվում, իսկ յոթերորդը հնչեղ ձայնով: Ուստի և հաղթողին ասում ենք «Ալէլուիա»:

Իսկ ութերորդն օրհնությունն է, որը հանդերձյալ աշխարհի ակնարկությունն է, որովհետև այդ օրը արդարների համար ուրախություն, իսկ ամբարիշտների համար կործանում է լինելու, ինչպես որ ութերորդ երգը ուրախություն է Իսրայելի համար և սուգ՝ Եգիպտոսի:

Երկրորդ՝ խնամակալություն է Իսրայելի և կշտամբություն՝ Եգիպտոսի համար:

Երրորդ՝ կրակի սպառնալիք և սատակում ամբարիշտների համար և արդարներին ուղղված՝ ավետյաց հրավեր:

Չորրորդ՝ ոմանց կողմից պանծալի գոհություն է հրաշքների և փոփոխությունների համար, իսկ ոմանց համար՝ ամոթ ու պատկառանք:

Հինգերորդ՝ ցույց է տալիս ամբարիշտների վերցվելը և հակառակորդների հրով այրվելը, իսկ արդարների համար՝ բժշկության ցող Տիրոջից և մուտք փրկության շտեմարան:

Վեցերորդ՝ չարագործներին նախատեսված է չարաչար պատիժ, իսկ ապաշխարողներին՝ մեղքերի թողություն, ըստ հետևյալ խոսքի՝ «Ինձնից հետ վանեցիր իմ բոլոր մեղքերը» (Եսայի ԼԸ 17):

Յոթերորդ՝ հրեշտակների օրհնությունը և փրկությունը մարդկանց: Եվ դարձյալ՝ ովքեր հետևում են ունայնություններին ու խաբկանքներին, հատուցման օրը կզրկվեն ողորմությունից և ամբարիշտների հետ միասին կընկղմվեն դժոխքի մեջ՝ մեղքերի անսպառ ջրերից հեղեղվելով:

Ութերորդ՝ երկու կողմերին էլ՝ և՛ փրկվածներին, և՛ կորուսյալներին հայտնում է, որ «Տիրոջ Հոգին լցնում է տիեզերքը» (Իմաստ. Ա 7), և «Երբ երևացիր Դու երկնքից՝ հայտնվեց Քո բարկությունը» (Սաղմ. ՀԵ 9): «Երևացիր Քո ժողովրդի փրկության համար» և «Նետաձիգ եղար ամբարիշտների վրա»: Ահա օրհնություն արդարներին և անեծք՝ ամբարիշտներին:

Կիրակի և մարտիրոսների հիշատակության օրերին շարականների երգեցողությամբ խնկարկություն է կատարվում, որովհետև համընդհանուր հարության ժամանակ նրանք, ովքեր անուշահոտ գործերով ճգնեցին, բարեբանակից կլինեն հոգեղեն հրեշտակներին, համաձայն հետևյալ խոսքի՝ «Սաղմոս ասացէք Տեառն՝ սուրբք նորա» (Սաղմո՛ս երգեցեք Տիրոջը, ո՛վ Նրա սրբեր) (Սաղմ. ԻԹ 5):

## Կանոնագլուխ

Յուրաքանչյուր կանոնի յոթերորդ գուբղան կոչվում է «կանոնագլուխ»: Կանոնը ասելիս «կանոնագլուխը» պետք է բարձրաձայն եղանակել:

Ժամագրքում կանոնագլուխներն առանձին են գրված՝ որը ոչ այլ ինչ է, եթե ոչ յոթերորդ գուբղայի առաջին վեց և վերջին ութ տները՝



որոնք ալելուիաների կրկնության պատճառով «կրկնակ» կոչվեցին և իբրև փոխառյալ կամ «փոխ», «փ» տառով են նշանակվում:

«Կանոնագլուխը» հետևյալ խորհուրդն ունի: Նախ, որ Հեսուն Երիքովի շուրջը յոթ օր պտտվեց, որոնցից վեց օրը լռությամբ՝ իսկ յոթերորդը աղմուկ-աղաղակով ուղեկցվեց՝ որից էլ քանդվեցին քաղաքի պարիսպները: Այսպես էլ մենք՝ վեց գուբղան «թիվ» ենք ասում՝ իսկ յոթերորդը՝ որը փոխն է՝ «ձայնով եղանակում», որպեսզի կործանվեն մեղքերը՝ որից հետո Աստծուն օրհնություններ ենք ընծայում:

Կանոնագլխին հսկման օրերի պաշտոնն է հաջորդում: Այդպիսի օրեր են Տերունի և պատարագի օրերը: Պաշտոնը կազմված է շարականներից՝ սաղմոսներից՝ Ավետարանի ընթերցումից՝ երգից՝ մաղթանքից՝ քարոզներից և աղոթքներից:

Պաշտոնի դասական օրինակ է համարվում Ննջեցյալների կարգը՝ որը հոգեհանգիստն է:

Գիշերային ժամերգության սկզբից մինչև առաջին օրհնությունը կոչվում է «հսկման կարգ» կամ «գիշերապաշտոն»՝ որը պատարագի կամ այլ տերունական օրերին ավելի երկար է տևում՝ քանի որ այդ օրերին «Տէր գի բազում» -ը եղանակով է կատարվում: Բացի այդ կանոնագլուխ և այլ շարականներ են երգվում:

## Օրհնության երգը

Տասը պատվիրանների օրինակով՝ և քանի որ տասը թիվը ազատության խորհրդանիշն է, տերունական և մարտիրոսաց տոներին օրհնության տասը շարականներն ենք երգում, որովհետև վերջիններս ազատվեցին այս աշխարհի նեղություններից:

Պահքի ժամանակ օրհնություն չի ասվում՝ որովհետև ապաշխարության օրեր են: Այդ օրերին նաև չի խնկարկվում՝ քանի որ մեղքերից դարշահոտ ենք դարձել:

Երբ Աստված իսրայելցիներին ազատեց Եգիպտոսի գերությունից և անապատ հանեց՝ Մարիամը՝ Ահարոնի քույրը՝ թմբուկով հորդորում էր ժողովրդին՝ ասելով՝

«Օրհնեսցո՛ւք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ» (Օրհնե՛նք Տիրոջը՝

քանզի Նա փառքով է փառավորված) (Ելք ԺԵ 20): Նույնպես և մենք ամեն օր Աստծուն նույն օրհնությունն ենք մատուցում՝ որովհետև և մեզ՝ այն է՝ նոր Իսրայելին՝ ազատեց իմանալի փարավոնից՝ այսինքն՝ դժոխքից ու կռամոլությունից՝ և ապահով պահեց զանազան մեղքերից ու դուրս բերեց երկնքի իմանալի անապատը՝ ուր չարն ու վիշտը չեն բնակվում:

Տերունի օրերին՝ Օրհնության ավարտից հետո՝ մենք առանց միջնորդի ենք փառավորում Տիրոջը:

Իսկ մարտիրոսների տոներին Սուրբ Աստվածածնի միջնորդությամբ մաղթանք ենք վերառաքում առ Աստված՝ համապատասխան քարոզներով ու աղոթքներով հանդերձ:

Սարկավագը քարոզով հորդորում է ժողովրդին՝ թե՝ «Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն ազինք՝ գովեցէ՛ք զՆա ամենայն ժողովուրդք՝ զի զօրասցի ողորմութիւն Նորա ի վերայ մեր» (Օրհնեցե՛ք Տիրոջը՝ բոլո՛ր ազգեր՝ գովեցե՛ք Նրան՝ բոլո՛ր ժողովուրդներ: Թող Նրա ողորմությունը հաստատվի մեզ վրա) (Սաղմ. ՃԺԶ 1՝ 2):

Քահանան՝ լինելով Քրիստոսի օրինակը՝ միջնորդ է Աստծու և մարդկանց միջև և վերցնելով ժողովրդի աղոթքներն ու նվերները՝ Աստծուն է ընծայում: Եվ Աստված իր առատ գանձերից բազմապատիկ ողորմություններ է շնորհում՝ ըստ հետևյալ խոսքի՝ «Խնդրեցե՛ք և կտրվի ձեզ» (Մատթ. Է 7):

Հաջորդող քարոզները ուսուցանում են մեղքերի թողություն խնդրել, որպեսզի խոտան չգտնվենք պատասխանատվության օրը, և մեր առաքինության պտուղները ունայն և ապարդյուն չլինեն: Նաև ուղղել հոգևոր ընթացքը դեպի երկնային Քաղաքը և գտնել շնորհ ու ողորմություն Բարերար Տիրոջից:

Մովսեսը և Հեսուն լրտեսներ ուղարկեցին, որպեսզի հայտնեն Իսրայելի որդիներին բարու մասին, և նրանք բարու տենչմամբ հաղթեցին հակառակորդ չարին: Լրտեսներն էլ գնացին, տեսան, ապա եկան ու պատմեցին Իսրայելի որդիներին Ավետյաց երկրի հողի արգավանդության, պարարտության և թշնամիների հետ սպասվելիք պատերազմի մասին:

Նույնպես և առաքյալները՝ ճշմարիտ Իսրայել սրբերի գնդերը, իրենց Տիրոջ զորությամբ հաղթեցին բանսարկուին և նույնը սովորեցրին ավազանից ծնված որդիներին: Ինչպես թշնամու մեքենայություններն հմուտ գիտակը՝ Պողոս առաքյալն է գրում՝ «Քանզի անտեղյակ չենք նրա խորհուրդներին» (Բ Կորն. Բ 11): Նույնն են պատգամում նաև սրբերի աստվածաբանությունը, ճգնողների վարքը, իմաստունների խոսքերը, Տիրոջ սպառնալիքները և հորդորները ավետյաց անվախճան կյանքի մասին:



## «Թագաւոր յաւիտեան»

Վճարման աղոթքներից հետո՝ եթե Մարտիրոսաց տոն է՝ երգում ենք «Թագաւոր յաւիտեանը»՝ ուղղված երկնային Թագավորին, այն պահոց օրերին է ասվում և չաբաթվա օրերին համապատասխան է որոշված:

«Թագավոր» -ները երեք-երեք տներից են կազմված Երրորդության խորհրդով՝ իսկ միջին տունը սաղմոսներից է քաղված՝ որովհետև Աստված մարդացավ:

Ինչպես որ Աստված է Հավիտենական Թագավորը՝ նույնպես և սրբերը՝ որ Քրիստոսի չարչարանքներն իրենց անձերում կրեցին՝ Քրիստոսի հետ հավիտյան թագավորելու են՝ ըստ առաքյալի խոսքի՝ «Եթե Իր չարչարանքներին կցորդ ենք՝ հաղորդակից ենք լինելու և Իր փառքին» (Հռոմ. Ը 17): Իսկ մեկ այլ տեղ գրված է՝ «Եթե համբերենք՝ Նրա հետ էլ պիտի թագավորենք» (Բ Տիմ. Բ 12):

Ապա ընթերցում ենք սրբերի հիշատակությունը՝ ովքեր նահատակվեցին և թագավորում են այնտեղ Նրա հետ: Որպեսզի մենք էլ նրանցը ցանկանանք և նրանց փառքին մասնակից լինենք՝ նրանց բարեխոս անենք մեզ համար և նրանցից օրինակ վերցնենք: Նրանք՝ ովքեր Ավետյաց Երկրի ականատեսը եղան և մեզ էլ հորդորում են այն ճանապարհով գնալ՝ որով իրենք ընթացան ու անսխալ ժամանեցին նախատեսված վայրը:

«Թագաւորք»-ները մաղթանքներ են, որպեսզի կարողանանք տանջանքների մեջ ապրել, իսկ սրբերին ուղղված աղաչանքները՝ որպեսզի մենք ևս արժանանաք նրանց սպասվելիք հատուցմանը:

## «Ալէլուիա»

*Իսկ հարության և տերունական տոներին «Ալէլուիա»-ներով հրեշտակներին ենք երգակից լինում՝ որպես թե ավետիս ենք մատուցում փրկված ժողովրդին՝ պատմելով Քրիստոսի փրկագործության մասին՝ որ Նա արեց մարդկանց ցեղի համար:*

*Որովհետև այդ օրերին բարեխոսների և մաղթանքների կարիքը չունենք, այլ սերովբեական երգերը և մարդկանց ու հրեշտակների բարեբանությունները միացվում են մեկմեկու, որի համար «Ալէլուիա» -ների վերջին տներում, գոհություն և փառաբանություն և երկրպագություն է վերառաքվում բարիքների Տվողին: «Ալէլուիա» -ն թարգմանվում է՝ գովեցեք Տիրոջը:*

*Եվ այսքանով ավարտվում է Գիշերային ժամերգությունը: Սրանից հետո անդրադառնալու ենք հաջորդին՝ որը «Հարց» -ն է՝ այսինքն՝ «Երեք մանուկների» երգը:*



# ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Առավոտյան ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Որդի Աստծու

*Առավոտյան ժամերգության ստույգ ժամանակը արշալույսն է: Նախկինում գիշերային ժամերգությունից մինչև առավոտյան ժամը ընկած ժամանակահատվածում ընթերցումներ էին կատարվում:*

## Սյունաց եպիսկոպոս տեր Ստեփանոսի խոսքը «Երեք մանուկների» երգի մասին

*Հավիտենական Աստված՝ Նա, Ով հաստատեց ամեն ինչ՝ երևացող և աներևույթ բնությունը, որի մասին Գրքերը մեզ սովորեցնում են, որ Իր Խոսքով ոչնչից արարեց, իսկ թագավորական պատկերը, որը ըստ Իր պատկերի և նմանության է, հետո Իր ձեռքերով արեց ի պատիվ Իր տերության, որից անարգ նյութը առավել ևս մեծարվեց ու երկինք բարձրացվեց, դեպի տերունական փառքը, որի համար հրամայում է ըստ արժանվույն ապրել, որպեսզի ինքնահոժար ընթացքով ըմբռնենք առաջադրված խորհուրդները:*

*Սակայն մարդը, չարի խաբեությունից մոլորված, կամեցավ հափշտակել իրեն անհասանելի բարձունքները, որը չհանդուրժվեց, և վրա հասած աղետը տապալեց նրան, որովհետև սրտի մեջ փափագով ընդունեց չարի խրատը՝ ցանկանալով վեր ելնել, որից և չղթայակապ ընկավ անգիտության խորխորատը: Աստվածանալու ցանկությունը կործանարար եղավ նրա համար, և իր իսկ ընտրած լծի տակ ընկնելով՝ ժառանգեց արտաքին խավարը և մահը:*

*Երբ այս ամենը եղավ, ամենագութ մարդասեր Հայրը, չհանդուրժելով Իր պատկերի կործանումը, ըստ մարգարեական գրվածքի, ընդառաջ գնաց և գրկաբաց ընդունեց ու համբուրեց նրան, ով ետ դարÓ í*

խոցերի արահետներով դեպի կուապաշտությունը գնալուց: Եվ սուրբ Կույսից ծնված Իր Որդու մահվամբ, նորոգված մարդուն փառքի պատմուճան և մատանի է հրամայում տալ, որպեսզի չարը անգործության տրվի և իրենից ոչինչ չգտնի հողեղենների մեջ: Ապա մորթել տվեց մեծ ու անպատարագելի եզը և Իր անմահ Որդուն, որով բոլորիս տիեզերական հարսանիքի է կանչում և այսպիսի տնօրինությամբ նորոգում բնությունը: Իսկ մենք, անվերադարձ կենդանանալով, մեկ օրվա մեջ երկու մեծապայծառ խորհուրդներ ենք տեսնում, դրանք են՝ ծնունդը և հարությունը:

Ոչ թե մեկ, երկու կամ բազմաթիվ, այլ յուրաքանչյուր օրվա մեջ կա այդ խորհուրդը: Տարին մեկական անգամ ծննդյան և հարության տոներն ենք նշում: Նաև ամեն կիրակի հայտնապես տոնում ենք մեր Փրկիչի արիությամբ մահվան լուծարման և համայն փրկության տոնը: Սրանից զատ ամեն օր տոնում ենք նաև ծննդյան և հարության խորհուրդները: Աստծու Եկեղեցին ամեն օր տոնում է նախաստեղծների փրկությունը, որը իրագործեց Միածին Որդին:

«Երեք մանուկների» օրհնությունը նախադաս է «Ողորմեա» սաղմոսին, որովհետև դնում է նախ այր մարդու փրկության հարցը, քաղդեացիների կործանումով և երեք մանուկների Աստծու Որդու փառակցությամբ, քանի որ այրն է կնոջ գլուխը, հետո միայն կնոջն է ազատում, որպեսզի այլևս անօրենությամբ չհղփանա և տրտմությամբ անեծքի ներքո գավակ չծնի:

Որովհետև սուրբ Աստվածածնի որդեծնությամբ խափանվեց դատապարտությունը և վերացվեցին մահվան բոլոր պատճառները, որոնք անեծքով էին մուտք գործել: Աստծու Որդու՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմնանալով, նաև Նրա մահվամբ ու հարությամբ, Նրա հետ մեղքերի գերեզմանից հարություն առան և նրանք, ովքեր մկրտությամբ Նրա հետ մեռան: Համարձակվում ենք ասել նաև, որ պսակով Հոր աջ կողմում նստեցին, ինչը և տոնում է սուրբ Եկեղեցին: Այսպիսի երախտիքների համար, որ Աստված տվեց մարդուն, ամեն օր կատարվում է վերը նշված «Երեք մանուկների» երգը: Եվ Դավթի սաղմոսն առաջին հերթին ասվում է Ադամի համար, որ Քրիստոսով եղավ մարդկային ցեղի բժշկությունը: Իսկ մյուսը Եվային սրբելու համար է որդեգրությամբ մեզ ընդունելով:



## «Հարց»

«Հարցը», իր հետ կարգված աղոթքներով, ուղղված է Միածին Որդուն: Որովհետև՝ երբ երեք մանուկներին նետեցին հնոցի հրի մեջ՝ Նաբուգոդոնոսոր արքայի կանգնեցրած պատկերին չերկրպագելու համար՝ այնժամ Բանն Աստված իջավ հնոցի մեջ և երեք մանուկներին փրկեց կրակով այրվելուց: Իսկ մանուկները՝ երբ տեսան՝ որ ողջ են մնացել հրից՝ սկսեցին գոհաբանել Աստծուն: Նրանց օրինակով՝ մենք՝ ամեն առավոտ՝ «Հարցն» ենք երգում՝ հայցելով Տիրոջից՝ որ ինչպես նրանց փրկեց այրվելուց՝ այնպես էլ մեզ փրկի մեղքերի կրակներից՝ որոնք միշտ տոչորում ու այրում են մեր մարմիններն ու հոգիները՝ ինչպես որ հաջորդ քարոզն է ասում՝

«Աղաչեսցուք զՄիածին Որդին Աստուծոյ՝ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ որ էջ փառօք Հօր ի մէջ հնոցին՝ և փրկեաց զերիս մանկունսն ի քաղդեացւոց անտի: Լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր՝ զի մի՛ երբեք խաբիցուք մեք ի մեղաց և ի ցանկութենէ աշխարհի»:

(Աղաչենք Աստծու Միածին Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ որ Հոր փառքով հնոցի մեջ իջավ և այնտեղ փրկեց երեք մանուկներին քաղդեացիներից: Լուսավոր և սուրբ թող պահի մեր մտքերը՝ որ երբեք չխաբվենք մեղքերից և աշխարհի ցանկություններից):

## Մովսես Քերթողահայր
## «Երեք մանուկներ» -ի երգի մեկնությունը

Երեք մանուկները մարդկային բնության օրինակն են, իսկ կրակի հնոցը՝ հանդերձյալ հրի: «Երեք մանուկների» երգը ամեն առավոտ երգում է Եկեղեցին, որովհետև ինչպես նրանք, գերված Բաբելոնի բռնակալի կողմից, գցվել էին հնոցի մեջ, նույնպես և մենք՝ ընկել ենք այս կյանքի հնոցը՝ գերված աներևույթ բռնակալից, բռնված զանազան ախտերով և վառելանյութ դարձած հավիտենական կրակին:

Ամեն առավոտ, հրեշտակների դրդմամբ արթնանալով թառամեցնող քնից, հանդիսավորապես, երգում ենք «Երեք մանուկների» երգը՝ «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն Քո

յաւիտեան» (Օրհնյալ ես Դու Տե՛ր, Աստված մեր հայրերի. օրհնյալ է Քո փառավոր սուրբ անունը) (Դան. Գ 52):

Նրանք իրենց անձերի փրկության համար աղոթք էին մատուցում Փրկիչին և հնոցի միջից դեպի երկինք աղաղակում՝ հորդորելով բոլոր արարածներին փառաբանել Աստծուն:

Նմանապես և մենք, որպես անդամները Նրա մարմնի, դեպի մեզ կանչելով Գլուխը՝ գոչելով աղաչում ենք բոլոր արարածներին՝ «Օրհնեցե՛ք ամենայն գործք Տեառն զՏէր» (Օրհնեցե՛ք Տիրոջը, Նրա բոլոր գործեր) (Դան. Գ 57): Որովհետև ազատագրված մեղքերից և մեր ազատությամբ հաղորդվելով բոլոր արարածների բնության հետ, անհրաժեշտ է, որ նրանք ևս, մեզ հետ միասին օրհնեն և փառավորեն Աստծուն՝ ամենքիս Ազատարարին:

Բայց նախ անհրաժեշտ է ապաշխարությամբ արդարանալ մեղքերից, հետո միայն հրամայել մյուս արարածներին, որպեսզի փառաբանեն Աստծուն:

Նախ պետք է խոստովանել, որ մեղանչեցինք, անօրինացանք, հանցանքներ գործեցինք, և ապա, համարձակություն ստանալով, ասել՝ «Օրհնեցե՛ք ամենայն գործք Տեառն զՏէր»:

Իսկ վերջում ասվում է. «Ցօղեա՛՝ Տէ՛ր՝ զցօղ բարերար ողորմութեան Քոյ» (Ցողի՛ր՝ Տե՛ր՝ Քո բարերար ողորմության ցողը)՝ այսինքն՝ ինչպես որ զգալի ցողով հանգցրիր հնոցի բոցը՝ նույնպես և իմանալի ցողովդ հանգցրո՛ւ մեր մեղքերի բոցը՝ որպեսզի ազատվենք հավիտենական հրից:

Մանուկների երգը նախաստեղծների անունից է, ովքեր վիրավորվեցին մարմնական ցանկություններից: Իսկ երանելի մանուկները՝ որպես օրինավոր զինվորներ հոգևոր պատերազմում, ամուր պաշտպանած բոլոր՝ երևելի և աներևույթ զգայարանները, որոնց մեջ ցանկության չիկացած նետեր է փորձում արձակել բանսարկու թշնամին, հաղթեցին չար բունակալին և նախաստեղծների նման չընկան խաբված, որի համար էլ չարի իմանալի արքա Բելիարը նրանց նետեց նյութեղեն հրի մեջ:

Իսկ նրանք, լինելով Ադամի որդիները և անմեղության ծնունդ, չգնացին անիծված Կայենի շավիղներով, այլ կամենում էին կործանված Ադամի վերականգնվելը, ծնկի չեկան երևութական թշնամու առջև, այլ մտան հնոցի բոցերի մեջ: Նրանց միանալով Հոր Միածինը՝



թոթափեց նրանց վրայից հուրը և առագաստի պես ծածանվող կրակի բոցերին արգելեց հպվել նրանց:

Եվ Ամենասուրբ Հոգին հողմանման ցողով զովացնում էր տապը որպես ապացույց դժոխքից Ադամի անապական ազատման, հանուն որի Ադամի համար ողբաձայն պաղատանքով օրհնություն էին առաքում Բարձյալ Հորը՝ Դատավորի արդար իրավունքը համարելով իրենց հնոցը նետելը, և աղերսելով գոչում էին՝ «Այն ամենը , ինչ բերեցիր մեզ վրա, արդար դատաստանով արեցիր» (հմմտ. Դան. Գ 31): «Մեղանչեցինք և անօրենություն գործեցինք, Քո պատվիրանները չլսեցինք» (հմմտ. Դան. Գ 29-30): «Իսկ այժմ արժանի չենք բանալ մեր բերանները» (հմմտ. Դան. Գ 33):

Արտասվալից ողբով երկնավոր Հորը այս խոստովանելուց հետո ուրախությամբ տեսան Աստծու Որդուն իրենց հետ հնոցում: Եվ ողորմություն էին հայցում իրենց ազգակիցների համար՝ հիշելով Աստծու ուխտը Աբրահամի հետ, խոստումը՝ Իսահակին և ողորմությունը՝ Իսրայելին, պաղատում էին Աստծու Որդուն՝ ասելով՝ «Արդ, Տե՛ր, բոլոր ազգերից ավելի տկարացանք մենք և այսօր տառապում ենք ամբողջ աշխարհում մեր մեղքերի պատճառով: Այժմ, այս ժամանակներում չկա իշխան, մարգարե և առաջնորդ, ո՛չ ողջակեզ, ո՛չ զոհ, ո՛չ զոհաբերություն, ո՛չ խունկ և ո՛չ էլ Քեզ երախտիք մատուցելու տեղ» (Դան. Գ 37-39):

Եվ ապա մարգարեական աչքերով տեսան նոր, պատվական ընծան, որով Եկեղեցին հաճելի է լինում Աստծուն, դա խոնարհ անձը և հոգու տառապանքներն են, որոնք ավելի ընդունելի են քան զվարակները, խոյերն ու գառները (տե՛ս Դան. Գ 39, 40): Հարկավոր է գնալ Տիրոջ ետևից և խնդրել Նրա բարեհաճությունը և փրկվել Նրա սքանչելիքներով ու փառաբանել Նրա Սուրբ Անունը: «Թող ամոթով մնան բոլոր նրանք, ովքեր չարիք են պատճառում Քո ծառաներին. Նրանց զորությունները թող խորտակվեն, և թող ճանաչեն, որ Դու ես միակ Տեր Աստվածը և փառավորյալը» Հիսուս Քրիստոս (հմմտ. Դան. Գ 44-45):

Եվ ճշմարիտ փրկությամբ բերկրելով ու ճանաչելով Սուրբ Հոգուն, որ նրանց հովանի է՝ զովաբանում էին Սուրբ Երրորդությանը, օրհնաբանում կենդանարար Սուրբ Հոգուն՝ ասելով՝ «Օրհնյալ ես Դու Տէ՛ր Աստված մեր հայրերի, և օրհնյալ է Քո փառավոր սուրբ անունը, օրհն-

յալ ես Դու փառքի սուրբ տաճարում» (հմմտ. Դան. Գ 52-53): Եվ գովաբանելով Սուրբ Հոգուն բոլոր արարածներով հանդերձ՝ օրհներգելով մեծարում էին Ամենասուրբ Երրորդությանը:

Ուստի և Եկեղեցին, նրանց օրինակով, չհնազանդվելով քաղդեացիների թագավորին՝ այսինքն՝ սատանային, խպառ հրաժարվում է նրա կամքը կատարել: Իսկ վերջինս բորբոքում է ամենակեզ ցանկությունների պատրանքները, որպեսզի նրանց ևս հնազանդեցնի այնպես, ինչպես արգելված պտղի ճաշակմամբ առաջին մարդկանց հնազանդեցրեց:

Սակայն Եկեղեցին լինելով որդին Անսկիզբն Հոր և մարմինը Երկրորդ Ադամի, այսինքն Քրիստոսի, չի խաբվում մարմնական անցանելի ցանկություններով և չի ընկնում նրա առջև ու երկրպագում և չի կատարում նրա երկրավոր և վերից վար կործանիչ կամքը: Նա էլ Եկեղեցու շուրջը կրակի բոցեր է բորբոքում, քառասունինը կանգուն բարձրությամբ, սակայն չի կարողանում հասցնել մինչև հիսուն, որն արքայության պարիսպն է:

Եկեղեցին սուրբ մանուկների խոնարհությամբ, ամեն օր խոստովանելով պաղատում է՝ «Մեղանչեցինք, անօրենություններ գործեցինք: Զպահեցինք Քո պատվիրանը և այնպես չարեցինք, ինչպես պատվիրեցիր մեզ: Այն ամենը, ինչ արեցիր մեր նկատմամբ, արդար դատաստանով արեցիր» (հմմտ. Դան. Գ 29-31):

Եվ Հայրը գթալով՝ ողորմությամբ առաքեց Իր Որդուն՝ խաչի մահով փրկելու մարդկանց: Նույնպես և այժմ, փրկում է Եկեղեցուն սատանայի որոգայթներից Իր Որդու արյամբ ու խաչով, ըստ այն խոսքի, թե՝ «Մի՛ մատնիր խպառ Քո անվան համար և մի՛ ցրիր Քո ուխտը և մի՛ հեռացրու Քո ողորմությունը» (Սաղմ. ՃԼԹ 9): Որի համար էլ Հոր՝ Աստծու Խոսքն ու Ծնունդը, ծառայի կերպարանք ընդունեց, և չարունակ հիշելով նախահայրերին տված խոստումը, ասաց սուրբ աշակերտներին՝ «Ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20), և որի համար մաղթում ենք՝ «Արդ, Տե՛ր, բոլոր ազգերից ավելի տկարացանք մենք և այսօր տառապում ենք ամբողջ աշխարհում մեր մեղքերի պատճառով:

Այժմ, այս ժամանակներում չկա իշխան, մարգարե և առաջնորդ» (Դան. Գ 37-38), այսինքն՝ մաքուր հոգի և աստվածընկալ միտք, որ Հոգու շնորհներով տեսնում է գալիքը, և աստվածահաճո և անզբաղ



ողոթքը, որպես «երախայրիք» է Տիրոջ առջև մատուցում:

«Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. Ծ 19): Սա է հաճելի Միակ Բարեգությին: «Եվ ըստ Քո բազում ողորմության և մեծ հեզության, որ միայն Դու ես բարեգութ, փառավորի՛ր Քո անունը և ամաչեցրո՛ւ դևերի բանակներին, խորտակի՛ր նրանց զորությունները, որպեսզի ճանաչեն, որ ստուգապես Հիսուս Քրիստոսն է մեր Տեր Աստվածը»: Ապա գովելով Սուրբ Հոգուն՝ ասում է՝ «Օրհնյալ, գովյալ, բարեբանյալ և բազմապատիկ երգաբանյալ»: Այն բազում շնորհները, որ բաշխեց Եկեղեցու լրության համար, հիշելով՝ գոհանում, օրհնում ու փառավորում ենք Սուրբ Հոգի Աստծուն:

Փառքի Տաճարը Որդու մարմինն է: Իսկ արքայության աթոռի վրա բազմելը խորհրդանշում է Հիսուսի խաչի վրա ելնելը: Քերովբեի վրա Նստածը Հայրն է, իսկ Եկեղեցու հաստատության վրա Նստողը՝ Սուրբ Հոգի Աստված:

Բոլոր արարածներով հանդերձ օրհնում և փառաբանում ենք Արարչին՝ Նրան, այն մեծ պատվի համար, որ մարդկանց, իբրև գլուխ արարածների, տվեց ճանաչել և փառաբանել Արարչին, որովհետև նրանով փրկվեց և ազատվեց արարվածներին պաշտելուց:

Այնուհետև հաջորդում է «քարոզը» և «աղոթքը»:

Հարց. -Բոլոր շարականները երկու անգամ ենք ասում: Ինչո՞ւ ենք «Հարց» -ը երեք անգամ կրկնում:

Պատասխան. -Որովհետև «Հարց» -ը երեք մանուկների երգն է: Նաև երեք նահապետներին՝ Աբրահամին՝ Իսահակին և Հակոբին Աստծու և մեր միջև միջնորդ ենք կարգում: Ինչպես նաև հոգու՝ մարմնի և մտքի համար:

Իսկ գործատունը* երկու անգամ ենք ասում՝ որովհետև Աստծուն օրհնող բոլոր արարածները երկու տեսակ են լինում՝ իմանալի և զգալի:

Նույնպես, եթե յուրաքանչյուր շարական երեք տներից է կազմված՝ իսկ «Հարց» -ը՝ վեց՝ ապա վեցը երկու անգամ երեքն է: Նաև վեց տունը վաթսուն կանգուն երկարությամբ և վեց կանգուն լայնությամբ

* «Հարց» շարականի մի քանի տները գործատուն են կոչվում, որովհետև այդ տները սկսվում են՝ «Օրհնեցէք ամենայն գործք տեառն զՏէր...» խոսքերով:

այն ոսկյա պատկերն է՝ որը կանգնեցրել էր Բաբելոնում Նաբուգոդոնոսորը:

«Հարց» -ը երեքական տներից է կազմված՝ նախ ի դեմս Երրորդության: Երկրորդ՝ ի պատիվ երեք նախահայրերի: Երրորդ՝ մանուկները ևս երեքն էին:

Իսկ «գործառունը» երկու տնից է կազմված՝ որովհետև արարածները երկու տեսակի են լինում՝ երկնային և երկրային՝ իմանալի և զգալի:

Սաղմոսը վաթսուն տուն է՝ որովհետև Նաբուգոդոնոսորի կանգնեցրած արձանը վաթսուն կանգուն բարձրություն ուներ՝ իսկ շարականը վեցը տուն՝ քանի որ արձանի լայնությունը վեց կանգուն էր:

Այս խորհրդածություններով մարդը Քրիստոսին միանալով՝ սրբության մեջ անխորտակ է մնում, և խնդրում է Աստվածային Եռյակ Միությանը, ասելով՝ «Աստուա՛ծ, քաւե՛ա զիս զմեղաւորս», (Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս) (Ղուկ. ԺԸ 14), որպես խնդրվածք առ Սուրբ Երրորդությանը, որը ամեն մի քրիստոնյայի խոնարհ պաղատանքն է աղուհացի օրերին: Տերը մեզ սովորեցրեց մաքսավորի օրինակով այդպես արդարանալ, որի օրինակով Եկեղեցին խրատում է՝ խոնարհվելով արժանանալ բարձրանալուն:

## «Մեծացուսցէ*»

«Հարց» -ը Ադամի՝ «Ողորմեա»-ն՝ որպես ապաշխարություն Եվայի, իսկ «Մեծացուսցէ» -ն՝ որը գտնվում է այս երկուսի միջև՝ ի դեմս Աստվածածնի է ասվում՝ որովհետև վերջինս եղավ նրանց դատապարտությունների լուծարողը, և Աստվածածնից նախամորը հարության ավետիս է առաքվում հողաստեղծ Ադամի կենդանության մասին:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Հարց» -ից հետո «Մեծացուսցէ» -ն ասում:

---

* Հնում «Մեծացուսցէ»-ն առանձին կարգ չի համարվել՝ այլ «Իւղաբերից Աւետարան»-ի մասն է կազմել՝ որպեսզի կիրակի օրը Տիրոջ հիշատակը ամբողջությամբ՝ հայտնությամբ և հարությամբ կատարվի: «Մեծացուսցէ»-ի կարգը Ավետարանի օրհնություններից է կազմված՝ Աստվածամոր օրհնություն (Ղուկ. Ա 47 և55)՝ Զաքարիայի օրհնություն (Ղուկ. Ա 68 և79)՝ Սիմոն Ծերունու օրհնություն (Ղուկ. Բ 29 և32), և փոխերի նման է կատարվում:



Պատասխան. -«Մեծացուսցէ» -ն Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինն է ասել՝ և «Հարց» -ից հետո է զետեղված այն բանի համար՝ որ՝ երբ Քրիստոս իջավ հնոցի մեջ՝ այդ երևումն անմարմին էր՝ իսկ Աստվածածնով հայտնությունը՝ մարմնով:

Ուստի «Մեծացուսցէ» -ն պատշաճ է «Հարց» -ից հետո երգել՝ քանի որ Բանի հնոց իջնելը օրինակն էր՝ իսկ մարդեղությունը՝ ճշմարտությունը՝ և ճշմարտությունը հարկավոր է օրինակին մոտ դնել:

«Մեծացուսցէն» պատմում է ամբողջ տնօրինության խորհուրդը: Որովհետև Քրիստոսի հարության մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել նաև Նրա ծնունդն ու գերեզմանը: Որովհետև եթե Տերը ծնված չլիներ, ապա չէր խաչվի և թաղվի: Իսկ եթե թաղված չլիներ, ապա հարություն էլ չէր առնի, և մենք էլ չէինք փրկվի:

Այս ամենի համար, անախտ ու կուսական Ծնունդը հանձն առավ՝ կամավոր խաչն ու թաղումը և հարություն առավ, որի համար էլ «Մեծացուսցէ» ենք ասում:

Ապա և նույն իրեն՝ Սուրբ Կույսին բարեխոս ենք անում Աստծու առջև՝ որպես երևում է քարոզից և աղոթքներից:

## Յուղաբերների Ավետարանը

«Իւղաբերից Աւետարան» -ը թափորով դուրս է բերվում ավանդատնից՝ ընթերցվում բեմի վրա՝ ապա քահանան Ավետարանով հանդիսավորությամբ օրհնում է հավատացյալներին: Այնուհետև դասերեցը համբուրում է Ավետարանը, ու տրվում է հարության ողջույնը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի»:

Ավարտին նույն թափորով քահանան ավանդատուն է վերադառնում: Մեծ պասի օրերին Ավետարանը բեմից չի ընթերցվում:

Հարց. -Ինչո՞ւ ենք կիրակի օրերը Յուղաբերների Ավետարանը «Մեծացուսցէ» -ից հետո ընթերցում:

Պատասխան. -Յուղաբերների չորս Ավետարանները համաձայնաբար պատմում են Քրիստոսի հարության մասին և այս ժամերգության մեջ հաջորդում «Մեծացուսցէ» -ին հետևյալ պատճառով: Ինչպես Տերը անապական ծնվեց Կույս Մորից՝ նույնպես և անապական հարություն առավ

կնքված կուլս գերեզմանից՝ որի մասին երգվում է Շարականում. «Ուրախ լե՛ր և բերկրեա՛ մայր և կոյս՝ քանզի ծնեալդ ի կուսէդ այսօր վերստին յարութեամբ ծնաւ ի կոյս գերեզմանէն» )Ուրախ եղի՛ր և բերկրի՛ր մայր և կույս՝ քանզի Կույսից ծնվածն այսօր հարությամբ վերստին ծնվեց կույս գերեզմանից(:

Մենք էլ սրա նման նախ՝ ծնվում ենք կույս ավազանից՝ և հետո հարությամբ՝ պիտի ծնվենք գերեզմանից: Այսպիսով, եթե սուրբ Կույսին հիշելով՝ հաստատում ենք Թաղումը, ապա գերեզմանի հիշատակությամբ հավաստվում է հարությունը:

Իսկ Ավետարանը խորանից դուրս ենք բերում խնկարկելով և լապտերներով՝ որովհետև խորանը գերեզմանն է խորհրդանշում՝ իսկ դռան փակումը գերեզմանում Թաղումը:

Երկու ճրագները՝ որոնք լուսավորում են Ավետարանը՝ երկու լուսավոր հրեշտակներն են՝ «Որոնք նստել էին՝ մեկը՝ սնարին՝ և մյուսը՝ ոտքերի մոտ՝ այնտեղ՝ ուր Հիսուսի մարմինն է եղել» (Հովհ. Ի 12): Նաև արդարների լուսավորությունն է ցույց է տալիս: Մոմակալները, Տիրոջ գալստյանը հրեշտակների սպասավորությունն է ակնարկում:

Իսկ խունկերի անուշահոտ բուրումը՝ Քրիստոսի անուշահոտության նշանակն է՝ որը հարությունից հետո՝ Ավետարանի քարոզությամբ՝ սփռվեց ամբողջ աշխարհում: Նաև արդարների պարկեշտ վարքն է:

Կիրակի օրը մեղմ ձայնով Ադամի բերանով ասվում է՝ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ…»: Իսկ ողբաձայն սաղմոսելը, ըստ կանանց սովորության գերեզմանի վրա ողբալն է նշանակում: Քանզի, մինչև Տիրոջ «Թաղման Ավետարանի» ընթերցելը, դեռևս կարծելով, թե Տերը թաղված է, դրսից դեպի գերեզմանի ներսը ողբաձայն աղաղակում ենք՝ «Արի՛ Տէր», այսինքն՝ Հոր ծոցից փրկություն ենք հայցում, որպեսզի մեզ՝ կորուսյալներիս, խպառ չլքի: Ապա Տիրոջից օգնություն են խնդրում, ասելով. «Օգնեա՛ մեզ՝ եւ փրկեա զմեզ վասն անուան Քո» (Ելի՛ր, Տեր, օգնիր և փրկի՛ր մեզ հանուն Քո անվան) և «Զի խոնարհ եղեն մինչև ի հող անձինք մեր և երկիր կցեցան մեջք մեր» (Որովհետև մեր անձերը խոնարհվեցին մինչև հող և մեր մեջքերը երկրին կպան) (Սաղմ. ԽԳ 26):

Ապա լսվում է Դավիթ մարգարեի ավետաբեր պատասխանը, որը ասվում է Թափորի խորանից դուրս գալու պահին՝ «Թագաւորեսցէ Տէր



յաւիտեան» (Հավետ պիտի թագավորի Տերը) (Սաղմ. ՃԽԵ 10): Եվ թե՝ «Նա, Ով հավիտյան պահում է ճշմարտությունը, և զրկյալներին արդարություն չնորհում: Տերը բացում է կույրերի աչքերը, Տերը ոտքի է կանգնեցնում գլորվածներին» (Սաղմ. ՃԽԵ 7, 8):

Սա նաև կանանց հանդիպումն է Տիրոջ հետ և նրանց խնդությամբ մոտենալը: Տերը մարմնով թագավորեց բոլոր արարածների վրա՝ ըստ Իր խոսքի՝ երբ երևաց տասնմեկին՝ «Ինձ է տրված ամենայն իշխանություն երկնքում և երկրի վրա» (Մատթ. ԻԸ 17): Դավիթն այս մասին ասում է՝ «Հեթանոսների մեջ ասացե՛ք՝ թե՝ Տերը թագավորեց» (Սաղմ. ՂԵ 10):

«Հարության Ավետարանով» կատարվում է մարգարեի ավետաբեր խոստումը: Եվ այստեղ Գրքերից, որպես կցուրդ ասվում է հետևյալ խոսքը՝ «Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր», (Գիշերը դեպի սրբությո՛ւն պարզեցեք ձեռքերը ձեր և օրհնեցե՛ք Տիրոջը) (Սաղմ. ՃԼԳ 2), Նրան, Ով լսեց մեր աղոթքները և մեռելներից հարություն առնելով փրկեց մեզ՝ թագավորելով ամբողջ տիեզերքի վրա: Այստեղ կցուրդը, սուրբ գործերի նշանակն է, որով փառավորվում է օրհնյալ Աստված:

«Գիշեր» ասելով ոչ թե ժամանակը, այլ հրեական անհավատությունն է ակնարկում, ըստ Եսայու պանծալի մարգարեության, թե՝ «Գիշերով իմ հոգին դեպի քեզ է չտապում, Աստվա՛ծ» (Եսայի ԻԶ 9):

Հարության ավետարանը հրեշտակների քարոզն է կանանց: Ավետարանի այս քարոզությունը աշխարհին մեր հարության հույսի համար է: Ավետարանի համբույրը նշան է՝ որ մարմնացած Քրիստոս համբույրով մեզ մոտ եկավ: Նաև՝ տասնմեկ աշակերտների Տիրոջն երկրպագելու խորհուրդն ունի, երբ տեսան Գալիլեայում:

Ավետարանին հաջորդող քարոզը խրատում է աղոթքներով ու աստվածահաճո վարքով դիմավորել արդարների հարությունը և արժանանալ հարուցյալ Քրիստոսի պարգևներին, իսկ քահանայական աղոթքը ցույց է տալիս սրբերի օրհնությունը հարության ժամանակ:

Մյուս երգերը՝ որ եղանակում ենք՝ Տիրոջ հարության խորհուրդն են պարունակում և ունեն Կղեովպասի հետ առնչվող մանրամասներ՝ թե ինչպես էին նրանք՝ Էմմավուսի ճամփորդները, խնդությամբ պատմում աշակերտներին՝ որ Տերը արդարև հարություն առավ և երևաց Սիմոնին (տե՛ս Ղուկ. ԻԴ 13-35):

Երեկոյան ժամերգության ժամանակ «Համբարձէք» -ն ենք երգում՝ որը սովորեցնում է՝ թե ինչպես յուղաբեր կանայք չաբաթ երեկոյից մինչև միաշաբաթվա լուսանալը արթուն մնացին՝ յուղերով ու խունկերով պատրաստ՝ և ապա հարուցյալ Տիրոջը տեսան՝ նույնպես էլ մենք նրանց օրինակով՝ մեր խունկ-աղոթքներով ու յուղ-արտասուքներով հսկում ենք նախորդող գիշերը՝ որպեսզի առավոտյան Նրա «տեսլյանը» արժանանանք:

Ուստի պետք չէ առավոտյան նիրհել՝ այլ՝ արթուն ու պատրաստ լինել՝ որ հարության առավոտը Քրիստոսին արժանապես տեսնել կարողանանք՝ և առավոտյան երգենք հրեշտակների հետ միասին.

Զի յայնմ առաւօտին նոցա պարակից լիցուք:
Յառաւօտս այս ի մեղաց սրբեսցուք,
Զի յայնմ առաւօտին անամօթ լիցուք:
Յառաւօտս այս ընդ սրբոցն ձայնակցեսցուք՝
Զի յառաւօտին այն ընդ նոսա պսակեսցուք:
Յառաւօտս այս ի տաճար երկրաւոր ընթասցուք,
Զի յառաւօտին այն ի խորանն երկնաւոր ճեմեսցուք:
Յառաւօտս այս հանդիպեսցուք Քրիստոսի հոգւով,
Զի այնմ առաւօտին տեսցուք զՆա հայրական փառօք:
Յառաւօտս այս օրհնեսցուք զՆա և զՀայրն՝
Զի յառաւօտին յայն օրհնեսցէ զմեզ Քրիստոս
Հանդերձ Հարբ և Հոգւով Սրբով:

(Որ այն առավոտ նրանց խմբակից լինենք, այս առավոտ մեղքերից սրբվենք: Որ այն առավոտ ամոթով չմնանք, այս առավոտ սրբերին ձայնակցենք: Որ այն առավոտ նրանց հետ պսակի արժանանանք, այս առավոտ երկրավոր տաճարը գնանք: Որ այն առավոտ երկնավոր խորանում ճեմենք, այս առավոտ հոգով Քրիստոսին հանդիպենք: Որ այն առավոտ Նրան Հոր փառքով տեսնենք, այս առավոտ օրհնենք Նրան և Հորը, որ այն առավոտ Քրիստոս մեզ օրհնի Հոր և Սուրբ Հոգու հետ միասին): Այսքանը Յուղաբերների Ավետարանի ընթերցման մասին:



## «Ողորմեա»

Հարց. Ինչո՞ւ ենք «Ողորմեա» -ն Ավետարանն ընթերցելուց հետո երգում:

Պատասխան. -«Ողորմեա»-ն ապաշխարություն է՝ քանի որ Դավիթը 50-րդ սաղմոսը մեղանչելուց հետո ասաց: Եվ մենք՝ քանի դեռ աշխարհում ենք և հոգիներս մարմիններիս մեջ է՝ կարող է մեղանչենք:

Դարձյալ՝ «Ողորմեա» -ն, ինչպես նաև «Հարցը», մեղքերի համար Ադամի զղջման խոստովանությունն է: «Ողորմեա» -ն նաև մաղթանք է առաջին կնոջ համար:

Սա ենք երգում և ապաշխարությամբ մեր մեղքերը քավում և ապա՝ սրբությամբ ու արդարությամբ պաշտում Տիրոջը: Դրա համար «Տէր յերկնից» -ը «Ողորմեա» -ից հետո կարգվեց՝ որպեսզի մեղքերի թողություն ստանալուց հետո սկսենք ուրախությամբ բարձրաձայն օրհնել Աստծուն:

Ծնկի գալը կործանարար մեղքերի համար է: Իսկ կուրծքը բախելը և ողբալը հատուկ է կանանց պատերազմների ժամանակ:

## «Տէր յերկնից»

Եթե «Ողորմեա» -ն նշանակում է՝ որ ողորմությամբ արդարացրեց ու փրկեց՝ ապա «Տէր յերկնիցը» հրեշտակների օրհնությունն է Տիրոջ համբարձման ժամանակ:

«Տէր երկնից» -ը բարձրաձայն երգելը հրեշտակների հետ երգեցողությունն է խորհրդանշում:

Հարց. -Ինչո՞ւ «Օրհնեցեք Տիրոջ»-ը ասելիս նախ հրեշտակներին է դիմում՝ «Օրհնեցէք զՆա ամենայն հրեշտակք նորա» և ապա մարդկանց:

Պատասխան. -Որովհետև լինելիությամբ նրանք են անդրանիկները՝ հետևաբար պարտավոր են նաև օրհներգելիս առաջինը լինել:

Երկրորդ՝ քանի որ առավել են շնորհներով ու գիտությամբ՝ ուրեմն պարտավոր են նաև շնորհներ մատուցող և ուսուցանող լինել:

Այսպես է նաև Եկեղեցում: Սարկավագը Սուրբ Հոգուց իշխանություն ստանալով, օրինակ է ծառայում դպիրներին ու բոլորին հոր-

ղորում օրհնել Աստծուն: Նախ՝ավագներն են սկսում, հետո՝ հաջորդաբար մյուսները շարունակում:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Տէր յերկնից» սաղմոսը երգում:

Պատասխան. -Վեց պատճառներով: Առաջին՝ եթե «Ողորմեան» ապաշխարության՝ ապա սա օրհնության խորհուրդն ունի: Անհրաժեշտ է նախ ապաշխարել մեղքերից՝ ապա սրբությամբ օրհնել Աստծուն:

Երկրորդ՝ աղոթքը հետևյալ սահմանումն ունի՝ նախ՝ պետք է օրհնել՝ ապա՝ խնդրել՝ իսկ այնուհետև՝ գոհանալ: Որը և կատարվեց «Հարց» -ով՝ «Ողորմեա» -ով և «Տէր յերկնից» -ով:

Երրորդ՝ քանի որ օրհնությունը «Հարց» -ով ենք սկսել, ապա «Տէր յերկնից» -ով պիտի ավարտենք:

Չորրորդ՝ սկզբում «Հարց» -ով ենք դիմում Մի Աստվածությանը հետո «Տէր յերկնից» -ով ի դեմս Երրորդության ավարտում: Որովհետև այս երեք սաղմոսներից առաջինը Հորն է ուղղված՝ երկրորդը օրհնություն է Որդուն՝ իսկ երրորդը՝ սրբությամբ օրհնություն Սուրբ Հոգուն:

Հինգերորդ՝ նահապետներից սկսած նրանք՝ ովքեր մեր գլխավորներն են, մինչև ստորին արարածները աստիճանական կարգով, նույն կարգով նաև երկնային բոլոր իմանալի գլխավոր արարածներից սկսած՝ հրավիրում ենք միաձայն ու միաբան խոստովանության և օրհնության երկնքի և երկրի Արարչին:

Վեցերորդ՝ «Հարց» -ի երգը նաև Բանի էջքն է նշանակում՝ որը խորհրդով ասացին մարգարեներն ու նահապետները՝ իսկ «Մեծացուսցէ»-ն մարմնավոր երևումն է Աստվածածին ծնողից:

Իսկ «Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից. օրհնեցէ՛ք զՆա ի բարձանց» (Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, Օրհնեցեք Նրան բարձունքներից) (Սաղմ. ՃԽԸ 1) ասելով՝ Եկեղեցին հարակցվում է հրեշտակների դասերի հետ Տիրոջն օրհնաբանելիս: Ըստ Փրկչի Խոսքի՝ «Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի. և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա» (Մատթ. ԻԳ 12): Որովհետև մաքսավորը խոնարհվելով ասաց. «Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս», որի հետ պարակցված արարածներս օրհնում ենք Արարչին:

Եվ երեքփոխյան սաղմոսով հրամայվում է օրհնել Սուրբ Երրորդությանը: Առաջին փոխը հրահանգում է օրհնել Հորը՝ հրանյութ դասերի հետ մեկտեղ ամբողջ արարչագործության և արարածների խնամակալության և կարգավորության համար:



Երկրորդ փոխը՝ օրհնել Նրա Որդուն՝ Ծոցածին Բանին, որի համար Եկեղեցին, որ հաստատվեց Քրիստոսով, շինվեց սրբերով՝ առաքյալների և մարգարեների հիմքերի վրա, որոնց հիմքը Հիսուս Քրիստոսն է, ասում է. «Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր՝ օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց: Ուրախ եղեւ Իսրայէլ յԱրարիչ իւր՝ որդիք Սիոնի ցնծասցեն ի Թագաւորն իւրեանց» (Օրհնե՛ցք Տիրոջը նոր օրհնությամբ, սրբերի ժողովում է օրհնությունը Նրա: Իսրայելն ուրախացավ իր Արարչով, Սիոնի որդիները թող ցնծան իրենց Թագավորով) (Սաղմ. ՃԽԹ 1-2): Հիսուս Քրիստոսին հաճելի է սուրբ ավազանի մկրտությամբ մաքրված իր ժողովուրդը: Իսկ սրբերը պարծենում են Նրա փառքով ու Սուրբ Հոգու պարգևներով, որ ընդունեցին:

Քրիստոս երկսայրի սուր տվեց նրանց ձեռքը, և հավատացյալները Քրիստոսի շնորհով և Սուրբ Հոգու զորությամբ վրեժ լուծեցին դևերից կապելով բանսարկու սատանային՝ մեղսասեր թագավորին, և ամբարիշտների հատուցման օրը պիտի դատեն, ըստ Սուրբ Գրքի:

Իսկ երրորդ փոխը սովորեցնում է զանազան հորինվածքներով օրհնաբանել Պարգևաբաշխ Սուրբ Հոգուն, որ լցրեց Եկեղեցին զանազան շնորհներով, որի համար երրորդ փոխում վեց տուն է հատկացվում: Ընդհանուր, այս երեքփոխյան սաղմոսում, տասներկու օրհնություններ է ասվում, ըստ առաքյալների թվի, ովքեր Սուրբ Հոգուց իշխանություն ստացան Եկեղեցու գլխավորները լինելու: Որի համար ասում է. «Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք՝ օրհնեցէ՛ք զՏէր: Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն» (Գոհության ձայնով, բոլո՛ր հոգիներ, օրհնեցե՛ք Տիրոջը: Փառք Հորը՝ Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն) (Սաղմ. ՃԾ 6), և գոհությամբ սաղմոսն ավարտում:

Այս ամենից հետո երգում ենք «Փառք ի բարձունս»՝ որ ասացին հրեշտակները Քրիստոսի ծննդյան ժամին (Ղուկ. Բ 14):

## «Փառք ի բարձունս»

«Փառք ի բարձունս» երգը Տիրոջ ծնունդն ազդարարող հրեշտակների խոսքն է՝ «Փառք Աստծուն բարձունքներում և երկրի վրա խաՕ -

ղությյուն և հաճություն մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14):

Այսպես էր Եկեղեցին ասում մինչ Նիկիայի Տիեզերական սուրբ ժողովը: Եվ ժողովում՝ կիրակի առավոտյան՝ միաբան ու միախորհուրդ հայրապետները կցեցին՝ «Օրհնութիւն Քեզ ի բարձունս...» -ից մինչև «Բարձեալ ես՝ Դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս» հատվածը՝ և դա այդպես մնաց մինչև Կոստանդնուպոլսի սուրբ ժողովը:

Իսկ Կոստանդնուպոլսի սուրբ ժողովում ավելացվեց հոգեմարտ՝ Մակեդոնի դեմ ուղղված հետևյալ հատվածը՝ «Տէր և Հոգի Սուրբ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամեն»՝ մինչև «Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս Քո»: Այնուհետև Եփեսոսի սուրբ ժողովում սաղմոսներից և մարգարեական խոսքերից հետևյալ մասը ևս ավելացվեց՝ «Տէր ապավէն եղեր մեր ազգէ յազգ» մինչև «Ծագե՛ա զողորմութիւնս Քո, որք ճանաչեն զՔեզ, Տէր»՝ այսինքն՝ մինչև վերջ, և սրանով է ամբողջանում երգը:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Փառք ի բարձունս» -ին առընթեր սաղմոսում:

Պատասխան. -Նախ՝ որովհետև սա հրեշտակների օրհնությունն է, որը հրեշտակները Տիրոջ ծննդյան ժամանակ երգեցին: Մենք էլ սաղմոսելով ձայնակցում ենք նրանց:

Երկրորդ՝ այս երգը Սուրբ Երրորդությանն է ուղղվում՝ որը հայրապետները ի դեմս Երրորդության, երեք ժողովների գումարով ամբողջացրին:

Երրորդ՝ ինչպես այնժամ Փրկիչը երկինք համբառնալով հաշտեցրեց մեզ Հոր հետ և Սուրբ Հոգով մեզ խաղաղություն պարգևեց՝ այնպես էլ այժմ մենք՝ հրեշտակների միջոցով՝ փառք ու օրհնություն ենք վեր առաքում և հաշտություն ու խաղաղություն խնդրում:

Չորրորդ՝ Տիրոջ ծննդյան օրը՝ որ հրեշտակները երգեցին հոգու առավոտն էր՝ իսկ այժմ մարմնի առավոտն է՝ և մենք ենք երգում:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Փառք ի բարձրունս» -ը ատյան ելած և միաձայն երգում:

Պատասխան. -Նախ՝ սա նշանակում է՝ որ հրեշտակներն ու հովիվները միասին երգեցին:

Երկրորդ՝ Բանի մարդեղությունը թե՛ հրեաներին և թե՛ հեթանոսներին նույն պաշտոնին բերեց:

Երրորդ՝ հարությունից հետո հրեշտակները և մարդիկ համաշունչ ու համերաշխ պիտի հավիտյանս փառաբանեն Ամենասուրբ Երրորդությանը:



## Մեկնությունը Ըստ Պողոս Տարոնացու

Եգակի անվամբ Տիրոջը օրհնելուց հետո, ձայնակցելով հրեշտակների դասին, գովաբանվում է մարմնացյալ Բանը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ» ասելով (Փառք Աստծուն բարձունքներում):

Որդու համար ասվում է. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» (Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը):

Ամենակալ Հոր համար ասվում է՝ «Փառաւորեալ Հայր Սուրբ»:

Իսկ Որդու համար՝ «Տէր Աստուած Գառն Աստուծոյ»:

Ապա Սուրբ Հոգուն՝ «Տէր և Հոգիդ Սուրբ՝ որ ի փառս Աստուած. ընդ Հօր» (Տե՛ր և Սուրբ Հոգիդ Աստված, որ փառավորվում է Հոր հետ):

Այնուհետև Սուրբ Երրորդությանը դիմելով՝ ասվում է՝ «Արժանի՛ արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահե՛ա զմեզ» (Արժանացրո՛ւ, Տեր, այս օրը խաղաղությամբ անցկացնել, և առանց մեղքերի պահի՛ր մեզ):

Եվ ասելով՝ «Օրհնեա՛լ ես Տէ՛ր Աստուած հարցն մերոց», դիմվում է Երեք անձերի հավիտենական Միությանը (Օրհնյալ ես մեր հայրերի Տեր Աստված):

Ապա Հորը դիմելով ասվում է՝ «Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս Քո, Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ» (Օրհնյալ Տեր սովորեցրու ինձ Քո արդարությունը, Տեր մեզ ապավեն եղիր սերնդեսերունդ):

«Ի Քէն է Տէր՝ աղբիւր կենաց» (Տեր, Քեզանից է բխում կենդանության աղբյուրը), այսինքն՝ Հորից է բխում Սուրբ Հոգին:

«Եվ լուսով երեսաց Քոց տեսանեմք զլոյս» (Քո երեսի լույսով տեսնում ենք լույսը): Հորից ծագած լույսով, Որդու լուսափայլ տնօրինությամբ տեսանք աստվածգիտության լույսը: Այսինքն Որդով ենք տեսնում լույսը:

Այնուհետև մաղթանք Սուրբ Երրորդությանը՝ «Ծագեա՛ զողորմութիւնս Քո, որք ճանաչեն զՔեզ, Տէր» (Ծագեցրո՛ւ Քո ողորմությունը նրանց համար, ովքեր ճանաչում են Քեզ, Տեր):

Այս ամենից հետո ասվում է «Առավոտյան երգը» խաչի դիմաց, որպես թե հայտնապես խոստովանություն Խաչյալին: Եվ ապա հաջորդում են քարոզ, աղոթք, խնդրանքներ և գոհություն:

## Առավոտյան երգ

Առավոտյան երգում, որ օրվա խորհուրդն ունի, գոհություն է վեր առաքվում Ամենակալ Հորը, Ով այսպիսի սքանչելիքներով պահպանեց ու բարձրացրեց մարդկային ցեղը և արժանացրեց ամենահաղթությանը և պահում է Իր սուրբ Եկեղեցին մինչև Իր Որդու երկրորդ գալուստը:

Առավոտը Քրիստոսն է՝ որովհետև մինչև Միածնի գալուստը գիշեր էր: Իսկ Քրիստոսի գալստյամբ մեզ համար առավոտ բացվեց՝ որի համար ցնծացինք և ուրախացանք: Այժմ խայտալով աղաչում ենք Փրկչին՝ որպեսզի գալիք առավոտյան՝ այս աշխարհի գիշերից հետո՝ ազատվենք տառապանքներից և՝ մահվանից հարություն առնելով ու դեպի վեր թևելով՝ ընդառաջ ելնենք Քրիստոսին: Եվ այսպես ամեն ժամ Տիրոջ հետ լինենք՝ վայելելով անվախճան Առավոտը՝ այսինքն՝ միշտ Քրիստոսին տեսնենք:

Ուստի քահանայության համար առաքվածները վեր են առաքում ժողովրդի աղոթքները առ Աստված հաստատակամ լինելու համար Նրա պատվիրանների մեջ և վայելելով առաքելական հաղորդության շնորհները, այն է՝ այս կյանքում լինել մաքուր տաճար միասնական Սուրբ Երրորդության համար և արժանավայել երգերով ու սուրբ խորհրդով փառավորել Աստծու Միածին Որդուն: Առավոտյան երգը խաչին է նվիրվում:

## Առավոտյան երգը ըստ շաբաթվա օրերի բացատրված Հովհաննես Օձնեցու կողմից

Երկուշաբթին կարգված է ըստ Առավոտյան պաշտամունքի խորհրդի, որի ժամանակ Փրկչի երկրորդ գալստյան մասին է պատմվում: Ուստի առավոտյան ողբաձայն աղաղակում ենք՝ «Լոյս տուր, Տէր, աչաց իմոց. զի մի՛ երբեք ննջեցից ի մահ ընդ հիմար հինգ կուսանացն» (Լույս տուր, Տեր, իմ աչքերին, որպեսզի երբեք մահվան քնով չննջեմ հիմար հինգ կույսերի նման):

«Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց» (Թշնամիս թող չասի, թե՝ հաղթեցի նրան, կամ հալածիչներս ցնծան, եթե սասանվեմ) (Սաղմ. ԺԲ 5):



Իսկ երեքշաբթին՝ ըստ Երրորդ ժամի խորհրդի է կարգված, երբ Սուրբ Հոգին հեղվեց առաքյալների վրա, Ում կենարար գալուստը աչքի առաջ ունենալով՝ Եկեղեցու մանուկները աղաղակում են, ասելով՝ «Ի Քէն է, Տէր, աղբիւր կենաց, և լուսով երեսաց Քոց տեսանեմք զլոյս» (Քեզանից է, Տեր, կյանքի աղբյուրը, և Քո երեսի լույսով տեսնում ենք լույսը): Եվ թե՝ «Ծագեցո՛ւ, Տէր, Քո ողորմութիւնը պաշտոնյաներիդ և Սուրբ Երրորդությանդ երկրպագողների վրա»:

Չորեքշաբթին, ըստ վեցերորդ ժամի պաշտամունքի խորհրդի է կարգված, և պատմվում է նախահոր հիվանդության և նույն ժամին, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ խաչի վրա կրած չարչարանքներով կայացած բժշկության մասին:

Եվ այս փրկության տնօրինության խորհրդին ծանոթանալով՝ Եկեղեցու մանուկները, գոհության աղաղակ են բարձրացնում՝ ասելով՝ «Ես ասացի, Տէր, ողորմեա՛ ինձ, բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ Քեզ» (Ես ասացի. «Տե՛ր, ողորմի՛ր ինձ և բժշկի՛ր անձն իմ, ես մեղանչեցի Քո դեմ») (Սաղմ. Խ 5):

Հինգշաբթի օրը, ըստ Իններորդ ժամի խորհրդի է կարգված, և այդ ժամին էր Աստծու Միածին Որդին խաչի վրա աղաղակում՝ ասելով՝ «Էլի՛, էլի՛, լա՞մա սաբաքթանի», որ թարգմանվում է. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մարկ. ԺԵ 34): Նույն այդ ժամին լուսավորներին խավարից փարատեց, ըստ մարգարեի խոսքի՝ «Նոր առավոտ ծագեց խավարում և մահվան ստվերում նստածների համար» (հմմտ. Եսայի Թ 2): Որով լուսավորված Եկեղեցու մանուկները ձայնում են առավոտյան, ասելով՝ «Ես առ քեզ՝ Տէ՛ր՝ աղաղակեցի՝ առաւոտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ» (Ես, Տե՛ր, առ Քեզ աղաղակեցի, առավոտյան իմ աղոթքը քեզ պիտի հասնի) (Սաղմ. ՁԷ 14):

Ուրբաթ օրը ըստ տասներորդ ժամի խորհրդի է կարգված: Դա այն ժամն է, երբ արարածների Տերը իջավ գերեզման և Իր անապական մահվամբ անապականություն մեզ շնորհեց ու ազատեց դժոխքից և սատանայի գերությունից, որով փրկություն ստացած եկեղեցու մանուկները աղաղակում են՝ գոհությամբ ասելով՝ «Տէր Աստուած փրկութեան իմոյ՝ ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո» (Իմ փրկության տեր Աստված, ցերեկ և գիշեր Քեզ կանչեցի) (Սաղմ. ՁԷ): Եվ թե՝ «Մտցեն աղօթք իմ առաջի քո՝ Տէ՛ր» (Իմ աղոթքները թող գան Քո առջև, Տե՛ր) (Սաղմ. ՁԷ 3):

Իսկ շաբաթ օրը, ըստ հանգստյան աղոթքի խորհրդի է կարգված: Քանի որ շաբաթը եբրայեցերենից թարգմանվում է հանգիստ, որը նաև ժամանակների ավարտն է խորհրդանշում: Այդ օրն է կատարվում մարտիրոսների հիշատակության հանդեսը, ովքեր ըստ առաքյալի խոսքի՝ «Խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով և ցանկություններով հանդերձ» (Գաղ. Ե 24):

Խաչակից լինելով առաջին վկային՝ Խաչյալին և մեզ Ժողովողին, Ում ապավինած Եկեղեցու մանուկները, մարտիրոսների գորեղ բարեխոսություններով, աղաղակում են ողբաձայն և ասում՝ «Առաքե՛ա՝ Տէր՝ գլոյս քո եւ զճշմարտութիւն քո՝ զի առաջնորդեսցեն ինձ՝ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո» (Սաղմ. ԽԲ 3): «Ցոյց մեզ՝ Տէր՝ զողորմութիւնս քո» (Սաղմ. ՁԴ 8). և «Օգնական իմ լեր՝ Տէր» (Սաղմ. ԻԶ 9): Որպեսզի նրանով առաջնորդեն ինձ՝ մոլորյալիս ու ճշմարիտ գիտությունից շեղվածիս, և հանեն ինձ սուրբ լեռը և հարկը Քո:

Ապա հաջորդող քարոզից և աղոթքներից հետո «Երեքսրբեան» -ն ենք երգում՝ որը այստեղ կարգված է միայն ի դեմս Միածին Որդու: Եվ քանի որ այս աղոթքն առ Քրիստոս է՝ ուստի և «Սուրբ Աստված» է ասվում: Նմանապես և «Ճաշու» վերջին «Ողորմեան» և երեկոյան ժամերգության աղոթքների ընթացքում՝ որ առ Քրիստոս են ուղղված՝ «Սուրբ Աստված» -ն է ասվում: Իսկ մյուս աղոթքներում՝ որ Հորն ու Սուրբ Հոգուն են ուղղված՝ «Սուրբ Աստված» չի ասվում:

## «Սուրբ Աստված»

Այսպիսի խորհուրդներից հետո, որքան էլ նախօրոք ասածները բարձրագույն լինեն, համարձակվելով վերին զվարթունների հետ, չենք ձայնում ի դեմս Սուրբ Երրորդությանը, այլ միայն ի դեմս Միածնի՝ Աստծու Որդու, Ով Հոր և Սուրբ Հոգու հետ համխոհնականությունից առաջ էր:

Վերջին ժամանակներում մարդկանց փրկության համար մարդանալով՝ սուրբ Կույսից մեր համար խաչվեց և թաղվեց և երրորդ օրը հարություն առավ և երկինք վերացավ ու նստեց Հոր՝ Իր Ծնողի աջ կողմում:



Մովսեսը այս ամենը մարգարեական հոգով կանխագգալով՝ հրամայեց երեկոյան ոչխար զոհել, որը Քրիստոսի մահվան ժամն էր: Այնուհետև ըստ օրենքի, քահանաները գառ էին զոհում առավոտյան և երեկոյան:

Այսպիսով «Երեքսրբյան» -ը Քրիստոսին է նվիրված, ըստ Ավետարանի վկայության՝ «Եսային այս ասաց, որովհետև տեսավ Նրա փառքը և խոսեց Նրա մասին» (Հովհ. ԺԲ 41):

Պետք է ասել, որ «Երեքսրբեան» -ը երկու մասերից է կազմված: Առաջինը՝ «Սուրբ Աստուած՝ Սուրբ և հզոր՝ Սուրբ և անմահ», իսկ երկրորդ մասը տնօրինական հավելված է՝ որոնք հիմնականում տասն են:

Հարց. -Ո՞վ ասաց «Սուրբ Աստուած» -ը:

Պատասխան. -Հովսեփ Արիմաթացին: Ըստ Հռոմի Նեքտարիոս հայրապետի՝ երբ Տերը մահացավ խաչի վրա՝ Հովսեփ Արիմաթացին խնդրեց Պիղատոսից Տիրոջ մարմինը և գնաց որ իջեցնի խաչից: Եվ տեսավ, որ անկարելի է Տիրոջ մարմինը իջեցնել խաչից՝ որովհետև խոցված տեղերը փայլատակում էին: Երբ փորձեց բևեռները դուրս քաշել, մարմնից կրակ ցոլաց, որից Հովսեփը ահաբեկվեց և ետ կանգնեց ու ձեռքերը վեր բարձրացնելով, ահով ու դողով սկսեց աղոթել՝ «Սուրբ Աստուած՝ Սուրբ և հզոր՝ Սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»:

Սկզբում երբ ասաց՝ «Սուրբ Աստված», այսինքն՝ «Ես Քեզ լոկ մարդ էի կարծում, Դու Սուրբ ես», ընկավ մի բևեռը: Այնուհետև ասաց՝ «Սուրբ և Հզոր»: Այսինքն՝ «Ես Քեզ տկար կարծեցի, Դու հզոր ես», որից հետո ընկավ երկրորդ բևեռը: Եվ դարձյալ ասաց՝ «Սուրբ և Անմահ»: Այսինքն՝ «Ես Քեզ մահկանացու կարծեցի՝ Դու անմահ ես»: Այս խոսքերը երեք անգամ ասելուց հետո ընկնում են բոլոր բևեռները, և Սուրբ Մարմինը իջնում է Հովսեփի բազուկների վրա: Նա էլ, ըստ օրենքի, պատեց մարմինը ու դրեց գերեզմանի մեջ:

Սոկրատ պատմագիրը գրում է՝ որ Մեծն Իգնատիոս Աստվածազգեացը տեսնում է երկնային զորքերին և լսում նրանցից «Սուրբ Աստուած» -ը՝ և Անտիոքի եկեղեցում կարգ է սահմանում՝ որպեսզի ամեն օր առավոտյան և երկոյան «Սուրբ Աստուած՝ որ խաչեցար» խոսքերն ասվեն:

Եվ Եսայի մարգարեն տեսավ Քրիստոսին աթոռի վրա նստած՝ որը խաչն է, և լսեց «Երեքսրբեանը» (Եսայի Զ 3), որը մեզ վկայում է Հովհաննես ավետարանիչը՝ ասելով, թե այս ասաց Եսային, որովհետև տե-

սավ Նրա փառքը և խոսեց Նրա մասին (տե՛ս Հովհ. ԺԲ 41): Նրան վերջին օրերին խաչված տեսանք՝ որը և երգում ենք սրբասացությունում:

Ստեփանոսը Եսայու «Երեքսրբեան» -ը Որդու համար տեսավ (տե՛ս Գործք Է 54):

Սուրբ Աթանասը «Պատարագամատույցում» գրում է՝ «Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ Տէր զօրութեանց՝ լի են երկինք և երկիր փառօք Քո»:

Նաև Հովհաննես Ոսկեբերանը կարգեց ամեն օր երեք անգամ «Սուրբ» ասել:

Եփեսոսի ժողովում սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացի հայրապետն ընդդեմ Նեստորի ասաց «Միածին» ժամամուտը և «Սուրբ Աստուած՝ որ խաչեցար» սրբասացությունը: Եվ նույն ժողովում ավեց «Փառք ի բարձունս» -ը՝ ուր երեք անգամ է ասվում՝ «Օրհնեալ Տէր, ուսո՛յ ինձ զարդարութիւնս Քո»: Կիրակի օրերին երեք անգամ կրկնում ենք՝ «Ոչ դադարեցից օրհնել Քեզ Քրիստոս Փրկիչ աշխարհի»: Այս պատճառով, ըստ սուրբ Կյուրեղի սահմանած կարգի, ասում ենք «Սուրբ Աստուածը» ի դեմս Որդու:

Նաև Պետրոս Անտիոքացին և Տիմոթեոս Ալեքսանդրացին Հուստինիանոս կայսեր հրամանով հաստատեցին «Սուրբ Աստուած, որ խաչեցար» ասելը: Ասորիները նույնպես մինչև այսօր «Սուրբ Աստուած՝ որ խաչեցար» են ասում:

## Մեկնություն

Թեպետև հրեաները Քեզ լոկ որպես մարդ սպանեցին՝ Դո՛ւ Սուրբ Աստված ես և ոչ սոսկ մարդ, որ մարդացար սուրբ Կույսից: Թեպետ Քո կամքով տկարացար և Քեզ հանձնեցիր խաչողների ձեռքը՝ Ամենազոր ես, որ հաղթեցիր բանսարկուին: Թեպետ մարմնով մեռար և գերեզմանի մեջ դրվեցիր՝ Սուրբ՝ Անմահ ու Անապական Աստված ես, որ անմահացրիր մեզ Քո մարմնանալով: Դո՛ւ՝ որ Քո կամքով խաչվեցիր մեզ համար՝ նույն սիրով ողորմյա մեզ:

Երեք անգամ ասելով՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ և Հզոր», Հոր և Սուրբ Հոգու կամքի միությունն ենք հայտնում Որդու խաչվելու կապակցությամբ: Իսկ ասելով՝ «Սուրբ և անմահ, որ վասն մեր խաչեցար,



ողորմիր», հասկանում ենք, որ Հոր և Սուրբ Հոգու կամքով, աշխարհին կյանք տրվեց:

Իսկ երեք անգամ «խաչեցար» ասելով՝ ամրանում ենք հրեղեն պարսպով, որը պատում է Եկեղեցին: Եվ փոխանակ գառների զոհաբերության՝ ըստ հին օրենքի, որ մատուցվում էին ամեն առավոտ և երեկո, այժմ Եկեղեցին մատուցում է իր չարչարանքների պտուղը՝ խոստովանելով Փրկչի չարչարանքները: Այսպես ամեն օր հիշում ենք Նրա երախտիքները՝ որ մեզ համար խաչվեց, քանի որ խաչը Քրիստոսի փառքն ու պսակն է և քրիստոնյաների պարծանքը և ոչ թե նախատինքը: Ըստ Սողոմոնի՝ «Նայեցեք արքայի պսակին՝ որ նրանով պսակվեց»: Նաև Ինքն է ասում՝ «Հա՛յր, փառավորի՛ր Քո Որդուն» (հմմտ. Հովհ. ԺԲ 28)՝ և ձայն լսում երկնքից՝ «Փառավորեցի» (հմմտ. Հովհ. ԺԲ 28)՝ խաչը ի նկատի ունենալով: Առաքյալը ասում է՝ «Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. Զ 14):

Այս ամենը նախապես իմանալով՝ Սուրբ և Առաքելական Եկեղեցին ասում է. «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ»:

Իսկ սրբասացությանը անմիջապես հաջորդող «Փառավորյալ»-ը Թովմաս առաքյալն ասաց Աստվածածնի վերափոխման ժամանակ:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Սուրբ Աստված» -ը գլխաբաց ասում:

Պատասխան. -Ոչ միայն գլուխը չպետք է ծածկել՝ այլև հարկավոր է ձեռքերը վեր բարձրացնել Հովսեփ Արիմաթացու օրինակով: Նույն կերպ պետք է վարվել նաև «Հայր մեր» ասելիս և սրբություններին նայելիս, ըստ հետևյալ խոսքի. «Ամեն տղամարդ, երբ աղոթքի կանգնի կամ մարգարեանա և գլուխը ծածկած պահի, անպատվում է իր գլուխը» (Ա Կորն. ԺԱ 4): Ավետարանի ընթերցման ժամանակ դարձյալ պետք է գլխաբաց լինել: Գլխաբաց պետք է լինել նաև՝ երբ քահանան աղոթում է կամ պատարագում՝ երբ սարկավագը քարոզում է՝ խնկարկում կամ ընթերցում: Սա ունի այն խորհուրդը, որ Ծածկագետի համար մեր ամեն ինչը բացահայտ է:

Դարձյալ սրանով հայտնում ենք, որ մեր միտքն ու հոգին սուրբ ենք պահում Տիրոջ առջև: Ինչպես Քրիստոս խաչի վրա էր, այնպես էլ Նրա օրինակով մենք գլխաբաց տարածում ենք մեր ձեռքերը:

Սակայն կանայք չպետք է բացեն իրենց գլուխները, այլ ընդհակառակը՝ եկեղեցում պետք է ծածկեն, ըստ հետևյալ խոսքի. «Եվ ամեն կին, երբ աղոթքի կանգնի կամ մարգարեանա գլխաբաց, անպատվում է իր գլուխը» (Ա Կորն. ԺԱ 5): Իսկ աբեղաները իրենց գլուխը աղոթելիս չեն բացում, որովհետև աբեղայությունը կրոնավորություն է՝ և կրոնավորը պարտավոր է ծածկել իր բոլոր զգայարանները: Աբեղան իր գլուխը բացում է միայն պատարագելիս:

## «Մանկունք*»

Այս ամենից հետո «Մանկունք» -ն է ասվում՝ քանի որ Քրիստոսով՝ մկրտությամբ՝ ապաշխարությամբ և արյամբ մանկացանք՝ իսկ ապագայում՝ նաև հարությամբ:

Այստեղ մանկունք բառը անմեղ իմաստով է գործածված՝ այսինքն՝ մենք՝ որ մեղքերի հնությունից նորոգվեցինք՝ ըստ Պետրոս առաքյալի՝ եղանք «որպես նորածին մանուկներ և փափագողներ անխարդախ կաթին» )տե՛ս Ա Պետ. Բ 2(:

Տերը նույնպես այս իմաստով աշակերտներին ծովեզերքում մանուկներ կոչեց՝ քանի որ նրանք Սրբից սրբվեցին և մանկացան (Հովհ. ԻԱ 5) ըստ այն խոսքի՝ թե՝ «Սրբի հետ սուրբ կլինես՝ Տե՛ր՝ անարատ մարդու հետ՝ անարատ: Ընտրյալների հետ ընտրյալ կլինես» (Սաղմ. ԺԷ 26՝ 27):

---

* Մարդու ծնունդից մինչև յոթ տարին ընկած ժամանակահատվածը կոչվում է «տղայության» հասակ: Յոթից մինչև տասնչորս տարեկան հասակը՝ «մանկություն»: Տասնչորս տարեկանից մինչև քսանյոթ տարեկանը՝ պատանեկություն: Այնուհետև, մինչ երեսունհինգ տարեկանը կոչվում է կատարյալ հասակ, իսկ մինչև հիսուն տարեկանը՝ երիտասարդություն: Հիսուն տարեկանից մինչև յոթանասուն տարեկանը կոչվում է ծերություն: Ծերությունից մինչև մահ՝ զառամություն: Սակայն «Մանկունք» բառը վերաբերվում է և ամեն հասակի մարդկանց, որովհետև, երբեմն Սուրբ Գրքում «մանկունք» ասելով՝ դիմում են կատարյալ հասակ ունեցող այրերին, օրինակ՝ «Օրհնեցէք մանկունք զՏէր..»: Երբեմն էլ տկարամիտներին կամ թերահավատներին են այսպես անվանում: Մանուկ են ասում երբեմն նաև նոր մկրտվածներին, ովքեր Քրիստոսով անմեղացան ու մանկացան, ըստ հետևյալ խոսքի՝ «Իբրև մանուկներ անխարդախ կաթին փափագեցեք» (Եբր. Բ 2): Երբեմն նաև նրանց են ասում, ովքեր արիացան ապաշխարության գործերով և նրանով նորոգվեցին: Եվ այս պատճառով Հիսուս առաքյալներին մանուկներ կոչեց:



Նաև Պողոսն է ասում՝ «Նա՝ ով մերձենում է Տիրոջը՝ մեկ հոգի է դառնում նրա հետ» (Ա Կորն. Զ 17): Իսկ Քրիստոս հաստատապես ասում է՝ «Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես՝ երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. ԺԸ 3):

Այս օրինակով ճանաչում ենք ինքներս մեզ. քանի դեռ անծանոթ էինք Աստծուն՝ մեղքերով ու կռամոլությամբ Տիրոջից տարագրված՝ արժանի չէինք Նրան օրհնելու: Բայց երբ մենք ճանաչեցինք Աստծուն՝ մանավանդ որ Նրանից իսկ ճանաչվեցինք՝ դրանից հետո Քրիստոսի հավատով ու ավազանի մկրտությամբ սրբվեցինք ու եղանք նորածին երեխաների պես՝ նորափետուր զարդարված: Այժմ արժանի ենք Նրան օրհնելու՝ ինչի համար հորդորում է մանուկներին Աստծուն օրհնաբանել:

ԾԺԲ սաղմոսը մանկացյալների մկրտությամբ հրամայում է օրհնել Հորը՝ «Օրհնեցէ՛ք՝ մանկունք՝ զՏէր» (Սաղմ. ԾԺԲ 1), ովքեր ողողվեցան Պարգևատուի շնորհներով՝ Տիրոջ՝ Որդու անունով, որ մեզ համար բազմանուն է կոչվում:

## «Սիրեցի»

«Մանկունք» -ից հետո «Սիրեցի» -ն է ասվում:

Այս սաղմոսը (ԾԺԴ)՝ որ ննջեցյալների թաղման ժամանակ ենք երգում՝ այն է սովորեցնում՝ թե նրանք՝ ովքեր կենդանության օրոք սիրեցին Աստծուն՝ այժմ մահվամբ դուրս են ելնում այս աշխարհից ու արժանանում Կենդանիների Երկրին: Նմանապես և մարտիրոսները՝ Քրիստոսին անմնացորդ սիրով սիրողները՝ մահվանից հետո Նրանից պսակ են ստանում: Մենք էլ Մարտիրոսաց տոնին այս ենք ասում՝ որպեսզի պսակակից դառնանք նրանց պսակին:

Հարց. -Ինչո՞ւ ենք «Բանից իմոց» սաղմոսը ապաշխարության օրերին երգում:

Պատասխան. -Այս սաղմոսի նպատակը թշնամիներին հաղթելն է՝ այսինքն՝ մեղքերին ու սատանային՝ մահվանն ու դժոխքին: Իսկ եթե մեկը հաղթում է թշնամուն՝ պսակի է արժանանում՝ ինչպես վերջում է ասվում. «Տէր որպէս զինու հաճութեամբ Քով պսակեցեր զնոսա» (Տե՛ր՝ Դու պսակեցիր մեզ քո ուժիդ հովանավորությամբ) (Սաղմ. Ե 13):

Սուրբ Մարտիրոսներից ոմանք անվանի զորականներ են եղել՝ ինչպես՝ Սուրբ Գևորգը՝ Սուրբ Սարգիսը՝ Սուրբ Մերկերիոսը՝ Սուրբ Թեոդորոսը և ուրիշներ: Սրանց տոներին ևս այս սաղմոսն է ասվում՝ որովհետև ոչ միայն մարմնավոր թշնամուն հաղթեցին՝ այլև՝ հոգևորին՝ այսինքն՝ աներևույթ բանսարկուին: Ինչպես առաքյալն է ասում՝ «Որովհետև մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ՝ այլ՝ իշխանությունների՝ պետությունների՝ այս խավար աշխարհի տիրակալների և երկնքի տակ եղող չար ոգիների հետ» (Եփես. Զ 12): Ուստի այս սաղմոսով աղաչում ենք՝ որ մարտիրոսների աղոթքներով լինենք թշնամուց պաշտպանված ու հաղորդ՝ իրենց փառքին:

## Արարչական երգ

Սրանցից հետո «Արարչական» -ն ենք երգում՝ ի հիշատակ Աստծու վեցօրյա արարչագործության՝ որն անհրաժեշտ է ամեն օր հիշատակել՝ և նրանով հավատացյալներին հիշեցնել՝ որ այս աշխարհն աներևույթ և անկազմ էր, և խավար էր տիրում անդունդի վրա: Եվ երբ Աստված Իր բարերարությամբ կամեցավ՝ Իր ամենակարող զորությամբ աներևույթը՝ երևացողի՝ անպատրաստը՝ պատրաստի՝ խավարը՝ լույսի և անգոյությունը՝ գոյության փոխեց: Ըստ այս օրինակի՝ մենք նույնպես մեղքով խավարամած էինք և ճշմարիտ գոյությունից զուրկ՝ որովհետև ասում է, թե մեղավորը ոչինչ է:

Իսկ երբ լսում ենք Աստծու արարչագործության մասին՝ հույսով առլեցուն դավանում ենք Աստծուն՝ ասելով. «Ամենակալ մեծ անուն Տէր՝ որպէս յոչնչէ արարեր զամենայն արարածքս. կարող ես և զիս մեղօք ոչնչացեալս դարձուցանել յառաջինս իմ էութիւն՝ քանզի զիր ինչ յայլմէ յայլ փոխարկել դիւրին է Քեզ, քան զայն՝ զոր յոչնչէ ստեղծանես»: (Ամենակալ Մեծանուն Տե՛ր՝ ինչպես ոչնչից արարեցիր բոլոր արարածներին՝ այնպես էլ կարող ես և ինձ՝ մեղքերով ոչնչացածիս վերադարձնել իմ առաջին էությանը՝ քանզի մի բան մեկ այլի փոխարկելը ավելի դյուրին է Քեզ՝ քան այն, որ ոչնչից ես ստեղծում): Այս մտքով ենք երգում առ Աստված՝ որ մեր սկզբնական մաքրությանը գանք՝ նորոգվենք և նորաստեղծ լինենք:



Այս նպատակով է կիրակի օրերին՝ արձակման պահին, բժշկության Ավետարանն ընթերցվում՝ որը նշանակում է՝ թե մեր մարմնական ցավերի բուժման հետ նաև մեր հոգևոր հիվանդությունը՝ որը մեղքն է՝ ապաքինեց: Ինչպես Դավիթն է ասում՝ «Ով քավություն է տալիս քո մեղքերին՝ բժշկում է ախտերը քո բոլոր» (Սաղմ. ՃԲ 3):

«Բժշկության Ավետարանին» ընդառաջ գնալով՝ ասվում է ՃԺԲ սաղմոսը՝ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ՝ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան», որը աշակերտների հետ Տիրոջ հանդիպման խորհուրդը ունի, երբ Տիբերիական ծովում նավարկելիս տեսան իրենց Տիրոջը՝ մեռելներից հարություն Առածին, և ուրախությամբ ընդառաջ գնացին Նրան:

Սրանցից հետո մաղթանքներով և աղոթքներով ավարտում ենք Առավոտյան ժամերգությունը՝ որ սահմանված է ի դեմս Որդու:

# ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Արևագալի ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Սուրբ Հոգու և ի դեմս Քրիստոսի հարության, որ երևաց աշակերտներին

Արևագալի ժամերգության ճիշտ ժամը արեգակի ծագման պահն է: Այն կատարվում է ըստ մարգարեի հետևյալ խոսքի. «Սաղմոս երգեցե՛ք Տիրոջը: Ճանապարհ բացեք Նրա համար, Ով նստում է երկինքների երկնքում, արևելյան կողմում», որովհետև Տեր է (Սաղմ. ԿԷ 3334):

«Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան՝ զի յառաջ քան զարեւ է անուն նորա» (Տիրոջ անունը կօրհնվի հավիտյան, քանզի արևից հին է անունը Նրա) (Սաղմ. ՀԱ 17): Սրանով Տիրոջ անվախճան և անսահման լինելն է հայտնում: «Արևելից» ասելով երկնավորների և երկրավորների օրհնությունն է հայտնվում:

Եվ որովհետև սկզբնաչար օձը առաջին խաբեությունը արեց արևի ծագման պահից մինչև երրորդ ժամը, անհրաժեշտ է այս ժամին հաստատվել աղոթքներով, որպեսզի նրա նենգամիտ խաբեության պատրանքներից մենք ևս չկործանվենք:

Նաև՝ այս ժամին պիտի մարդկային ամբողջ ցեղը հասնի Անաչառ Դատավորի ատյանին` սպասելով հավիտենական հատուցմանը ըստ գործերի, հետևապես այս ժամին պետք է աղոթել, որպեսզի ողորմությամբ հասնենք անճառելի բարիքների հատուցմանը և փրկվենք վերահաս սպառնալիքից՝ անխնայելի սպանությունից, որի մասին ասում է մարգարեն՝ «Առավոտներն սպանում էին երկրի բոլոր մեղավորներին» (Սաղմ. Ճ 8):

Արևագալի ժամի աղոթքները Քրիստոսի երկրորդ գալստյան և կիրակի օրվա առաջին ժամին գերեզմանից մարդկանց հարության խորհուրդը ունեն, որովհետև այդ ժամին է լինելու մարդկային բնության



հարությունը, չնայած որ, ըստ տերունական առակի, գիշերն է այդ ասվում: Այլ, Նա է Կյանքի Առավոտը և արդարության Արեգակի ծագման Սկիզբը, որը լինելու է հարության Մեծ օրվա առաջին ժամին: Ենթադրվում է, որ այս ժամին Կենարարի ձեռքով ստեղծվեց առաջին մարդը, ուրեմն հաջորդ անգամ, այդ նույն ժամին մարդիկ գերեզմանից պիտի հարություն առնեն:

Այս խորհրդով ներկայումս շատերն են ընթանում՝ առաքելական խոստմանը ապավինած սպասելով՝ «Փող պիտի հնչի և ի Քրիստոս ննջածները առաջինը հարություն պիտի առնեն», ապա և մենք պիտի նորոգվենք (հմմտ. Ա Թես. Դ 15):

Նույն է ասում նաև մեր պսակակիր հայրապետը՝ սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ըստ տերունական առակի մեռելների հարությունը բույսերի և տունկերի հետ համեմատելով՝ «Ձմեռվա անցնելով բողբոջում են բույսերը և տնկիները և լուսաբացից առաջ գիշերը թռչունները ծլվլում են»: Ինչպես գարնանը բույսերը կանաչում և դալարում են, այնպես էլ մարդիկ, պիտի ելնեն գերեզմանից: Որովհետև, ինչպես ձմռանը հաջորդում է գարունը, այնպես էլ մոտ է և սկիզբը առավոտի:

Այս պատճառով զգաստացած մտքով աղոթում ենք այս ժամին՝ վերստին նորոգման և մեռելներից հարության ակնկալությամբ: Եվ լուսեղեն հանդերձներով, զվարթարար լույսի երամով, զվարթաթռիչ վեր ենք սլանալու՝ հանդիպելու համար ամպերով Երևացողին և յուրաքանչյուրիս ըստ արժանվույն Հատուցողին. ամեն:

Ուստի, այս ժամին սահմանվեց ընդհանրական աղոթք, որպեսզի արժանանանք Մեծ Առավոտի լույսի ծագմանը և առանց ամաչելու տեսնենք փառքի Տիրոջը: Եվ հավիտենականության մեջ, յոթերորդ դարի ավարտին և ութերորդ դարի սկզբին, որը գիշերվա ավարտին լինելու է Փեսայի գալուստով, բաժանվելու են ոչխարները այծերից, և զատվելու են որոմները ցորենից: Լինելու է մեծ և երևելի օր, ըստ մարգարեների դավանության, երբ մենք պետք է դեմ հանդիման կանգնենք Քրիստոսի ատյանի առջև, որպեսզի յուրաքանչյուրս՝ հոգով ու մարմնով, ըստ չար կամ բարի գործերի՝ ընդունենք արժանին:

Այդ օրը, որպես արքայության արեգակներ, պիտի փայլեն արդարները երկնքում, ուր աստվածացածների և թագավորողների մեջ Ինքը՝ Աստված է արժանիներին բաշխելու երանությունները:

*Որին և մենք արժանանաք, այդ խոստացյալ բարիքներին, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, որին վայելում է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

*Հարց. –Ինչո՞ւ ենք Արևագալի ժամերգությունը Սուրբ Հոգուն հղում:*

*Պատասխան. –Որովհետև ինչպես Քրիստոս իմանալի Արևը եղավ մեզ համար և մեզ խավարից դեպի լույս փոխեց՝ նմանապես այժմ Սուրբ Հոգուն ենք աղոթում՝ որպեսզի գործակից լինի իր Փառակցին և արեգակի զգալի լույսի ծագման հետ միասին մեր անձերում շնորհների իմանալի լույսը ծագեցնի: Այս ամենը մեզ հանգամանորեն սովորեցնում են սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի երգերը:*

*Դարձյալ՝ երկրորդ ժամերգության աղոթքներից հետո այստեղ երրորդ ժամերգության պահին երեք փոխ է ասվում՝ որոնք են՝ «Աղաղակեցէք» –ը (Սաղմ. ՂԹ) ՝ «Աստուած՝ Աստուած իմ» –ը (Սաղմ. ԿԲ) և «Տէր հովուեսցէ» –ն (Սաղմ. ԻԲ):*

*Այսպիսով իմանում ենք՝ որ զգալի խավարի անցնելով՝ անցավ և իմանալի խավարը՝ այսինքն՝ կռապաշտությունն ու մեղքը՝ որովհետև «Մինչ երեխա էինք. բնության տարերային ուժերին էինք ծառայում» (Գաղատ. Դ 3)՝ գնում-գալիս էինք անխոս կուռքերի մոտ և «Ծառայում էինք նրանց՝ որոնք ի բնե աստվածներ չէին» (տե՛ս Գաղ. Դ 8): Այժմ դարձել ենք ճշմարիտ Հովվին ու մեր հոգիների տեսուչին:*

*Այնուհետև ասվում է ՂԹ սաղմոսը. «Աղաղակեցէ՛ք՝ առ Տէր ամենայն երկիր՝ Ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ» (Աղաղակեցե՛ք Տիրոջը՝ երկրի բոլո՛ր բնակիչներ՝ և ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությամբ» (տե՛ս Սաղմ. ՂԹ 2): Եւ քանի որ Քրիստոսի հավատին եք եկել՝ ապա հասնելու եք անվախճան փառքին: Քանզի ով Տիրոջն է ծառայում, ազատվում է մեղքերից՝ իսկ «Ով մեղք է գործում՝ մեղքի ծառան է» (տե՛ս Հովհ. Ը 34): Մոտեցե՛ք լույսին՝ որպեսզի լույսի որդիներ լինեք: Այս մտքով ենք «Աղաղակեցէ՛քն» ասում:*

*Սրանից հետո ասվում է ԿԲ սաղմոսը. «Աստուա՛ծ՝ Աստուա՛ծ իմ՝ ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեցաւ առ Քեզ հոգի իմ», (Աստվա՛ծ՝ Աստվա՛ծ իմ՝ ես առավոտից քեզ եմ դիմում՝ հոգիս ծարավ է քեզ) (Սաղմ. ԿԲ 2): Այս սաղմոսը սրբերին կարոտելու համար է գրված՝ երբ*



*զբաղմունքներից և մարմնական փափկությունից դուրս գալով սկսում ենք մտահայեցողությամբ մոտենալ Աստվածգիտությանը՝ տեսնում ենք Քրիստոսին՝ Հայր Աստծու աջ կողմում՝ շրջապատված հրեշտակների բազմությամբ և վախճանված արդարների հոգիներին՝ Նրա հետ անվախճան կյանքի անպատում փառքերի ու հարազվարճ ցնծությունների մեջ: Հավատի աչքերով այս տեսնելով՝ ասում ենք՝ «Արդա՛ր՝ ես ծարավ եմ»: Նրանց հետ միասին և մենք՝ մարմնական ցանկությունից վերստին սթափված՝ առավոտից դիմում ենք Աստծուն և բացում ենք մեր բերանները՝ որպեսզի Նա հագեցնի մեր հոգիների ծարավը: Նման խոսք նաև Դավիթն է ասում մեկ այլ առիթով՝ «Բա՛ց զբերան քո և լցից զդա» (Բա՛ց բերանդ՝ և ես պիտի լցնեմ այն) (Սաղմ. Ձ 11):*

*Վերջում «Տէր հովուեսցէ» –ն է ասվում: Բանն այն է՝ որ առավոտը գիշերվա վերջն է ու ցերեկվա բոլոր գործերի սկիզբը՝ որն ուղղում է դրանց ընթացքը՝ ուստի Տիրոջից առաջնորդություն ենք խնդրում դրանց համար: Այդ իսկ պատճառով այնուհետև ասում ենք՝ «Տէ՛ր, ուղղե՛ա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան» (Տե՛ր՝ ուղղի՛ր մեր քայլերը դեպի խաղաղության ճանապարհները) և այլն ըստ կարգի:*

*Գիտենք՝ որ այս սաղմոսը չորս փոխերից է բաղկացած: Ինչպես և «Տէր զի բազում» –ը՝ որ առաջին ժամերգության ժամանակ է ասվում: Առաջինի համար վերն արդեն նշել ենք՝ որ նրա չորս փոխերը համապատասխանում են մարդու չորս հասակներին և օրվա չորս մասերին: Սա ևս նույն խորհուրդն ունի: Սաղմոսի վերջին երկու տները՝ «Տուր զօրութիւն ծառայի քոյ. Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն» (Զորությու՛ն տուր քո ծառային: Թող ատելիներն իմ տեսնեն ու ամոթահար լինեն) ի դեմս խաչին ենք ասում և խնդրում՝ որ խաչի նշանը մեր հոգիների ու մարմինների պահապանը լինի:*

# ՃԱՇՈՒ ԵՐՐՈՐԴ ԺԱՄ

Ճաշու երրորդ ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Սուրբ Հոգու և նախամոր ճաշակման

*Զորրորդ ժամերգությունը, որը նաև Ճաշու Առաջին Ողորմյա է կոչվում, Սուրբ Հոգուն է ուղղված և կատարվում է Երրորդ ժամին, որովհետև Նա այդ ժամին իջավ առաքյալների վրա:*

*Այս ժամին սահմանված է ընդհանրական աղոթք նաև նախահայր Ադամի գործած հանցանքի, ինչպես և նույն ժամին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչի վրա կրած չարչարանքներով կատարված բժշկության համար, որովհետև՝ «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան» (Ա Կորն. ԺԵ 22)՝ յուրաքանչյուրը ըստ իր կարգի:*

*Այս ժամին Տերը ստեղծեց Ադամին ու Հոգու փչմամբ շնորհներ պարգևեց նրան: Նաև՝ մարդու առաջին անգամ մեղքերով պատվելը երրորդ ժամին եղավ՝ օձի՝ Եվային տված մահաբեր խրատով: Եվան էլ, բանսարկուի խոսքերից հրապուրվելով ու խաբվելով, ցանկացավ ճաշակել արգելված պտղից, որով և զրկվեց Սուրբ Հոգու շնորհներից: Իսկ էմմանուելը, մեր կերպարանքով, մեր մեղքերի ծանրությամբ բեռնավորված, նույն ժամին գնաց կառափնատեղի և խաչը բարձրացավ, որպեսզի բարձրացնի ընկածներին:*

*Որ ժամին հանցանք գործեց առաջին Ադամը և հանցանքից հետո մնաց դրախտում, նույն ժամին և նույնքան ժամանակ էլ Քրիստոս չարչարվեց խաչի վրա՝ բժշկելու համար Ադամի վերքերը: Ըստ Մարկոս ավետարանչի՝ Քրիստոս երրորդ ժամին հրեաների կողմից կապվեց և այս ժամին խաչին բևեռվեց. «Երրորդ ժամն էր, երբ Աստծու Միածին Որդուն խաչեցին» (հմմտ. Մարկ. ԺԵ 25):*

*Եվ բևեռված խաչին՝ ոտքերը և ձեռքերը առաքինաբար տարածեց՝*



*բանսարկուի չար խորհրդով մոլորված նախաստեղծների՝ դեպի մահաբեր ծառը հանդուգն ընթացքի համար: Նաև Իր մաքրագործող չարչարանքներով հանցանքների ձեռագիր կտակը խափանեց և բնության ապականությունը խաղաղացրեց, որ այն ժամանակ օձի սնուցած պտղով դղրդաց:*

*Այս ամենից իմանում ենք՝ որ ժամը ժամի փոխարեն հատուցեց՝ չար ժամի դիմաց բարին կարգեց և դրանով մեր մեղքերը բժշկեց, ըստ Հոբի այն խոսքի, թե՝ «Բազեն թևերը տարածելով կանգնում է օդում՝ անշարժ դիտելով հարավի կողմը»՝ հափշտակելու մեզ մահվանից դեպի կյանք (Հոբ ԼԹ 26): Որը մարգարեական աչքով նախապես տեսավ երանելի Դանիելը՝ երրորդ ժամին բացելով իր տան արևելյան կողմի պատուհանները, և նայելով Երուսաղեմի կողմը՝ աղոթում էր գերությունից ազատվելու համար, տեսնելով Աստծու Միածին Որդուն՝ Նրան, Ով Երրորդ ժամին, բազուկները խաչի վրա տարածելով գերիների ստվար հավաքում արեց (տե՛ս Դանիել Զ 10):*

*Հետևապես ընկած առաջին մարդը վերքերի բժշկությունն այս ժամին ստացավ:*

## Սուրբ Հոգու գալուստը

*Ապա հիսուն օր անց, երբ Պենտեկոստեի օրերը լրացան՝ Երրորդ ժամին տեսնում ենք Սուրբ Հոգու շնորհները՝ հեղված առաքյալների վրա:*

*Քրիստոսի համբարձումից հետո սուրբ առաքյալները սուրբ վերնատանն էին և՝ Տերունական խոստման համաձայն՝ Սուրբ Հոգու գալստյանն էին սպասում: Հանկարծ երրորդ ժամին Սուրբ Հոգի Աստված իջավ առաքյալների խմբի վրա: Ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում «Գործք առաքելոց» -ում. «Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. և լցրեց ամբողջ այն տունը՝ ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ՝ նման բոցեղեն լեզուների՝ որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա» (Գործք Բ 2-3): Ապա Պետրոս առաքյալը, ի պատասխան ծաղրողների ասաց. «Սրանք հարբած չեն՝ ինչպես դուք եք կարծում՝ քանի որ դեռ երրորդ ժամն է» (Գործք Բ 15): Այս պատճառով օրվա երրորդ ժամին ենք սկ-*

սում աղոթել Սուրբ Հոգուն:

Երրորդ ժամին առավել պատկառանքով պետք է աղոթել, որպեսզի շնորհ գտնենք Կենագործողի առջև: Կանոն է սահմանված առաքյալների կողմից այս ժամին պատարագել Քրիստոս, որովհետև այս ժամին պիտի կայանա մեղավորների հանդեպ Արդար Դատավորի վճիռը, ինչպես որ նրանք վճիռ կայացրին Անմահ Թագավորի համար:

Ապա, այս ժամի աղոթքներում, հիրավի, երկյուղելով խնդրում ենք Սուրբ Հոգուն, որպեսզի մեզ առաջնորդի դեպի բարության երկիրը, որից զրկվեցինք չարի հնարքներով, և Միածին Բանը նույն ժամին Իր գալստյամբ ծագի արարածներիս մեջ, որպեսզի ոչ ոք անմասն չմնա և չզրկվի փրկությունից: Սա է Երրորդ ժամին աղոթելու պատճառը:

Պետք է աղոթել, որպեսզի փրկվենք պատժից՝ հոգուն և մարմնին ուղղված վերահաս վտանգներից, և իր ժամանակին գտնենք ողորմություն Նրանից, Ով օրհնյալ է հավիտյան. ամեն:

## Սուրբ Հոգու շնորհները ըստ Մատթեոս Դպիրի

Վերնատուն իջնելով՝ Սուրբ Հոգին վեց տեսակի շնորհներով զարդարեց Տիրոջ առաքյալներին.

Նախ՝ մեղքերից մաքրեց նրանց:

Երկրորդ՝ լուսավորեց նրանց մտքերը՝ որպեսզի Աստվածաշունչ մատյանն առանց ուսանելու ու ընթերցելու կատարելապես իմանան:

Երրորդ՝ որպեսզի ամենուրեք սքանչելիքներ գործեն. մեռելներին հարություն տան՝ կաղերին բժշկեն՝ ինչպես և պատմում է Ղուկաս ավետարանիչը ի ծնե կաղ մարդու մասին՝ որին երբ սուրբ Պետրոս առաքյալը ասաց՝ «Հանուն Նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կաց ու քայլի՛ր» (Գործք Գ 6)՝ իսկույն վեր կացավ ու քայլեց: Քայլում էր ու վազում և օրհնում Աստծուն: Ուրիշ բազում հրաշքներ էլ գործվեցին առաքյալների միջոցով: Ղուկասը մեկ ուրիշ տեղում վկայում է. «Եվ առաքյալների ձեռքով բազում նշաններ ու զարմանալի գործեր էին լինում ժողովրդի մեջ» (Գործք Ե 12):

Չորրորդ՝ առանց լսելու և ուսանելու խոսում էին բոլոր ազգերի լեզուներով՝ «Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ



լեզուներով՝ ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք Բ 4):

Հինգերորդ՝ անխզելի սիրով միացան Քրիստոսին՝ և սա հայտնի է նրանից՝ որ անտանելի չարչարանքներ էին կրում Նրա անվան համար ու չէին հրաժարվում Նրա սիրուց՝ ինչպես որ առաքյալն է ասում՝ «Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղություննե՞րը՝ թե՞ անձկությունը՝ վտանգնե՞րը՝ թե՞ չարչարանքները... չեն կարող բաժանել մեզ այդ սիրուց՝ որ կա մեր Տեր Քրիստոս Հիսուսով» (տե՛ս Հռոմ. Ը 35՝ 39):

Նրանք՝ ովքեր Քրիստոսի չարչարանքների ժամանակ թողեցին Նրան ու փախան՝ Սուրբ Հոգին ընդունելուց հետո զորավոր եղան չարչարանքներում՝ բանտերում գանահարվելիս և այլուր:

Վեցերորդ՝ անվախ ու աներկյուղ էին քարոզելիս և համարձակ ու անվեհեր՝ թագավորների ու բռնակալների հետ խոսելիս: Այսպիսով առաքյալների վրա բազում պարգևներ հեղվեցին՝ իսկ նրանց միջոցով էլ մեր՝ հավատացյալներիս վրա:

# ՃԱՇՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄ

Ճաշու Վեցերորդ ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Հոր Աստծու և ի դեմս Աստծու Որդու չարչարանքների և խաչելության

Հինգերորդ ժամերգությունը Միջին ողորմյան է ՝ պատարագը, և կատարվում է վեցերորդ ժամին ի դեմս Հոր, որ դեպի խաչ առաքեց Որդուն: Նաև Որդուն ենք աղոթք ուղղում, որ խաչվեց մեզ համար:

Եվ Մովսեսը վեցերորդ ժամին պղնձյա օձը բարձրացրեց Սինա անապատում՝ Հիսուս Փրկչի օրինակով:

Այս ժամին Երկրորդ Ադամը «Իմանալի դրախտը» մտավ՝ որը սուրբ Աստվածածինն է, և հղացավ նրանում:

Եվ այս ժամին Տերը երևաց տասնմեկ աշակերտներին ու կերավ նրանց հետ, այն օրը, երբ կամեցավ երկինք համբառնալ:

Քանի որ Խոսքը մեր միջով ճանապարհվեց, ինչպես ձորի խորքերից քարակերտ աստիճաններով վեր բարձրանալով դեպի աստվածային վարդապետության Ձիթենյանց լեռը՝ մոտ լինելու համար Կենաց Խոսքին, և ուշադրությունը սևեռելով այնտեղ, ուր Աստծու տաճարն է, և պաշտվում է Ճշմարտությունը, և երկնայինների համար անվերջ տոնախմբությունն է, ուր չկա վիշտ և տրտմություն, և անսպառ ուրախություն է, ու անճառ Լույսի ճառագում:

Այնտեղ՝ դրախտում, հրճվալից ուրախության մեջ էր բնակվում Ադամը նախքան վեցերորդ ժամը: Եվ այդ նվիրական երկրից զրկվեց, որովհետև իր անհնազանդությամբ և ճշմարտության դեմ ըմբոստացողի խրատով ու խաբեությամբ այս ժամին դրժեց պատվիրանն ու ճաշակեց պտղից, որից մերկացած ու խավարածածկ տերևով պատված մնացին՝ իրենց խղճմտանքից դատապարտված, ու մեղքին ծառա եղան, որի համար յոթանասուն անգամ յոթ տրտմություններ ժառանգեց և բազմաթիվ ցավեր կրեց որպես պատիժ: Եվ ինչպես տենդով հիվանդ, հոգին ասես դուրս էր ելնում ու սիրտը մաշվում էր: Նրա ոտքերի և ձեռքերի հոդերը անշարժ էին բարի գործերի, իսկ լեզուն լուռ էր ապաշխարության խոստովանության համար:



Եվ ինչպես մեռած մարդն է անզգա շրջապատի նկատմամբ, այնպես էլ առաջին մարդը խավարազգաց խորհրդով ամփոփված՝ կեսօրին, ինչպես կեսգիշերին, չհիշելով անցածը և չհոգալով ապագայի մասին, տարակուսած ու տագնապած հոգով, Տիրոջ Խոսքի հիշողություններից խոցված, մանավանդ կրելով մահվան երկյուղը այն խոսքից, թե՝ «Պիտի մեռնես»՝ չէր իմանում՝ ինչ է անում: Որովհետև իր կարճամտությամբ ընկավ անօրենության խորխորատը և մահը գերադասեց Աստծու հանդիմանությունից:

Որի համար Հոր Խոսքը՝ Միածին Որդին, վեցերորդ դարի վեցերորդ օրը, խաչի վրա բևեռված, ցավեր կրեց և Իր այս ժամին կրած նեղություններով նեղությունը հալածեց և ցավով՝ ցավը վերացրեց: Եվ մեղքերի քաղցր ճաշակման փոխարեն, լեղախառն քացախը ճաշակեց՝ բժշկելու համար ճաշակած պտղի դառնությունը: Եվ Իր կամքով ու կարողությամբ, անշնչացած հպվելով խաչափայտին, հավետ լուծարեց Ադամի մեղքերի պատուհասը:

Եվ վեցերորդ ժամին, հանձն առնելով վերցնել բոլորիս կարիքները, Տերը, Իր Աստվածային խոնարհությամբ տարածելով ձեռքերը, պայծառացրեց Իր արարածներին՝ խավարեցնելով արեգակն ու լուսինը, կեսօրին խավար սփռելով: Ինչպես նախապես գրված էր՝ «Մուտ արեգակն ի միջօրէի», և՝ «Խաւարեցաւ լոյս ի տուէ», ինչպես և գրված է Ավետարանում՝ «Եվ վեցերորդ ժամին ամբողջ երկրի վրա խավար եղավ մինչև իններորդ ժամը» (Մատթ. Իէ 45):

Այս խավարով հանդիմանում էր լուսատուների թվացյալ ճաճանչները, որից խաբվելով՝ պարզամիտները արարածներին որպես աստված էին ընդունում: Եվ աստվածգիտության լույսը ամեն մի մարդու սրտում փայլեցրեց՝ ճանաչելու համար Ճշմարիտ և Ողորմած Աստծուն՝ հոգու և մարմնի ախտերը Բժշկողին:

Աստվածային տնօրինությամբ է միայն գիտության լույսը մարդու սրտի մեջ լինում, որպեսզի ամբողջ մտքով ճանաչենք Աստծուն, Ողորմածին, Ով բժշկեց մեր հոգիները և մարմինները չար ախտերից:

Այս պատճառով վեցերորդ ժամին մահվան իշխանը պատերազմում է յուրքանչյուրիս հետ այնպես, ինչպես նախաստեղծների հետ պատերազմեց ջանալով հաղթել, և ցանկանում է մեզ ևս մերկացնել սրբության պատմուճանից:

Որի համար հրամայում է արթուն և պատրաստ լինել այս ժամին աղոթելու համար և զգուշանալ միջօրեի ձանձրույթի դևից, որը հայհոյող ու վատթարագույնն է բոլոր դևերից և տարբեր գայթակղություններով փորձում է հափշտակել մեր միտքը ու իր կամքը թելադրելով՝ մեզ անդարձ կորստյան մատնել:

Այս պատճառով սահմանվեց Վեցերորդ ժամի աղոթքը՝ իբրև օգնություն մարդուն՝ ընդդեմ հակառակորդ զորությունների, նաև՝ ի հիշատակ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի տնօրինական չարչարանքներով բժշկության:

Ուստի այս ժամին պետք է աղոթել սուրբ տեղում ի հիշատակ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի տնօրինության, որ Իր կրած չարչարանքներով մեզ ազատեց չարչարանքներից և խավարումով՝ փրկեց խավարից, և որպեսզի հալածվի արտաքին խավարը և թոթափվի Ադամի ամոթալի խավարապատ մերկությունը: Եվ պայծառ ու հստակ վարքով, լցված մշտածագ լույսով, առատ յուղով անշեջ պահելով լապտերները, իմաստուն կույսերի հետ սրբությամբ մտնենք Քրիստոս Փեսայի երկնային առագաստը, Ում վայել է փառք հավիտյանս հավիտենից. ամեն:





# ՃԱՇՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ

Ճաշու Իններորդ ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Որդի Աստծու և ի դեմս Նրա մահվան և բանական Հոգու ավանդման

Վեցերորդ ժամերգությունը Վեջին Ողորմյան է, որն իններորդ ժամին է կատարվում, երբ Քրիստոսն ավանդեց Իր Հոգին Հոր ձեռքերում:

Իններորդ ժամի խորհուրդը ավանդությամբ ավելի բարձր ենք համարում, և առաքյալները մյուսներից ավելի պատվելի են այն համարում, որովհետև գրված է, որ Պետրոսն ու Հովհաննեսը Իններորդ ժամին ելան տաճար և նույն այդ ժամին բժշկեցին տաճարի դռան մոտ նստած կաղին:

Իններորդ ժամին կարգված է ընդհանրական աղոթք՝ Ադամի մեղքերից անդարձ խոստովանության համար, երբ դատապարտված վտարվեց դրախտից: Եվ նույն այդ ժամին աղաղակով Իր հոգին ավանդեց աշխարհի Փրկիչը ու հանեց Ադամին դժոխքից:

Առաջին միջօրեն նսեմացավ առաջին մարդու հանցանքից, իսկ Երկրորդ Ադամը, լինելով երկնքից, բարձրաձայն գոչելով խաչի վրա՝ ավանդեց հոգին Իններորդ ժամին, որով տիեզերքը ազատագրեց բանտից, իսկ մահվան խավար ստվերում հանդրվանած մարդկային ցեղը՝ կալանատնից: Եվ նույն ժամին լուսատուներին ազատեց խավարից, ըստ մարգարեի խոսքի՝ «Լույս պիտի լինի միայն երեկոյան» (Զաք. ԺԴ 7):

Եվ ինքը, Որ էն Աստված, մեր բնությամբ աղաղակում է խաչի վրա ասելով՝ «Էլի՛, էլի՛, լա՞մա սաբաքթանի», այսինքն՝ «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղմ. ԻԱ 1, Մարկ. ԺԵ 34): Նաև՝ «Հանցանքներիս պատճառով հեռու մնացիր իմ փրկությունից» (Սաղմ. ԻԱ 2):

Սա Նա է, Ով եկավ փնտրելու Իր հոտի կորած ոչխարին, ասելով՝ «Ո՞ւր ես Ադամ» (հմմտ. Ծննդ. Գ 9), որի դիմաց Ադամը, կնոջը պատճառ բերելով, ապիրատ պատասխան տվեց, որի համար դուրս վտարվեց Կենաց վայրից, ըստ իր կատարած ընտրության, և լսեց՝ «Հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19): Եվ նույն տեղում, Քրիստոսի խաչելության ժամանակ, ավազակի ականջով լսեց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43):

Խավարից եղավ դարձ դեպի հավիտենական լույս ու մահվանից՝ դեպի կյանք և իրիկնադեմին՝ այն ժամին, երբ դուրս էր վտարվել, կանգնեց այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Կենաց ծառը:

Եվ այն ժամին, երբ մերժվեց Ադամը Եդեմից, նույն ժամին ավազակը խոստովանության համար մտավ դրախտ, որպես կարապետ նրանց համար, ովքեր այնտեղ են գնալու:

Ադամը մեղք գործելուց հետո այս ժամին մերժվեց դրախտից և որքան մեղանչելուց հետո մնաց դրախտում, նույնքան ժամանակ էլ, Իր փառավորվելու օրը, Քրիստոս չարչարվեց խաչի վրա: Ինչպես ասում է Եվսեբի Եմեսացին՝ «Որ ժամին որ անգեղջ մնալու համար դատապարտվեցին և ելան դրախտից, նույն ժամին արարածների Արարիչը արձակեց ասովածացած մարդկային հոգին և լուծելով մահվան գորությունը արձակեց արգելափակված և կապված հոգիներին մահվան բռնակալությունից»: Եվ այն ժամին, երբ փակվեց դրախտը, փշրվեցին դժոխքի փականները:

Այն ժամին, երբ Ադամը Կենարար վայրից արտաքսվեց, նույն ժամին էլ ոտքի կանգնեց ընկած տեղից ըստ մարգարեի կանխասացության, թե՝ «Այն օրը լույս չի լինելու, այլ լինելու է ցուրտ և պարզ օր: Դա պիտի լինի միայն Տիրոջը հայտնի օր, ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան» (Զաք. ԺԴ 6,7):

Եվ որ ժամին որ ծածկվեց Կենաց ծառը՝ նույն ժամին զինվորը գեղարդով Փրկիչի կողը խոցեց՝ որտեղից Կենաց աղբյուրը բացվեց և ջուր ու արյուն դուրս ելավ, ըստ հետևյալ մարգարեության՝ «Այն օրը կենդանի ջուր է բխելու Երուսաղեմում» (Զաք. ԺԴ 8), Խաչյալի մարմնից ջուր և արյուն բխեց մեկը` իբրև մարդուց, իսկ մյուսը` առավել քան մարդուց:

«Նրա մի կեսը պիտի հոսի դեպի առջևի ծովը» (Զաք. ԺԴ 8), որը



հին ժողովուրդն է՝ օրենսդիրները, մարգարեները և հայրապետները, ովքեր Երուսաղեմի մխիթարությանն էին սպասում: «Նրա մյուս կեսը՝ դեպի հետևի ծովը» (Զաք. ԺԴ 8), որն էլ Իններորդ ժամին Քրիստոսի հեղված արյամբ փրկված նոր ժողովուրդն է, ովքեր առաքելական քարոզչությամբ հավաքվեցին մեղսալի թափառումներից և լուսավորվեցին կենաց ջրով, որ բխում է Երուսաղեմից՝ հավիտենական կյանքից, և նոր ժողովուրդ ու նոր Եկեղեցի եղավ:

Այս խորհրդի հիշատակումը կատարվում է ամեն ժամ, որովհետև սա է մեր փրկությունը, և այս ժամին կատարվեցին օրենքի և մարգարեական Գրքերի բոլոր գրվածքները: Եվ այս խորհրդով հալածվեց մեր տապանից մահացու ագռավը, և իրիկնադեմին աղավնուց ընդունեցինք ձիթենու ճյուղը կենաց Խոսքի հետ միասին, որով ամեն ժամ կարողանում ենք պտղատու մտքով կանգնել Նրա առջև և մատուցել աստվածահաճո պաղատանքներ՝ մեր աչքի առջև ունենալով Քրիստոսի կամովի չարչարանքները, որ կրեց այս ժամին մեր փրկության համար, և ամեն օր վերհիշել Նրա մարդասիրական պարգևները, որովհետև Նրան վայել է փառք հավիտյանս. ամեն:

Այս ամենի համար պետք է աղոթել ու փառավորել Քրիստոսին այս ժամին, որպեսզի մեզ ևս ներս տանի այնտեղ՝ ուր Ինքը հորդորեց մեզ, որպես ուղղի կենդանության: Այս է պատճառը Իններորդ ժամի աղոթքի:



# ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Որդի Աստծու, որ իջավ խաչից և կտավապատված դրվեց գերեզման

Յոթերորդ ժամերգությունը՝ Երեկոյան ժամը, «Խոնարհեցո և Ապրեցո» -ն է, որ Քրիստոսի թաղման խորհուրդն ունի:

Աստծու ավարտին հասցրած տնօրինության ներգործությամբ, անցնելով խաչելության ժամին կարգված աղոթքների միջով նրանցում ամբարված բարձրագույն շահը մեր անձերի համար քաղեցինք, ինչպես ծաղիկը խոտերի միջից կամ պատվական քարերը թագավորական գանձարանից՝ մեզ համար պսակ կազմելով բոլոր տարիների մաքրության համար:

Իսկ հասնելով երեկոյին՝ տեսնում ենք բոլորին կարիքից դրդված ճեմելիս: Նույնիսկ աստվածային ուխտից դուրս գտնվողներն են հիանում հայացքով ուղեկցելու համար ցերեկային ճառագայթներին, կարծես թե և կենդանիների խմբերը այս ժամին ցատկոտելով ու խայտալով՝ ավելի շատ են ուտում՝ լրացնելու համար ցերեկային ժամերին դանդաղկոտ ու երերացող չրջագայությունների պատճառով բաց թողածը, որպեսզի գիշերը, կերակուրից հագեցած, չտապեն իրենց ապաստարանները՝ հույս ունենալով այնտեղ խաղաղվել:

Այս խորհրդածությունից թվում է, թե կենդանիներին հատուկ կամքը նախկինում հավանել են նաև նախաստեղծները, որովհետև երբ առաջին մարդը դուրս վտարվեց Կենդանության վայրից, կարծեց թե մխիթարություն չկա երևացող առարկաների մեջ, որից ավելի էր ներամփոփվել վրդովված մտքերով: Եվ միայն մեծ լուսատուի գեղեցկությանը աչքերը հառած նայելիս՝ փոքր-ինչ մեղմվում էր ահագին տրտմությունը, սակայն չէր կարողանում զովանալ հեղձուցիչ, պլեկոծ



պապակումից, որի մեջ ընկղմված էր:

Նույն լույսով տեսնում էր նաև մյուս արարածներին և հույս էր տածում՝ Աստծու խնամակալությանը ապավինելով: Սա տեղի էր ունենում տասնմեկերորդ և դրան հաջորդող ժամերին:

Այնուհետև տեսավ, թե ինչպես է արեգակը մայր մտնում, որից կրկին իրեն սարսափազդու մտքեր պատեցին: Եվ նորից ավելի ուժգին համակեցին վախը և տրտմությունը: Իսկ իջնող մութը ավելի հուսահատեցրեց, մանավանդ, երբ աչքին նոր տեսարաններ երևացին: Վարանում էր ամբողջ գիշեր անհանգիստ հեծությամբ, հույսը կորցնելով, որ մյուս անգամ նորից կտեսնի լույսը:

Այս խորհրդի համար մարգարեացավ երանելի Աբրահամ նահապետը: «Մ՛ի վախեցիր, Աբրահա՛մ, Ես քեզ հովանավոր պիտի լինեմ, և քո վարձը չափազանց շատ պիտի լինի»: Որի համար աղերսում էր Աբրահամը՝ «Տե՛ր Ամենակալ, ի՞նչ ես անելու ինձ, չէ՞ որ անորդի եմ կորչում» (Ծննդ. ԺԵ 12): Սրա դիմաց, Աստված հրամայում է Աբրահամին վերցնել երեք տարեկան երինջ, երեք տարեկան նոխազ, երեք տարեկան խոյ, տատրակ և աղավնի ու պատարագել: Եվ մայրամուտին Աբրահամը թմբիրի մեջ ընկավ, և նրա սիրտը սարսափելի վախ համակեց (տե՛ս Ծննդ. ԺԵ 912): Այստեղից հայտնի է դառնում, որ Աբրահամը երեկոյան ժամին աղոթեց:

Երեկոյան երբ լույսը մարեց, և խավարը ծածկեց երկիրը, մարդը գրով անցավ սատանայի լծի տակ: Եվ առաջին մարդու լուսեղեն հանդերձից զրկվելու ժամին պատանքով պատվեց անմատույց լույսերի մեջ Բնակվողը: Եվ այն ժամին, երբ Ադամը հեռացավ դրախտից, մեզ կյանք տվող Քրիստոս իջավ մեռածների չիրիմը, Իր անապական մարմնով թաղվեց ու դրվեց երկրի սրտի մեջ, ուր Ադամն էր դրված երկրում՝ գիշերվա ստվերի մեջ, և ապականված հողածին Ադամին ու նրա մարմնին, որ հող էր դարձել, նաև մտքին ու հոգուն, և ամբողջ մարդկության համար հարության հույսը հաստատեց ու անապականություն պարգևեց Իր անապական հարությամբ:

Երեկոյան՝ ցերեկվա և գիշերվա միջակայքում, ըստ սովորության, Արարչի մարդասիրությանը ապավինելով՝ օրհնում և փառավորում ենք Աստծուն՝ օրը խաղաղությամբ անցկացնելու և գիշերվա գալու համար:

Դարձյալ՝ որովհետև այդ ժամին Քրիստոս Վերնատանը Պատարագի

խորհուրդը հաստատեց և լվաց աշակերտների ոտքերը: Նաև այդ ժամին Նրան իջեցրին խաչից: Կիրակի օրը երեկոյան ժամին երևաց Տերը հավաքված աշակերտներին և նրանց ուսուցանեց երանությամբ ամբողջ օրը մինչև երեկո գգուշությամբ անցկացնել, որը այլաբանորեն նշանակում է մինչև այս կյանքի վերջին երեկոն (տե՛ս Հովհ. Ի):

Դրա համար, ըստ եկեղեցական ավանդության, հավաքվում ենք երեկոյան ժամին, այսինքն՝ ցերեկվա ավարտին և գիշերվա սկզբին՝ աղոթելու ողորմած Աստծուն: Եվ նախահոր ու այլ ընկած անձերի համար խորհրդական սաղմոս ենք երգում՝ ըստ գիշերի խորհրդածության:

Ուստի անհրաժեշտ է այս ժամին աղոթել, որպեսզի Նա, Ով իջավ երկրի ստորին կողմը, Իր հետ մեզ տանի վերին աշխարհ՝ նորոգված, անմահ և անապական մարմնով:

Երեկոյան ժամին գոհություն ենք մատուցում նաև օրվա ավարտի համար: Ինչպես ամեն մի կենդանի մայրամուտի ժամին ավելի հոգում է իր որովայնի համար, նույնպես և Եկեղեցին, աչքի առջև ունենալով այն պակասությունները, որ լինելու են գիշերը, այն կանխում է մարգարեի խոսքով՝ «Ես առ Աստուած կարդացի՝ եւ Տէր լուաւ ինձ յերեկոյս՝ ի վաղորդայն՝ եւ ի հասարակ աւուր» (Ես Աստծուն ձայն տվի, և Տերը ինձ լսեց երեկոյան, առավոտյան ու կեսօրին) (Սաղմ. ԾԴ 17-18):

Հարց. -Ինչո՞ւ ենք ամեն օր երեկոյան ժամերգության ժամանակ «Խոնարհեցո՛»-ն և «Ապրեցո՛»-ն ասում:

Պատասխան. -Երեկոյան ժամերգության աղոթքները Քրիստոսի թաղման խորհուրդն ունեն դա այն պահն է՝ երբ Հովսեփը Տիրոջը խաչից իջեցրեց ու նոր՝ կույս գերեզմանի մեջ դրեց (Մատթ. ԻԷ 60):

Քրիստոսի թաղումը՝ ինչպես նաև մյուս տնօրինությունները՝ նախաստեղծների՝ Ադամի ու Եվայի հանցանքների պատճառով կատարվեցին: Եվ քանի որ նրանք դրախտից երեկոյան արտաքսվեցին՝ ապա Քրիստոսի թաղումն էլ երեկոյան տեղի ունեցավ: Ուստի թաղման խորհրդի համար սահմանված այս աղոթքները երեկոյան ժամերգության ընթացքում են կատարում:



«Խոնարհեցո»

Ապա սկսում է ՁԵ սաղմոսը. «Խոնարհեցո՝ Տէր՝ զունկն քո եւ լուր ինձ՝ զի աղքատ եւ տնանկ եմ ես» (Մոտեցրո՛ւ, Տե՛ր, ականջը Քո և լսի՛ր ինձ, քանզի աղքատ ու տնանկ եմ ես), որը պաղատանք է նախամոր՝ Եվայի անունից: Եվ որպես կնոջ մեղավոր ծնունդ՝ պաղատում է՝ «Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ՝ եւ լուար ինձ» (Իմ նեղության օրը ես կանչեցի Քեզ, և Դու լսեցիր ինձ) (Սաղմ. ՁԵ 7):

«Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո՝ փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց: Աստուած՝ անօրէնք յարեան ի վերայ իմ՝ եւ ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ՝ եւ ոչ համարեցան զՔեզ Աստուած առաջի իւրեանց»: (Մեծ եղավ Քո ողորմությունը իմ հանդեպ, հոգիս փրկեցիր խոր դժոխքից: Աստվա՛ծ, անօրենները հարձակվեցին ինձ վրա, բռնակալների ամբոխները հետապնդեցին ինձ, և Քեզ իրենց առջև Աստված չհամարեցին) (Սաղմ. ՁԵ 1314): «Կեցո զորդի աղախնոյ Քո» (Պահպանիր աղախնի որդուն) (Սաղմ. ՁԵ 16): «Խոնարհեցո»-ի խորհուրդը հետևյալն է. երբ բժիշկն այցելում է հիվանդին՝ ապա վերջինս ցանկանում է պատմել իր ցավերի մասին: Եվ քանի որ ցավի ազդեցության պատճառով նվաղած է լինում հիվանդի ձայնը՝ ուստի բժիշկը՝ չկարողանալով լսել՝ խոնարհեցնում է իր ականջը մինչև հիվանդի շուրթերը՝ որից հետո՝ երբ կարողանում է պարզել ցավի պատճառը՝ տալիս է պատշաճող դեղը:

Այսպես և Տերը՝ լսեց՝ եկավ և՝ վերքերի վրա սպեղանի դնելով՝ բժշկեց հիվանդություններից ու չարի հարվածներից: Մի իրական դեպքի մասին է մեզ հայտնապես ուսուցանում Տերունական առակը՝ ըստ որի մի մարդ Երուսաղեմից իջնում էր Երիքով (Ղուկ. Ժ 30): Այս մասին իր սաղմոսում կանխասել էր նաև Դավիթը՝ Հոգուց ներշնչված լինելով. «Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնոսա՝ և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց» (Առաքեց Իր Խոսքն ու բուժեց նրանց՝ և փրկեց նրանց իրենց ապականությունից) (Սաղմ. ՃԶ 20): Նաև Եսային է ասում՝ «Նա մեր հիվանդությունները Իր վրա վերցրեց ու մեր ցավերը կրեց» (Մատթ. Ը 17): Եվ քանի որ մեր փրկությունը կատարելապես իր լրմանը հասավ՝ ուստի Դավիթը պատշաճ կերպով ասաց. «Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո՝ և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց» (Մեծ եղավ Քո ողորմությունն իմ հանդեպ՝ և հոգիս փրկեցիր խոր դժոխքից) (Սաղմ. ՁԵ 13):

## «Ապրեցո»

Իսկ «Ապրեցո» -ն նախահոր կողմից է ասվում՝ «Ապրեցո զիս՝ Տէր՝ ի մարդոյ չարէ՝ յառնէ անիրաւէ փրկեա զիս» (Ազատի՛ր ինձ, Տե՛ր, չար մարդուց, անիրավ մարդուց փրկի՛ր ինձ) (Սաղմ. ՃԼԹ 1): Այսինքն՝ բանսարկու թշնամուց, որ նախանձելով չարացավ ու իր սրտում խորհեց անօրենություն և խաբելով՝ մեզ հանեց կենդանության վայրից:

«Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի՝ ձայնիւ իմով զՏէր աղաչեցի: Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ՝ եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից: Ի ճանապարհ յոր եւ գնայի՝ թաքուցաւ ինձ որոգայթ»: (Իմ ձայնով ես Տիրոջը կանչեցի, իմ ձայնով Տիրոջն աղաչեցի: Տիրոջ դիմաց պիտի սփռեմ աղոթքն իմ և Նրա առջև նեղությունս պիտի պատմեմ: Այն ճանապարհին, որով գնում էի, ծածուկ որոգայթ լարվեց իմ դեմ) (Սաղմ. ՃԽԱ 24):

Ազատություն է մաղթում հոգիներին բանտից, այսինքն՝ չարի ու մեղքի կապանքներից, և սպասել է տալիս մինչև արդարների հատուցման օրը, ապա Արարչին՝ Ով գիշեր ու զոր լսում է մեզ, օրհնություն է առաքում և գովում է Տիրոջը որպես իմանալի Լույսի, որից սարսում է խավար ոգիների աղջամուղջը: Ապա հայցում է Տիրոջը՝ ծագել մեր սրտերում և միաբանված օրհնություն է մատուցում Երեք Անձերի Միությանը:

Առավոտը և երեկոն տարբերվում են իրենց նշանակությամբ:

Եթե առավոտյան, նախահայր Ադամի համար, «Երեք մանուկների» օրհնությունն է ասվում, ապա երեկոյան «Ապրեցոն» բանսարկուից փրկվելու համար է, որ սրեց լեզուն որպես իժի թույն և որոգայթ լարեց, որպեսզի խափանի դեպի վերին կյանք մեր ընթացքը:

Ուստի խնդրվում է Աստծուց, որ հովանի լինի պատերազմի օրերին, որովհետև Քրիստոսի վեմից հեռացածները ջանում են մեզ ևս դժոխք իջեցնել, բայց իրենք են ընկնելու: Որովհետև Տիրոջը հուսացողները պիտի անցնեն բոցեղեն պատնեշների միջով և լինեն Նրա հետ դրախտում՝ հանգստության մեջ: Տերը հանեց նրանց հավիտենական բանտից ու հասցրեց բարության երկիրը՝ դրախտը, ինչպես ասում էին մանուկները՝ «Մեծ եղավ Քո ողորմությունն իմ հանդեպ, հոգիս փրկեցիր խոր դժոխքից» (Սաղմ. ՁԵ 13):



Դարձյալ՝ առավոտյան ժամին, Եվային բարձրացնելու համար ասվում է «Մեծացուսցէն» և «Ողորմեան», իսկ երեկոյան «Խոնարհեցոն» և «Տուր զօրութիւն ծառայի Քո և աղախնոյ» (Զորություն տուր Քո ծառային, պահպանիր աղախնիդ որդուն) (Սաղմ. ՁԵ 16), և խաչիդ նշանով պահպանություն արա, որպեսզի ինձ ատողները՝ դևերի բազմությունները, ամոթով մնան: Սրանից հետո Մեսեդի ենք ասում՝ առաջավորության հացի խորհրդի կապակցությամբ:

## Մեսեդի*

«Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէր: Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի» (Տէ՛ր, թող աղոթքս Քեզ ուղղվի որպես խունկ, ձեռքերիս կարկառումն՝ իբրև երեկոյան պատարագ) (Սաղմ. ՃԽ 2): Սրանով հորդորում է ձեռքերը վեր բարձրացնել և Հորից թողություն խնդրել խաչողների համար, որը մենք ևս պարտավոր ենք անել, և պետք է մեր բերաններին պահապան դնել և շուրթերի դուռը ամուր փակել ու սրտով չխոտորվել, որպեսզի մեր աղոթքները որպես խունկ ընդունելի լինեն:

Հայտնի է՝ որ Հին տաճարում )Թվոց ԻԸ 4՝ 5( ամեն առավոտ և երեկո Տիրոջ առջև՝ սեղանի վրա, դրվում էր հաց՝ գառ ու դորակի քառորդ մասով գինի: Գինին վկաների համարձակ խոստովանությունն է, ովքեր կամովին իրենց արյունը Տիրոջը նվիրեցին:

Նոր Եկեղեցում՝ ուր մարմնավորը հոգևորի փոխվեց՝ հացի ու գառի փոխարեն երկու տուն մեսեդի է ասվում՝ իսկ դորակի քառորդ մասով գինու փոխարեն՝ «Ուղիղ եղիցինը», որը ընդամենը մի տուն է՝ սակայն չորս մասերով է ասվում:

Դարձյալ՝ առաջավորության հացն ու գինին Փրկչի մարմնի ու արյան օրինակն է: Իսկ այն՝ որ մեկ առավոտյան և մեկ երեկոյան էին տաճարում դնում՝ նշանակում է՝ որ երեկոն այս ժամանակների խորհուրդն ունի՝ իսկ առավոտը՝ հանդերձյալի օրինակն է: Այսպիսով՝

---

* Մեսեդի. -հոգևոր երգ, խորհրդավոր երգ, միջանկյալ սաղմոս, երկու երկար տների միջև երգված կարճ տուն։ Իմաստով նշանակում է՝ նոր երգ երգել, օրհնություն երգել։ Փոխառություն է հունարեն μεσδια ձևից։

*իմանում ենք՝ որ հավատացյալների երջանկությունը թե՛ այս կյանքում և թե՛ հանդերձյալում Քրիստոսն է:*

*Նաև անուշահոտ խունկ է մատուցվում, որը ճգնողների անուշահոտ վարքն է, որով հրճվելով գվարճանում է Եկեղեցին, և որին բանական պատարագ է ասում Պողոսը:*

*Իսկ սաղմոսերգությունները մեկ որպես մաքրափայլ ալյուր են, մեկ՝ որպես յուղ կամ որպես կարագ, մեկ էլ՝ որպես ընդունելի խունկ: Իսկ քարոզներն ու աղոթքը՝ որպես Աստծուն հաճելի անուշահոտ պատարագ:*

*Ապա քահանան բոլորին խաղաղություն է տալիս և նույնը նրանցից իր հոգու համար ընդունում: Հրամայում է ժողովրդին Աստծուն երկրպագել և հոժար սրտերից լսում՝ «Քո առջև Տեր»: Հրամայում է նաև գոհանալ՝ ցերեկը խաղաղությամբ անցկացնելու համար, և մաղթում է, որպեսզի նույն կերպ, առանց մեղքերի և գայթակղության, անցկացնեն նաև գիշերը՝ հավատի մեջ հաստատուն ու աներեր մնալով:*

*Սրանց հաջորդում են քարոզներն ու աղոթքները: Այնուհետև ասվում է «Սուրբ Աստուածը»՝ ի դեմս Որդու, որով հայտնվում է Փրկչի բոլոր տնօրինությունների խորհուրդը՝ ծննդյան օրից սկսած մինչև հարությունը՝ Նրանից ողորմություն հայցելով: Սուրբ Եկեղեցու աստվածաբանները այս խոստովանությունը, որպես հրեղեն պարիսպ և անառիկ ամրություն, ավանդեցին մեզ:*

## «Համբարձի»

*Ապա հաշտարար պատարագով քաջալերված, հոգու աչքերը վեր հառելով՝ ասվում է՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս՝ ուստի եկեսցէ ինձ օգնութիւն» (Աչքերս դեպի լեռները բարձրացրի, որտեղից ինձ օգնություն պիտի գա) (Սաղմ. ՃԻ 1): Այսինքն՝ երկինքների երկինքը, որ ի նկատի ունի Տիրոջ՝ երկնքի և երկրի Արարողի զորությունը, Բարձյալից օգնություն խնդրելով, որպեսզի Իր Աջով գիշեր ու զոր պահի մեր անձերը, որ չմեղանչենք և չարը չգործենք: Եվ պահի հավատացյալ անձանց ամենայն չարից՝ Աստծու Որդու զորությամբ և խաչի նշանով: Նաև՝ առավոտից մինչ երեկո չարչարվել ու հոգնել ենք և հոգևոր ու մարմնավոր օգնություն ենք խնդրում՝ որպեսզի չտկարանանք:*



*Երկրորդ՝ քանի որ մոտենում է քնելու ժամը՝ պահպանություն ենք խնդրում:*

*Երրորդ՝ որովհետև գիշերամուտ է, և ավարտվում է օրը՝ պահպանություն ենք խնդրում ամբողջ օրվա՝ քսանչորս ժամվա համար: «Տէրը պահի նաև քո մուտքը»: Մուտքը աշխարհ գալն է ծննդյամբ՝ ավազանից, իսկ ելքը՝ մահը, ինչպես նաև հարությամբ հողից վեր համբառնալը:*

## «Որ բնակեալ է»

*Սրանից հետո ասում ենք «Որ բնակեալ է» սաղմոսը՝ և պետք է իմանալ՝ որ սա «Համբարձի» -ի համար է ասվում՝ այսինքն՝ օգնություն ենք խնդրում վերոհիշյալ պատճառների համար: Սակայն մեզ առաջիկայում աջից ու ձախից պատերազմ է սպասվում՝ այսինքն՝ չարից ու բարուց՝ հրեշտակներից ու դևերից՝ ընդ որում մենք պաշարված ենք երկուսի միջև: Եվ որին էլ որ անձնիշխան կամքով ախորժենք՝ կստանանք. եթե ապավինենք բարուն՝ ապա հրեշտակները մեզ օգնական կլինեն՝ իսկ եթե չարին հոժարենք, ապա սա հենց այն կլինի, ինչին մեզ մղում են դևերը:*

*Երբ միայն հրեշտակներն են մեզ օգնում, հարատևում ենք բարու մեջ՝ իսկ երբ միայն դևերն են՝ և հրեշտակների պահպանությունն էլ չկա՝ ապա վնասվում ենք: Բայց երբ հոժար կամքով դառնում ենք Աստծուն և ասում՝ «Դու՝ Տե՛ր՝ իմ հույսն ես» (Սաղմ. Ղ 9)՝ ապա Աստված ասում է. «Քանի որ հույսը ինձ վրա դրեց՝ Ես կփրկեմ նրան՝ նրան հովանի կլինեմ՝ քանզի Անունս ճանաչեց» (Սաղմ. Ղ 14): Այսինքն՝ քանի դեռ Ինձ չէր ապավինում՝ Ես նրան չէի լսում: Իսկ երբ ասաց՝ «Դու՝ Տե՛ր՝ իմ հույսն ես»՝ Ես լսեցի ու փրկեցի և փրկելուց հետո երկնային օթևանում Իմ հովանու ներքո կհանգստացնեմ նրան:*

*Համառոտ ասած՝ այս սաղմոսը վերաբերում է նրանց՝ ովքեր սատանայի փորձությունները հաղթահարելուց հետո՝ Աստծու հովանու ներքո՝ երկնային օթևանում կհանգստանան: Եվ դա հայտնի է դառնում մեկնություններից՝ որովհետև վերջին փոխում այսպես է ասվում. «Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս» (Իմ ողջ նեղությունից փրկեցիր ինձ) (Սաղմ. ԾԳ 9): Այսքանը Երեկոյան ժամերգության մասին: Ամբողջ տարվա մեջ միայն Ավագ Շաբաթ օրը չի կատարվում երեկոյան ժամերգություն:*

# ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Խաղաղական ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Հոգի Աստծու և ի դեմս Որդի Աստծու, որ դրվեց գերեզման և իջավ դժոխք ու խաղաղացրեց հոգիներին

*Այնուհետև սկսվում է Խաղաղական ժամերգությունը, որը ութերորդ ժամերգությունն է և նվիրված է Սուրբ Հոգուն: Այն հաջորդում է Երեկոյան ժամերգությանը և կատարվում է արեգակի մայր մտնելուց հետո:*

*Այս ժամին օրհնում ենք Աստծուն՝ որովհետև այս ժամին Քրիստոս աղոթեց Գեթսեմանիի պարտեզում, և Նրանից արյան քրտինք հեղվեց, և այս ժամին դրվեց գերեզման՝ ու այս նույն ժամին, հարությունից հետո, անցնելով փակ դռների միջով՝ եկավ աշակերտների մոտ ու նրանց ողջույն տվեց:*

*«Խաղաղական» ժամին ասվում է՝ «Ի կարդալ իմում լուար ինձ՝ Աստուած՝ ըստ արդարութեան» (Երբ ձայն տվի, իմ արդարության համար լսեցիր ինձ, Աստվա՛ծ» (Սաղմ. Դ 1): Բազմատեսակ սաղմոսներով փրկությունն է մաղթում հոգիներին ու միաձայն խնդրում երկնային խաղաղություն գիշերվա համար, որպեսզի պահպանի ու ամրացնի չարի երևացող ու աներևույթ զորություններից, որ շրջում են խավարի մեջ, ինչպես ասվում է՝ «Որի մեջ շրջում են բոլոր գազաններն անտառի» (Սաղմ. ՃԳ 20):*

*Երբ Քրիստոս հոգով դժոխք իջավ՝ հոգիների համար խաղաղություն եղավ: Այդ պատճառով աղոթքը «Խաղաղական» կոչվեց՝ ինչպես որ խոսքի սկզբում է ասում՝ «Ի նեղութենէ ինձ անդորր արարեր» (Նեղության մեջ ինձ անդորր տվիր) (Սաղմ Դ 2):*

*Խաղաղականը յոթ փոխեր ունի, որը ասվում է յոթ մահացու մեղքերից սրբագործվելու համար՝ որոնք յոթ զգայարաններով գործեցինք՝ և խնդրում ենք որպեսզի դրանք մաքուր պահի և պահպանի չարից, որպեսզի անմեղ մնանք:*

*Սրանից հետո երգում ենք «Շնորհեա՛ մեզ Տէր» -ը:*



## Շնորհի՛ր մեզ Տեր

*Սրանով մենք թշնամու դեմ ենք ելնում քաջալերված՝ որ Աստված մեզ հետ է և ոչ միայն մեր գործած մեղքերն է քավում՝ այլև պահպանում է մեզ թշնամու նիզակներից ու մեր մեղքերի պատիժը բարդում ու կուտակում է դրանք մեզ դրդողների գլխին: Ինչպես ասում է՝ «Ընդ մեզ Տէր Աստուած՝ գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք» (Մեր հետ է Տեր Աստված՝ իմացե՛ք հեթանոսներ և պարտվեցե՛ք):*

*Իսկ մաղթանքից հետո քարոզ ու աղոթք է ասվում՝ որոնց նպատակը մեկն է՝ պահպանություն աղերսելը:*

## Տերն է իմ լույսը

*Այնուհետև ասում ենք՝ «Տէր լոյս իմ» -ը (Սաղմ. ԻԶ 1):*

*Քանի որ մոտեցել է խավար գիշերը՝ անհրաժեշտ է դիմել անստվեր ճշմարիտ Լույսին՝ «որ լուսավորում է ամեն մարդու» (Հովհ. Ա 9)՝ որպեսզի չգայթակղվենք: Ինչպես Տերն է ասում՝ «Եթե մեկը ցերեկն է քայլում՝ չի սայթաքում՝ որովհետև տեսնում է այս աշխարհի լույսը՝ իսկ եթե մեկը գիշերն է քայլում՝ սայթաքում է՝ որովհետև հետը լույս չունի» (Հովհ. ԺԱ 9՝ 10):*

*Բայց իմացի՛ր՝ որ Ինքը Քրիստոս մեզ համար Լույս եղավ՝ ըստ Իր խոսքի՝ «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. Ը 12): Որովհետև մարմնավոր կյանքը խավար է կոչվում՝ և՝ միշտ շաղախվելով սրա հետ՝ կուրանում է մեր իմանալի հոգին: Իսկ Քրիստոս այս խավարի մեջ որպես լույս հայտնվեց: Ինչպես և ավետարանիչն է ասում՝ «Լույսը խավարի մեջ լուսավորում է» (Հովհ. Ա 5): Որովհետև ի հայտ է բերում մեր երկրային ցանկություններն ու հույսերը: Արդ՝ Նա՛ է երկնքի Լույսը. հոգիների կյանքն ու կենդանությունը՝ ինչպես նաև մարմինների Արեգակը:*

*Օրինակ՝ մարդն այն չափով է սայթաքում՝ որ չափով որ լույսին չի նայում՝ իսկ նայելով լույսին՝ տեսնում է և՛ վիհը՝ և՛ հարթը՝ և՛ դժվարինն ու դյուրինը և ապա ուղիղ ճանապարհով ընթանում: Այսպես է և հոգին, որը մեղքերի պատրանքներից այնչափ է գայթակղվում՝ որչափ որ Քրիստոսին չի նայում: Իսկ Նրան նայելով՝*

*տեսնում է աշխարհում շրջող՝ բայց աշխարհին [մեղքին] անհաղորդ՝ և գերագույն կյանք եղող և մեզ նույնին կոչ անող Տիրոջը:*

*Միայն այս ժամանակ ենք ճանաչում ու հասկանում՝ որ ամեն մարմնական հաճույք վիհ է ու գայթակղություն՝ և պետք է դրանից հեռանալ ու գնալ Քրիստոսի շավիղներով: Այնուհետև ուրինքնելով ավետարանական ճառագայթը՝ ինչպես որ ասում է Մատթեոս ավետարանիչը, պետք է՝ «Ուրանալ սեփական անձն ու Լույսի ետևից գնալ» (Մատթ. Ժ 38): Այս մասին է առաքյալի խոսքը՝ «Հետևում մնացածները մոռացած՝ ձգտում եմ դեպի իմ առջևում եղածները. ուշադիր վազում եմ աստվածային կոչմանս նպատակակետին՝ Քրիստոս Հիսուսով» (Փիլիպ. Գ 13-14):*

*Այսպիսով, լույսի ետևից անսայթաք գնացողները կժամանեն վերին Նավահանգիստ և խավարից չեն բռնվի՝ ինչպես Քրիստոս է ասում՝ «Ով Իմ ետևից է գալիս՝ խավարի միջով չի քայլի» (Հովհ. Ը 12):*

*Տենչալով դեպի Նրա իմանալի լույսը՝ հոգևոր աչքերով կարելի է ճանաչել հոգու թշնամուն և խուսափել նրա արձակած աներևույթ նետերից: Այս իմաստով ենք ասում՝ «Տերն է իմ լույսը»:*

*Այսպիսով՝ ավարտում ենք ութերորդ ժամերգության աղոթքները և սկսում իններորդ ժամերգության աղոթքը՝ որ «Եկեսցէ» -ն է*



# ՀԱՆԳՍՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հանգստյան ժամի ընդհանրական աղոթքի կարգը, որ կատարվում է ի դեմս Հոր Աստծու, որ Իր Միածնի աջով պահպանի մեզ գիշերվա խավարից

*Իսկ «Եկեսցէ»- ն՝ որը Հանգստյան ժամն է և օրվա իններորդ ժամերգությունը՝ ի դեմս Հոր է կատարվում, և սրանից հետո ննջում ենք՝ քանի որ սա վերջին ժամերգությունն է և օրվա ավարտը:*

*Հարկ է իմանալ, որ գիշերվա չորս պահերի համար գիշերը չորս անգամ է ժամերգություն կատարվում՝ դրանք են՝ հանգստյան՝ գիշերային՝ առավոտյան և արևագալի ժամերը:*

*Առաջին պահը Հանգստյան ժամն է, երբ ասում ենք «Եկեսցէ» -ն, երկրորդ պահը գիշերամեջն է, երրորդը՝ աքլորականչը, իսկ չորրորդը՝ լույս առավոտը: Այս ժամերի համար Տերը զգուշացրեց մեզ արթուն կենալ ու աղոթել՝ ասելով՝ «Արդ, արթուն կացե՛ք, որովհետև չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյա՞ն՝ թե կեսգիշերին՝ աքլորականչի՞ն թե առավոտյան դեմ» (Մարկ. ԺԳ 35):*

*Մարդու տարիքը ևս չորս հասակներ ունի: Երեկոյան ժամը տղայությունն է՝ որով մուտք ենք գործում դեպի խավար կյանք՝ գիշերամեջը՝ երիտասարդությունն է՝ երբ թմրում ենք մեղքերի մեջ, աքլորականչը՝ ծերությունն է՝ իսկ առավոտն իր ծագմամբ մոտ է հանդերձյալ աշխարհին, որ Ինքը Տերն է: Քանի որ մեր մարմինը նյութի չորս տարրերից է կազմված՝ և դրանցով ենք մեղանչում, այս է պատճառը, որ մեր հոգու համար, գիշերը չորս անգամ ենք աղոթում:*

*Հոգին երեք մասերից է բաղկացած՝ գիտակցություն, խոսք՝ կամք կամ ցանկություն: Այն նաև հինգ ներքին զգայարաններ ունի՝ դրանք են՝ ընդհանուր զգայություն՝ երևակայություն՝ կարծիք՝ տրամախոհություն և միտք, որը հիշողությունն է:*

*Հոգու հինգ արտաքին զգայարաններն են՝ տեսողություն՝ լսողու-*

թյուն՝ հոտառություն՝ ճաշակելիք և շոշափելիք: Սրանցով է մարդ ամեն տեսակի չար ու բարի արարքներ գործում՝ որի համար էլ ցերեկը հինգ անգամ ընդհանրական աղոթքներ է կատարվում:

Հարց. -Որո՞նք են ինը ժամերգությունների աղոթքները:

Պատասխան. -Վերն արդեն նշել ենք՝ որ ամեն օր ինն անգամ ենք աղոթում՝ ոչ ավել և ոչ պակաս, որոնք են. առաջին՝ «Տեր գի բազումը»՝ երկրորդ՝ «Հարցը»՝ երրորդ՝ «Արևագալը»՝ չորրորդ՝ երեք «Ողորմեանները»՝ որոնցով հասնում է վեցի՝ յոթերորդ՝ «Խոնարհեցոն»՝ ութերորդ՝ «Խաղաղականը» և իններորդ՝ «Եկեսցէն»:

Վերջինս քնելու ժամին ենք ասում, և առ Հայրն է ուղղված՝ և Նրա՛ն ենք աղաչում՝ որպեսզի Միածնի պահապան Աջով խաղաղությամբ պահի մեզ գիշերվա խավարից: Այն ինը փոխերից է բաղկացած՝ գիշերվա ինը ժամերից պաշտպանելու համար:

Իսկ թե ինչո՞ւ են կիսատ փոխերը կարգված «իննոցի» հետ՝ պատճառը հետևյալն է: Երբեմն գիշերը վեց ժամով ավելանում է՝ իսկ երբեմն էլ՝ պակասում՝ ինչն ավելանում է ցերեկին՝ և դարձյալ՝ երբ պակասում է ցերեկից, ավելանում է գիշերին: Այս առումով են այսքան փոխեր սահմանված: Եվ սրանով մենք պահպանություն ենք խնդրում բոլոր քանչորս ժամերի երկրորդ կեսի համար:

Հարց. -Ո՞րն է հանգստյան ժամի աղոթքի խորհուրդը:

Պատասխան. -Աստված ասաց՝ «Թող լույս լինի, և լույս եղավ» (Ծննդ. Ա 3): Եվ լույսը հույժ բարի էր, որով նորաստեղծ տարրերը մինչև երեկո անտրտում ուրախության մեջ էին: Եվ փոքր-ինչ անց, ոչ իրենց կամքով, այլ սնոտի հույսով և աստվածանալու պատրանքով տոգորված՝ իրենց առաջնորդ իշխանի հետ ընկան ապականության ծառայության մեջ, որի համար էլ վշտագին մահը եղավ նրանց հատուցում, իսկ հող դառնալը՝ պատուհաս: Մարդկային բանական ցեղը, այսպիսի անազատ և մերժված վիճակում, հարկադրված սպասում է հանգստյան գիշերի գալստյանը:

Եղած կարողությամբ, սրտառուչ հառաչանքներով մատուցվում են ժողովված աղոթքները՝ ոչ միայն արդարացի հրամանը կատարելու, ըստ Դավիթ մարգարեի՝ «Օրը յոթ անգամ Աստծուն օրհնել», այլ նաև, որպեսզի սուրբ խաղաղությամբ մահիճ մտնենք: Որովհետև այս նինջը ստվերն է այն մեծ գիշերի, երբ մահվան քնով պետք է հող իջնենք և փտելու



հանձնենք մեր մարմինը՝ հույսով սպասելով մինչև հանդերձյալ առավոտի հարությունը: Այս պատճառով հավաքվում ենք աղոթքի Հանգստյան ժամին, որպեսզի առանց ամոթի և վախի առավոտյան համարձակապես տեսնենք Արդարության Արեգակի լույսը:

Ինչպես վաճառականը, համարձակորեն մեծ ճանապարհ անցնելով ծովերով ու ցամաքներով և վերջապես հասնելով իր հայրենի քաղաքի նավահանգիստը, ավելի է մտահոգվում՝ աչքի առջև ունենալով ընկերների նախանձը, իշխանների ահը, վաճառականների դրժումները կամ ընտանիքի թալանվելը, նույնպես և Աստծու Եկեղեցին հասնելով այս աղոթքի ժամին, որպես մահվան քնի զարհուրանքներով լցված, ավելի շատ է աղոթում խնդրելով պահպանություն գիշերվա համար՝ իր առջև ունենալով գալիք մահվան գիշերվա օրինակը: Չնայած սաղմոսները այլ և այլ տեղերում ասում են. «Այսուհետև մենք խաղաղությամբ կննջենք» (Սաղմ. Դ 9), սակայն, «Ննջեցեք խաղաղությամբ և արթնացեք» ասելով ի նկատի ունի հող իջնելը և հանդերձյալ կյանքը:

Այս աղոթքը կարևոր է, որպեսզի դադարենք ալեկոծվելուց և ցերեկվա անհանգստությունից ապահովված՝ մտնենք անկողին՝ մտաբերելով անցած օրվա մեր շահածները, մահաբեր թե՞ կենսաբեր են եղել դրանք արդյոք, և մտածել այն ժամի մասին, երբ ելնելու ենք մեր մարմնից, ու սպասելու ենք հայտնության մեծ օրվան: Իսկ մնացածի՝ թե՛ քարոզի և թե՛ աղոթքների՝ որոնք հերթականությամբ են ասվում՝ նպատակը նույնն է.

Հանգստյան ժամերգության վերջում՝ ժողովրդին արձակելուց հետո, քահանան «Հանգերուք խաղաղութեամբ...» է ասում՝ որը ցույց է տալիս՝ որ սրանից հետո պետք է ավարտել բոլոր գործերը և հանգիստ քնել: Ննջելուց առաջ ամենահաղթ ու պատվական խաչի նշանով պետք է կնքել մեր զգայարանները, ինչպես գերեզմանն են կնքում, երբ այնտեղ են դնում հավատացյալներին: Նույնպես և մահիճ մտնելիս նույն կնիքով պետք է ամրանալ՝ ասելով. «Սատանայի բոլոր խռովություններից խաղաղեցրո՛ւ մեր մտքերն ու խորհուրդները այս գիշեր և ամեն ժամանակ»:

Իսկ հանգիստ քնից վեր կենալիս նույն կնիքով անմիջապես պետք է ամրանալ և արթնանալով՝ հրեշտակների նմանությամբ՝ օրհնությամբ և գովաբանությամբ Տիրոջը խոստովանել՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և անսահման հավիտենության մեջ. ամեն:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## Ժամակարգություն

*Ժամերգությունները, ընդհանրապես, «Հայր մեր» աղոթքով են սկսում և ավարտում: Յուրաքանչյուր ժամերգության սկզբում ասվում է այդ ժամին համապատասխանող սաղմոսը: Սաղմոսի առաջին տունը քահանան է ասում՝ իսկ շարունակությունը սարկավագը:*

*Ժամակարգության հիմքում սկսվածքների կանոնն է դրված՝ ըստ դասերի բաժանման և պաշտոնների կարգի: Դասերը՝ որոնք ամեն օր փոխվում են, կոչվում են ավագերեցի դաս և աշակերտի դաս: Ավագերեցի դասում կարգը վարում է քահանան՝ իսկ աշակերտի դասում՝ սարկավագը:*

*Յուրաքանչյուր ժամերգության համար գոյություն ունի երեք հանգամանք.*

*Առաջին՝ յուրաքանչյուր ժամերգություն դիմվում է Սուրբ Երրորդության Անձերից մեկին:*

*Երկրորդ՝ որոշակի է կատարելու ժամը:*

*Երրորդ՝ սահմանված է տնօրինական հիշատակը, այսինքն՝ ժամերգությունը եթե ոչ ամբողջությամբ՝ ապա գոնե որոշ աղոթքներով Քրիստոսի որևիցէ տնօրինությանն է նվիրված:*

## Սաղմոսասացություն

*Սաղմոս ասելը քրիստոնյաների մեջ աղոթելու ամենահին եղանակն է, իսկ սաղմոսասացության մեջ հարատևելը անապատականներին է հատուկ:*

*Սաղմոսները երկու եղանակով են ասվում՝ «թիվ» և «ձայն»:*



*«Թիվը» ոչ թե սոսկ պարզ ընթերցում է, այլ թեթևակի մեղեդայնությամբ ընթերցանություն, իսկ «ձայնը»՝ երգեցողություն է՝ որը դաս առ դաս է կատարվում՝ ըստ ձայների:*

*Սաղմոսները բաժանված են ութ կանոնների և եղանակների և սկսվածքներին են համապատասխանում: Յուրաքանչյուր կանոն իր մեջ որոշակի թվով սաղմոսներ է պարունակում և կրում է այն անունը, որը համապատասխանում է այդ ութ կանոններում պարունակված առաջին սաղմոսի առաջին տողի առաջին բառին: Ըստ այդմ՝ վերջին ձայնը «Երանեալ» է կոչվում՝ իսկ առաջինը՝ «Երկինք պատմեն»: Յուրաքանչյուր կանոնում սաղմոսները հետևյալ թիվն են կազմում.*

*Վերջին ձայն՝ ԴԿ՝ պարունակում է* **17** *սաղմոս՝ Ա սաղմոսից մինչև ԺԷ սաղմոսը:*

*Առաջին ձայն՝ ԱՁ՝ պարունակում է* **18** *սաղմոս՝ ԺԸ սաղմոսից մինչև ԼԵ սաղմոսը:*

*Առաջին կողմ՝ ԱԿ՝ պարունակում է* **19** *սաղմոս՝ ԼԶ սաղմոսից մինչև ԾԴ սաղմոսը:*

*Երկրորդ ձայն՝ ԲՁ՝ պարունակում է* **17** *սաղմոս՝ ԾԵ սաղմոսից մինչև ՀԱ սաղմոսը:*

*Ավագ կողմ՝ ԲԿ՝ պարունակում է* **17** *սաղմոս՝ ՀԲ սաղմոսից մինչև ՁԸ սաղմոսը:*

*Երրորդ ձայն՝ ԳՁ՝ պարունակում է* **17** *սաղմոս՝ ՁԹ սաղմոսից մինչև ՃԵ սաղմոսը:*

*Վառ ձայն՝ ԳԿ՝ պարունակում է* **13** *սաղմոս՝ ՃԶ սաղմոսից մինչև ՃԺԸ սաղմոսը:*

*Չորրորդ ձայն՝ ԴՁ՝ պարունակում է* **29** *սաղմոս՝ ՃԺԹ սաղմոսից մինչև ՃԽԷ սաղմոսը:*

*Ընդհանուր՝* **147** *սաղմոս: Վերջին երեք սաղմոսները այս ցուցակում չկան: Սաղմոսի յուրաքանչյուր կանոն իր մեջ յոթ ստորաբաժանումներ ունի, որոնք գուբղաներ են կոչվում:*

*«Գուբղայ» նշանակում է սաղմոսների հավաքածու: «Գուբղայ» բառը՝ նաև՝ գոբողայ՝ գոբաղայ և գուբողայ գրությամբ է հանդիպում և ծագում է եբրայեցերեն «գըբուլ» բառից՝ թարգմանաբար՝ սահման:*

*Յուրաքանչյուր կանոն յոթ գուբղաներից է բաղկացած՝ իսկ յուրաքանչյուր գուբղա իր մեջ շուրջ երեք սաղմոս է ընդգրկում՝ և կախված*

սաղմոսների ընդարձակությունից՝ այս թիվը մինչև վեցի է հասնում:

Սաղմոսներն էլ իրենց հերթին տների են բաժանված՝ և մեկ գուբղայում եղած տների միջին քանակը քառասունի է հասնում: Կան գուբղաներ, որոնք կազմված են **26** տնից՝ կան որ՝ **74** տնից: Յուրաքանչյուր կանոնում տների գումարը **238** -ից (**ԴԿ**) մինչև **362** (**ԳԿ**) -ի է հասնում: Մյուս կանոնները հետևյալ տեսքն ունեն՝ **ԲԿ -348՝ ԱԿ -318՝ ԳՁ -314՝ ԴՁ -302՝ ԱՁ -289՝ ԲՁ -280:**

Սաղմոսները և շարականները անհրաժեշտ է դաս առ դաս երգել: Սաղմոսների վերջում ասվում է՝ «Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Այս հավելագրությունը վերագրվում է Հակոբ Տեառնեղբորը:

## Շարականների մասին

Քրիստոնեության սկզբնական շրջանում գոյություն չունեին պաշտամունքային հատուկ շարականներ ու երաժշտություն՝ և Աստվածպաշտությունը հիմնականում սաղմոսներով էր ուղեկցվում: Հետագայում աստիճանաբար այդ նույն սաղմոսները սկսեցին եղանակներով կատարել՝ բաժանելով այն ութ ձայների: Այնուհետև այլ երգեր ու մեղեդիներ ևս ավելացան, մինչև որ հաստատվեց եկեղեցական երաժշտության և ժամերգությունների այսօրվա կարգը:

Բազմաթիվ սաղմոսներ՝ որ նախկինում եղանակով էին կատարվում, այսօր «թիվ» են ասվում՝ փոխարենը յուրաքանչյուր սաղմոսին համապատասխան նոր երգեր էին հորինվում: Արդյունքում Հայ Եկեղեցում շարականների ութ տեսակ երգեցողություն հաստատվեց՝ դրանք են՝ Օրհնութիւն՝ Հարց՝ Մեծացուսցէ՝ Ողորմեա՝ Տէր յերկնից՝ Մանկունք՝ Ճաշու՝ Համբարձի: Սրանք համապատասխան սաղմոսներից են վերցված և տարբեր մեղեդիներով են եղանակվում:

«Օրհնութիւն» է կոչվում այն երգը՝ որը մարգարեական օրհնությանն է համապատասխանում: Սաղմոսարանում այն դրված է ամեն մի կանոնից հետո և կատարվում է գիշերային ժամին: Առաջինը Մովսեսի օրհնությունն է՝ «Օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ»: Այս խոսքերով էլ սկսվում է օրհնության շարականը:



«Հարց»-ը երեք մանուկների օրհնությունն է՝ «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց...»: Սա առավոտյան ժամին է կատարվում:

«Մեծացուսցէ» -ն սուրբ Մարիամ Աստվածածնին նվիրված երգ է, որը հետևյալ խոսքերով է սկսվում՝ «Մեծացուսցէ անձն իմ զՏէր...»: Այն առավոտյան ժամին է կատարվում:

«Ողորմեա» -ն նույնպես առավոտյան ժամին է ասվում և վերցված է Ծ-րդ սաղմոսից՝ «Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան Քում...»:

«Տէր յերկնից» -ը ևս առավոտյան ժամին է երգվում և վերցված է ՃԽԸ -րդ սաղմոսից՝ «Օրհնեցեք զՏէր յերկնից...»:

«Մանկունք» -ը նույնպես առավոտյան ժամին է երգվում ըստ ՃԺԲ սաղմոսի՝ «Օրհնեցէք մանկունք զՏէր...»:

«Ճաշու» շարականները այդ ժամերի և պատարագի ընթացքում կատարվող այն շարականներն են, որոնք տարբեր սաղմոսներից են քաղված՝ օրվան համապատասխան:

«Համբարձի» շարականը երգվում է երեկոյան ժամին՝ ըստ ՃԻ սաղմոսի՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս...»:

Բացի այդ հորինվեցին նաև երաժշտական այլ գործեր՝ որոնք շարականների թվին չեն դասվում, այլ երգ՝ տաղ՝ գանձ և մեղեդի են կոչվում:

Շարական բառը ստուգաբանվում է որպես՝ «շար ական պատուականաց»՝ պատվական՝ ազնիվ քարերի շարան:

Հին ժամանակներում սաղմոսին առընթեր շարականը սաղմոսն ամբողջովին ընթերցելուց հետո չէր երգվում՝ ինչպես այսօր է ընդունված՝ այլ սաղմոսի մի քանի տունն ասելուց հետո շարականի առաջին տունն էր երգվում՝ կրկնելով այն երկու կամ երեք անգամ: Դարձյալ ընթերցվում էր սաղմոսի մի քանի տուն և կատարվում շարականի հաջորդ տունը, և այսպես շարունակ՝ մինչև սաղմոսի վերջին խոսքերը՝ որի հետ կատարվում էր շարականի վերջին տունը:

## Օրհնության մասին

Օրհնություն երբեմն նշանակում է երանություն, բարություն և կյանք: Երբեմն էլ նշանակում է շնորհակալություն, խոստովանություն կամ հայտնություն: Այն օրհնությունը, որով Աստծուն օրհնում ենք,

իրականում գոհության, շնորհակալության և խոստովանության արտահայտություն է: Իսկ այն օրհնությունը, որով Աստված է օրհնում մարդկանց՝ կյանք, երանություն և բարությունն է ընդգրկում:

Աստծուն հետևյալ կերպ ենք օրհնում. նախ հայտնում ենք մեր շնորհակալությունը և գոհությունը՝ Իր անվճար երախտիքների համար, այնպես, ինչպես վայել է արարածներին՝ այս ամենը հայտնել իրենց Տիրոջը ոչ որպես կարոտողի, այլ անկարոտի, որպես Աստծու: Ինչպես ասում են՝ «Օրհնեալ է Աստված, որ անտես չարեց իմ աղոթքը» (հմմտ. ԿԵ 20):

Օրհնության երկրորդ եղանակը խոստովանությունն ու վկայությունն է, որ բարի է բնությամբ և լեցուն ամեն շնորհներով, անթերի ու երանելի, երջանիկ ու բարեբուխ: Ինչպես և ասում են՝ «Օրհնեալ ես մեր հայրերի Տէր Աստուած» (Դան. Գ 52):

Երրորդ եղանակը՝ հայտնությունն է: Հայտնություն և խոստովանություն այսինքն՝ որ Աստված հայտնի է և ոչ քողարկված կամ թաքնված: Ինչպես ասում են՝ «Օրհնեալ է Աստված» (Սաղմ. ԿԵ 20) կամ «Փառավորյալ է Նրա Անունը» (Բ Թես. Ա 12):

Օրհնությունները լինում են տարբեր տեսակների: Նախ՝ օրհնություն, որով մարդն է մարդուն օրհնում: Ըստ հետևյալ խոսքի՝ «Օրհնեց Մելքիսեդեկը Աբրահամին» (տե՛ս Ծննդ. ԺԴ 19):

Երկրորդ օրհնություն, երբ մարդիկ Աստծուն են օրհնում: Ինչպես ասվում է՝ «Օրհնություն և փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն»:

Երրորդ՝ որով Աստված է օրհնում ստեղծվածներին: Ինչպես Աստված օրհնեց Աբրահամին՝ ասելով՝ «Աճեցեք և բազմացեք» (տե՛ս Ծննդ. ԼԵ 11): Սրա համար է պատարագիչ քահանան ասում՝ «Որ օրհնում ես նրանց, ովքեր օրհնում են Քեզ Տէր»:

Հարկ է իմանալ, որ օրհնությունները երկու տեսակի են լինում՝ երկնային և երկրային, այն է՝ հոգևոր և մարմնավոր, անցավոր և անանց: Արդ՝ երկու կտակարաններով երկու օրհնություններ բաշխվեց մարդկանց, ըստ որում՝ Աստված մարմնի բազմանալը և նյութական հարստությունը Իսրայելացիներին տվեց, իսկ կուսությամբ ու աղքատությամբ հոգու աճը՝ քրիստոնյաներին:

Չորրորդ՝ օրհնություն, որով ստեղծվածները նվիրաբերվում և սրբագործվում են: Ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «Մանավանդ երբ դրանք գոհությամբ են ընդունվում, քանի որ Աստծու խոսքով և աղոթքով ամեն բան մաքուր է» (Ա Տիմ. Դ 45): Այսպես է՝ քահանայական հանդերձների, սեղանի, տաճարի, մոմերի և այլ իրերի օրհնությունը, որոնք աղոթքով և օրհնությամբ սրբագործվում են և ընծայվում:



Հինգերորդ՝ որով արարածները՝ թռչունները և այլ կենդանիները, ծովերը և գետերը օրհնում են Աստծուն: Ինչպես Դանիելն է ասում՝ «Ցերեկներ և գիշերներ, Օրհնեցե՛ք Տիրոջը» (Դան. Գ 69): Երկնքի թռչունները, լույսը և խավարը Տիրոջն օրհնում են նրանով, որ Աստծու մեծությունն են հայտնում՝ կատարելով իրենց գործերը, իրենց ընթացքով ընթանալով, որովհետև անխոս տարրերի, այսինքն՝ երկնքի և երկրի կամ այլ արարածների տեսությունը օրհնություն և գոհություն է Աստծուն: Մանավանդ, որ նրանցով հայտնի է լինում Արարիչը՝ Աստված, ըստ հետևյալ խոսքի՝ «Աստծու աներևույթ հատկությունները իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ» (Հռոմ. Ա 20), նաև՝ «Երկինքը պատմում է Աստծու փառքը» (Սաղմ. ԺԸ 2): Այսինքն՝ այս ամենը տեսնելով և խորհելով՝ ճանաչի՛ր դրանց Արարչին՝ Աստծուն և օրհնությամբ գոհացիր Նրանից: Սա է անխոսների օրհնությունը:

Վեցերորդ՝ օրհնություն, որով մարդիկ հրեշտակներին են օրհնում (տե՛ս Տոբիթ ԺԱ 6):

Յոթերորդ՝ օրհնություն, որով հրեշտակներն են օրհնում Աստծուն՝ միշտ ասելով՝ «Օրհնեալ» և «Փառք»:

Ութերորդ՝ օրհնություն, որով ընծայումից հետո այլափոխվում է իրի գոյացությունը ըստ Մատթեոս ավետարանչի՝ «Օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը» (Մատթ. ԻԶ 26): Որովհետև այս օրհնությունից հետո, հայտնի է, որ այլևս չմնաց հացի գոյացությունը, այլ այն Քրիստոսի ճշմարիտ Մարմնի փոխարկվեց:

Իններորդ՝ օրհնություն, որով աղոթքների, պաղատանքների և օրհնությունների դասակարգումն է նշվում: Ըստ որում սաղմոսի վերնագիրն ասում է՝ «Օրհնության սաղմոս», կամ «Օրհնություն աստիճանաց» և այլն:

Տասներորդ օրհնությունը, որը Մովսեսի օրհնությունն է, կոչվում է նաև Ավագ օրհնություն: Չնայած որ Հովսեփը նույնպես օրհնեց իր որդիներին, սակայն Մովսեսը ավագն է բոլոր մարգարեներից: Նաև Մովսեսը դեմ հանդիման կանգնելով դեմ առ դեմ խոսեց Աստծու հետ՝ առանց առակների: Միայն Մովսեսը աստված կոչվեց և ոչ թե զուտ անունով միայն, այլև գործով էր իշխում վերին ու ստորին արարածներին:

Դարձյալ՝ Մովսեսի օրհնության մեջ է պատմվում աշխարհի վախճանի և վերջին օրհնության մասին՝ մեղավորներին՝ տանջանք և արդարներին պատիվ խոստանալով:

## Մաղթանքի մասին

Մաղթանք են կոչվում համառոտ աղոթքները՝ որոնք ժամերգության մեջ օգտագործվում են իբրև աղոթքների հիմնական իմաստը պարունակող բացատրություններ: Սրանք նաև ուրիշներին աղոթել թելադրելու համար կատարվող աղոթքներ են:

Մաղթանք ասելու իրավունքն ունեն ավագ պաշտոնյան, ավագերեցը կամ դասի կարգավորողը: Մաղթանք ասողները «ժամօրհնողներ» են կոչվում: Մաղթանքները լինում են օրվան համապատասխան՝ ինչպես՝ տերունական ու սրբերի տոների, կամ պահոց օրերին նվիրված մաղթանքները:

Տերունական տոների մաղթանքը տվյալ տոնին է համապատասխանում:

Սրբոց տոների մաղթանքները բարեխոսական են: Նախնապես դիմվում է սուրբ Աստվածածնի բարեխոսությանը՝ ապա՝ Հովհաննես Մկրտչի ու Ստեփանոս Նախավկայի՝ այնուհետև Գրիգոր Լուսավորչի և հետո միայն այն սուրբի՝ ում հիշատակին է կատարվում:

Գիշերային ժամերգության մեջ պահոց օրերի մաղթանքները ըստ ութ ձայների են որոշված, և յուրաքանչյուր մաղթանքի առաջին խոսքերը սաղմոսներից են քաղված:

## Քարոզի մասին

Քարոզել նշանակում է սնել ժողովրդին Աստծու Խոսքի Հոգևոր Հացով կամ լուր հուչակել, հրապարակել, հրատարակել, ծանուցանել, համբավել: Ինչպես Աստված հրամայեց Եսայի մարգարեին քարոզել, այսինքն՝ ժողովրդին ծանուցանել՝ ազդարարել:

Քարոզները նաև աղոթքների կոչեր են՝ և ասվում են նախ՝ աշխարհի խաղաղության՝ եկեղեցու հաստատության՝ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսների՝ հայրապետի՝ ապա՝ վարդապետների՝ քահանաների՝ սարկավագների՝ դպիրների և եկեղեցու ուխտի մանուկների համար: Քարոզի ժամանակ հիշատակվում են նաև աշխարհի թագավորներն ու իշխանները՝ առհասարակ ամբողջ ժողովուրդը և ի Քրիստոս ննջածները:



## Բարեխոսության մասին

Սուրբ են կոչվում նրանք, ովքեր Աստծուն հաճելի կյանքով ապրեցին, կամ նահատակությամբ վկայի մահը ընդունեցին:

Ճգնավոր են կոչվում նրանք, ովքեր սատանայի դեմ պատերազմելով ճգնեցին և հանուն Տիրոջ բազում վշտերի ու նեղությունների համբերելով՝ հաղթեցին:

Բարեխոսական աղոթքների պատճառը կայանում է հետևյալում. երբ անհատը, իր մեղքերի ծանրությունը գիտակցելով, չի համարձակվում որևէ բան խնդրել Աստծու Ամենազոր Տերությունից, ապա դիմում է սրբերի ու ճգնավորների միջնորդությանը՝ ասելով՝ «Նրանց աղոթքներով ու բարեխոսությամբ ողորմիր մեզ», որպեսզի Տերը նրանց միջնորդությամբ ողորմի:

## Հարցեր պաշտամունքի մասին

Հարց. -Ինչո՞ւ է եկեղեցում պաշտամունքը երկու դասերով ընթանում:

Պատասխան. -Որովհետև, երկդասյա էին տաճարում Դավթի կարգած երգիչները՝ ովքեր ամեն օր՝ գիշեր-ցերեկ՝ քսանչորս ժամ պաշտում էին Տիրոջը:

Ինչպես հայտնի է Ասափի ու Կորխի սաղմոսներից՝ Հին տաճարում սաղմոսերգությունը դաս առ դաս էին կատարում: Նույն օրինակով է նաև Եկեղեցին երկու դասեր կարգել:

Մեկ այլ իմաստով նշանակում է՝ նախ՝ հրեաները, ապա՝ հեթանոսները: Դարձյալ՝ նախ՝ վերին, ապա՝ ստորին պաշտոնյաները:

Նաև՝ հանդերձյալում լինելու են երկու ումեր՝ մեկը կազմված հրեշտակներից, մյուսը՝ մարդկանցից, որպես Սուրբ Երրորդության հա-

*վխտյան փառաբանողներ:*

*Երբեմն երկու դասերը միաձայն են երգում՝ ինչպես օրինակ՝ «Փառք ի բարձունս» և այլ երգերում: Սա հրեաների ու հեթանոսների միությունն է ցույց տալիս՝ որպես մի հոտ և մի պաշտամունք: Դարձյալ խորհրդանշում է՝ որ հանդերձյալ կյանքում խառնվելու են հրեշտակների հետ այն մարդիկ, ովքեր լրացնելու են ընկած սուրբ կույսերի տեղը:*

*Ընդհանրապես շարականը երկու անգամ է ասվում՝ որովհետև հոգի ու մարմին ենք: Իսկ երեքի դեպքում Սուրբ Երրորդությանն է ուղղվում:*

*Հարց. -Ինչո՞ւ ենք միաձայն երգում:*

Պատասխան. – *Տերունական տոներին միաձայն ենք երգում՝ որովհետև առաջ Ադամը հրեշտակների հետ էր օրհնում Աստծուն՝ իսկ հետո բաժանվեց՝ սակայն Քրիստոսով դարձյալ հոդակապվեց նախկին օրհներգություններին հարմարապես: Այս է պատճառը՝ որ կիրակի օրերին միասին «ձայնիւ» ենք երգում՝ իսկ այլ օրերին «Թիվ» ենք ասում:*

*Նաև՝ Տիրոջ ծննդյան օրը հրեշտակները ձայնակից էին հովիվներին:*

*Երրորդ՝ Տիրոջ հարությամբ հրեաներն ու հեթանոսները՝ մեռյալներն ու կենդանիները միաբան էին:*

*Չորրորդ՝ Տիրոջ երկրորդ գալուստին մարդիկ միաձայն կլինեն հրեշտակների հետ:*

*Իսկ երկու դասերը վկայում են՝ որ այսօր զանազանվում են հրեշտակներն ու մարդիկ՝ երկինքն ու երկիրը:*

*Հարց. -Ինչո՞ւ է միայն մի սարկավագ քարոզում:*

Պատասխան. *-Ինչպես յուրաքանչյուր դասից միայն մեկն է սաղմոսում՝ այնպես էլ այստեղ ՝ երկու դասերից միայն մեկն է քարոզում:*

*Երկրորդ՝ Մովսեսը միայնակ աղաչում էր ամբողջ ժողովրդի համար:*

*Երրորդ՝ մեր Տերը աղոթում էր ամբողջ մարդկության համար: Եվ նույնն է խորհուրդը, երբ մեկը պատարագում կամ աղոթում է ուրիշների համար:*

*Չորրորդ՝ սարկավագը խորհրդանշում է Սուրբ Հոգին, Ով լուռ բարեխոս է լինում մեզ մեր հեծեծանքներում:*



## Ընթերցվածք և հավատամք

*Հարց. -Ինչո՞ւ ենք նախ մարգարեական ու առաքելական խոսքերը կարդում՝ ապա նոր միայն՝ Ավետարանը:*

Պատասխան. *-Որովհետև մարգարեները կանխասացին Միածնի գալուստն ու այլաբանորեն այդ մասին գրեցին՝ ինչը հետագայում սուրբ առաքյալների միջոցով մեզ ծանուցվեց: Այդ է պատճառը՝ որ նախ՝ նրանց գրվածքներն ենք ընթերցում և այնուհետև՝ Ավետարանը:*

*Սրանից հետո ասում ենք «Հավատամք»-ը՝ որը ստուգապես և աներկբայորեն Սուրբ Հոգու կողմից է շնորհված՝ սուրբ Աթանաս հայրապետի միջոցով, Նիկիայի սուրբ ժողովի ժամանակ՝ որպես ուղղափառ հավատի լուսաճաճանչ դավանություն:*

*Իսկ համառոտ այն խոսքը՝ որ «Հավատամք» -ից հետո ավագ քահանան է ասում՝ հետևյալն է.*

*«Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն և Միոյ Աստուածութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»*

(Իսկ մենք փառավորում ենք Նրան՝ Ով հավիտենականությունից առաջ է. երկրպագելով Սուրբ Երրորդությանը և Մի Աստվածությանը՝ Հորը՝ Որդուն և Սուրբ Հոգուն՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն): *Սա մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի խոսքերն են՝ որոնք իր ձեռքով հավելեց «Հավատամքին» այն կարդալուց հետո՝ որպես հաստատություն հավատի և կնիք՝ ուղղափառության: Սրանից հետո ասվում է քարոզ՝ աղոթքներ՝ որոնցով էլ եզրափակվում է:*

*Հարց. -Ինչո՞ւ են եկեղեցում ընթերցում նախ մարգարեական գրքերը՝ այնուհետև առաքելական թղթերը՝ ապա՝ Ավետարանը՝ և հետո՝ «Հավատամք»-ը:*

Պատասխան. *-Ասենք՝ որ մարգարեները՝ իբրև կանխասացներ՝ նախապես պատմեցին Բանի մարդեղության և մարդկանց փրկության մասին՝ իսկ առաքյալները, որպես ականատեսներ՝ վկայեցին դա: Իսկ կանխասելը նախորդում է վկայելուն:*

*Դարձյալ՝ մարգարեները հեռվից՝ իսկ առաքյալները մոտիկից տեսան մարմնացած Բանին: Այս պատճառով էլ տեղերը փոխում ենք. մարգարեությունները եկեղեցու մեջ ենք ընթերցում՝ իսկ առաքելական*

*թղթերը՝ բեմի մոտ:*

*Դարձյալ՝ մարգարեները սերմանեցին՝ իսկ առաքյալները հնձեցին: Նաև՝ մարգարեները խոսեցին՝ իսկ առաքյալները կատարեցին:*

*Դարձյալ՝ այստեղ՝ նախ՝ օրինակը՝ հետո ճշմարտությունն ենք իմանում՝ և ապա այնտեղ՝ բեմի վրա՝ առանց ընդմիջման ընթերցվում է Ավետարանը՝ որովհետև ավետարանիչն ասում է՝ «Եվ ամենքը Աստծուց ուսած կլինենք» (Հովհ. Զ 45):*

## Մոմ վառելը և խնկարկելը

*Հարց. -Ի՞նչ է նշանակում Ավետարանի «օրթի» -ն՝ մոմ վառելը և բուրվառ գցելը:*

*Պատասխան. -Սրանք օրենքի խորհուրդն ունեն: Երբ Տերը Սինա լեռան վրա իջավ, փող հնչեց՝ որոտ լսվեց՝ հուր և ծուխ ելավ՝ որից հետո Մովսեսին տրվեցին պատվիրանները: Նույնը և այստեղ. որոտի փոխարեն բարձրաձայն «օրթի» ենք ասում՝ որ նշանակում է՝ մոտեցե՛ք: Եվ ինչպես որ Իսրայելի ժողովուրդը մոտեցավ լեռանը՝ այնպես էլ մեզ է անհրաժեշտ ոտքի կանգնել՝ առաջ գնալ ու լսել:*

*Բուրվառի ձայնը փոխարինում է փողի ձայնին՝ իսկ ճրագը՝ կրակին, նաև Մովսեսի դեմքից ցոլացող լույսին, խունկը՝ ծխին՝ գրակալն ու բեմը՝ բազմության համար անմատչելի Սինա լեռանը, իսկ գրակալի ծածկոցը՝ այն ամպին, որը ծածկեց Մովսեսին:*

*Մեկ այլ իմաստով գրակալը խորհրդանշում է նաև Մովսեսին, ով Աստծուց պատգամներ ընդունելով՝ ժողովրդին էր փոխանցում, իսկ գրակալի ծածկոցը՝ օրենքի քողին: Նաև խաչն է խորհրդանշում և Քրիստոսի խաչի վրա քարոզելը:*

*Շուրջառը Մովսեսի լուսավոր քողի օրինակն է, Ավետարանը՝ երկու տախտակների, իսկ ընթերցումը՝ աստվածխոսության օրինակը:*

*Ընթերցող սարկավագը միջնորդ հրեշտակն է կամ Մովսեսը՝ որ ժողովրդի խնդրանքով հայտնեց Աստծու պատվիրանները՝ ըստ հետևյալ խոսքի՝ «Դո՛ւ խոսիր մեզ հետ՝ և մենք կհնազանդվենք: Աստված թող չխոսի մեզ հետ» (Ելք Ի 19): Այս իմաստով է սարկավագը նախ քահանայի առաջ ընթերցում՝ որպես թե նրանից է սովորում, և ապա՝*



*դառնում ժողովրդին:*

*Ժողովրդի գլխաբաց կանգնելը նշան է, թե բաց են սրտերը Արարչի հրամանների համար, իսկ ձեռքերը իրար հպած պահելը նշանակում է՝ «Ծառա եմ ու հնազանդ»: Երկու ոտքերը մեկտեղ կցված կանգնելը նշանակում է, որ նեղ է Արքայության ճանապարհը:*

## Բուրվառի խորհուրդը

*Բուրվառը բազում խորհուրդներ ունի: Նախ՝ ըստ ոմանց՝ բուրվառը Քրիստոսի մարդեղությունն է նշանակում՝ հուրը՝ աստվածությունը՝ իսկ ծխումը՝ Սուրբ Հոգու բուրումն է: Նրա երեք շղթաները երեք գոյացություններն են: Վերին ագույցը նշանակում է միություն՝ զանգակները առաքյալներն են՝ իսկ սարկավագները քարոզիչների օրինակն են:*

*Դարձյալ՝ բուրվառը Կույս Մարիամն է՝ հուրը՝ նրանում բնակված Աստվածությունը՝ իսկ կրակին մոտեցրած խունկն ու բուրած հոտը՝ մարմնի միությունն է Բանի հետ ու աշխարհով մեկ տարածված անուշահոտությունը: Երեք շղթաները նրա երեք պատիվներն են՝ որոնք են՝ կույս՝ մայր և ծնող Աստծու՝ որ առաքյալների քարոզությամբ հնչեց բովանդակ տիեզերքում:*

*Դարձյալ՝ բուրվառը մեր սիրտն է՝ խունկը՝ աղոթքը՝ հուրը՝ ջերմ սերը:*

*Բուրվառի նյութերի նշանակներն են. ոսկին՝ մեր հավատը՝ արծաթը՝ սուրբ վարքը՝ պղինձը՝ Աստծու երգերին վարժված հնչող ձայնը՝ երկաթը՝ խոսքը՝ որ ջախջախում է ստոր ախտերը: Իսկ միմյանց միակցված երեք շղթաները չնչի՝ մարմնի ու հոգու սերտ դաշնությունններն են արտահայտում: Վերին ագույցը իմացական հոգին է՝ իսկ ներքին կառույցը՝ մարմնի բնությունը: Բունատեղին՝ որ վերին մասում է՝ մեր հիշողությունն է՝ իսկ բուրվառը իր ամբողջության մեջ՝ առ Աստված ուղղված մեր կատարյալ ընթացքը՝ որը՝ առնելով ձեռքի մեջ՝ միշտ Աստծուն ենք մատուցում:*

*Դարձյալ՝ բուրվառը բովանդակ արարչագործությունն է խորհրդանշում՝ այսինքն՝ երկինքը՝ երկիրը և մյուսները՝ ինչպես և ասվեց:*

## Կոչնակի մասին

*Ժամհարի ազդարարությունը Գաբրիելի փողի օրինակն է, այսինքն՝ լուսո հրեշտակների խումբը փողի գոչմամբ, իսկ մարմնատանջ հոգնությամբ վաստակած հանդիստ մահիճը թողնելը և փութով աղոթատեղի հասնելը նշանակում է՝ թողնել հողաթավալ և մարմնական ջանքերով ապրած կյանքը և համընդհանուր հարությամբ հասնել դատաստանի ատյանին:*

*Մենք էլ, հարության խորհրդի օրինակով, վեր ենք կենում ու գնում եկեղեցի և խոնարհվում Քրիստոսի առջև՝ և՝ հիշելով մեր մեղքերը, դատապարտում ենք ինքներս մեզ ու մեծ հառաչանքներով Քրիստոսից ողորմություն խնդրում:*

*Նաև Սինա լեռան վրա հնչած փողի ազդարարության օրինակն է և նշանակում է Սուրբ Հոգու ազդեցությունը մարգարեների վրա՝ նրանց, ովքեր բարձրաձայն փողով, բարձր լեռան վրա կանգնած՝ Սիոնի ավետիսն էին սփռում:*

*Մեկ այլ դեպքում այն առաքյալների ու ավետարանիչների խմբի հետ է առնչվում, ովքեր քաջաբար հնչեցրին փողերը, որպես ժամամուտ տիեզերքին: Նաև ննջեցյալների համընդհանուր հարության մասին հանդերձյալներին է ազդարարում:*

*Երբ Նոյը Աստծուց տապան կառուցելու հրաման ստացավ՝ որովհետև մարդկանց պատճառով ջրհեղեղ էր լինելու աշխարհում՝ և այն գրեթե հարյուր տարում կառուցեց, ապա կամենալով հավաքել բոլոր կենդանիներին վերցրեց փայտե ժամահարը և հնչեցրեց: Եվ երբ նրան մոտեցան կենդանիները՝ գազանները՝ ընտանիները և սողունները՝ ապա մաքուր կենդանիներից վերցրեց յոթական՝ իսկ անմաքուրներից՝ երկուական ու մտցրեց տապան՝ որոնք և փրկվեցին ջրհեղեղի ջրերից:*

*Նմանապես և այժմ սուրբ Եկեղեցին է աշխարհի ծովում լողացող տապան՝ իսկ մենք ժամհարի հնչեցրած զանգով հավաքվում ենք եկեղեցում՝ սրբերով ու անսուրբերով՝ մեղավորներով ու արդարներով հանդերձ և փրկվում մեղքերի ջրհեղեղից:*

*Դարձյալ՝ ինչպես որ Մովսեսը երկու փող պատրաստեց՝ որոնք հնչեցնում էին քառասունամյա երթի ընթացքում՝ նույնպես և մենք՝ զանգի ղողանջը լսելիս՝ եկեղեցի ենք գնում՝ ուր չկա չարի համար բնակավայր՝ և այնտեղ հանդարտվում ենք մարմնով ու աղոթում: Եվ ինչպես որ ոտքերով եկեղեցի ենք գնում՝ այնպես էլ մտքով երկինք ենք ելնում՝ դեպի հույսը մեր և Առաջնորդին՝ Քրիստոսին՝ մեր աղոթքները նվիրելով՝ հանգստանում ենք այնտեղ՝ ուր ամենևին չար չկա և սրբերի ու հրեշտակների բնակավայրն է:*



## Այլ լեզուներից փոխառած բառերը

*Հարց. -Ի՞նչ է նշանակում «ալելուիա» -ն՝ որն ասվում է նախքան Ավետարանի ընթերցումը:*

*Պատասխան. -«Ալելուիա» -ն եբրայեցերեն բառ է, որը միանշանակ գործածում են և՛ երկնավորները, և՛ երկրավորները: Ըստ Հովհաննես ավետարանչի՝ «Լսեցի ինչպես բազմության մի բարձր ձայն երկնքում, որ ասում էր «Ալելուիա...» (Հայտ. ԺԹ 1): Իսկ սաղմոսասացությունը մարդկանց երգեցողությունն է: Հետևաբար «Ալելուիա» -ն սաղմոսին առընթեր ասելով՝ նշանակում է, որ հրեշտակները և մարդիկ միաբանված՝ օրհնում են Աստծուն: Ուստի, երբ «Ալելուիա» ենք ասում, ապա դրան հաջորդում է սաղմոսասացությունը:*

## «Ալելուիա» -ի մեկնությունը

*Եբրայական մեկնություն՝ «Ալէ» նշանակում է Հայր, «լու»՝ Որդի, «իա»՝ Հոգի:*

*Դարձյալ՝ «Ալ» նշանակում է հայտնել գոյություն, «էլ»՝ Աստված, «Ուիա»՝ օրհնեցե՛ք և գովեցե՛ք Աստծուն:*

*Դարձյալ՝ «Ալէ»՝ օգնիր, «լու»՝ ինձ, «իա»՝ Տեր:*

*Դարձյալ՝ «Ալէ»՝ փրկիր, «լու»՝ ինձ, «իա»՝ Աստված:*

*Յոթանասուներկու թարգմանիչները թարգմանեցին որպես՝ «Գովաբանեցեք Տիրոջը», հույները՝ «Գովաբանեցեք որ էն», իսկ ասորիները՝ «Փառք Քեզ Աստված»: Դարձյալ՝ ըստ ոմանց նշանակում է՝ «Օրհնություն ի բարձրունս», ինչպես նաև՝ «Օրհնեցեք Տիրոջը»:*

*Հարց. -Ի՞նչ են նշանակում այլ լեզուներից փոխառած՝ «Ովսան-*

*նա»-ն՝ «Պուոսխումե» -ն և մյուս բառերը:*

*Պատասխան. -«Ովսաննա» -ն եբրայեցերեն լեզվից թարգմանվում է՝ փրկություն: Իսկ «պուոսխումե» -ն հունարեն է և նշանակում է՝ դեպի վե՛ր նայեցեք: Դարձյալ՝ «Պուոսխումէ» -ն թարգմանվում է նաև՝ «Ուղիղ դիմացդ նայիր», կամ «Վեր բարձրացրեք ձեր ձեռքերը»:*

*«Օթէոս» -ը թարգմանվում է՝ Աստված: «Օրթի» բառը թարգմանվում է որպես «ունկնդրեցեք» կամ «ոտքի ելեք»: «Պրոս Օթեոս» -ը թարգմանվում է որպես «Աստված ասում է» կամ ըստ ոմանց՝ «Աստված հողեղենների հետ է խոսում», ինչպես նաև՝ «Դեպի Քեզ Տեր Աստված մեր»:*

*Սրանք խաչի վրա կախված եռալեզու՝ եբրայերեն՝ հունարեն և լատիներեն գրության խորհուրդն ունեն: Ուստի պատարագի ժամանակ հիշատակվում է եբրայեցերենն ու հունարենը՝ որոնք են «ալէլուիա» -ն և «պուոսխումե» -ն՝ իսկ լատիներենի փոխարեն այն լեզուն է գործածվում՝ որով մատուցվում է պատարագը:*

*Ինչ վերաբերում է պատարագի ինը «Տէր ողորմեաներին» և «Երեքսրբեան» օրհնություններին՝ ապա դրանք երեք եռյակների բաշխված վերին ինը դասերի խորհուրդն ունեն: Իսկ քշոցը՝ խորհրդանշում է վեցթևանի սերովբեներին: Մովսեսի ցուցումով քերովբեները դրվեցին քավության խնկամանի վրա՝ իրենց թևերով կափարիչի վրա հովանի անելու համար:*





# ՎԵՐՋԱԲԱՆ

## Եսայի վարդապետի խոսքը

*Բոլոր այս ժամերին Եկեղեցին արթուն վիճակում Քրիստոսի գալստյանն է սպասում: Այսպես է ասում նաև Դավիթ մարգարեն. «Օրվա մեջ յոթն անգամ Քեզ պիտի օրհնեմ Քո արդար դատաստանի համար» (Սաղմ. ճԺԸ 164):*

*Կանոնական աղոթքների նման սահմանումը ունեն բոլոր Եկեղեցիները: Սա երկար ժամանակ, մեր ինքնակալ թագավորների օրոք պահպանվեց նաև մեր եկեղեցում, իսկ երբ հալածողները զորեղացան, մեր ազգը վտանգներից ու հարկահանություններից ուժասպառ՝ այլևս չկարողացավ ըստ կարգի ու սահմանված ժամերի մեկտեղ աղոթել, այլ երկու և երեք ժամերի աղոթքներն էին միասին կատարվում:*

*Եվ որովհետև հոգով առլեցուն էին մեր առաջին հայրերը, ժամերգությունների ու աղոթքների շուրջ գրառումներ թողեցին, որպեսզի թերևս հետագայում վերականգնվեն:*

*Խաղաղ և օրինավոր իշխանությունների օրոք եկեղեցում կատարվում էին բոլոր՝ յոթ ժամերգությունները, որին միայն արժանավորներն էին մասնակցում, և Առաքյալների օրերից հաստատված՝ գոյություն ունի գավիթը, որը ապաշխարողների տեղն է, քանի որ անմաքուրներին եկեղեցին չի ընդունում, այլ պատարագի ահավոր խորհրդի պահին նրանց, ունկնդիրների հետ միասին, դուրս էին հանում գավիթ: Սարկավագը դռնապահ էր կարգված, որպեսզի արգելվի նմանների մուտքը եկեղեցի: Եվ այս մեծ ամոթ էր, որով գործվում էր թողությունը, երբ Արքունական Տաճարից և լուսերամ դասից հայտնապես բանադրվում էին դեպի անապատի տանջանքները:*

*Հետագայում եկեղեցու առաջնորդները, նկատի ունենալով ոմանց տկարությունը, որոնք չէին կարողանում հրապարակավ գավիթ դուրս գալ, մեղմացրեցին այս արգելքը և իրավունք տվեցին բոլորի հետ միա-*

սին աղոթել: Սակայն սարկավագի հրամանը անխափան մնաց, որպեսզի նա, ով այդպիսի խոնարհություն ունի, դուրս գա գավիթ, իսկ եթե չի կամենում, մնա ներսում և աղոթի:

## Հորդորական խոսք հոգեպես արիացած զինվորությանը

Այսուհետ զգոն լինենք և մաքրենք մեր հոգիների պատմուճանը՝ լվանալով չարից մեր մտքերն ու խղճմտանքը՝ որպեսզի արժանապես կանգնենք Քրիստոսի՝ մեր Աստծու առջև ու ողորմության շնորհը գտնենք իր ժամանակին: Եվ չնմանվենք այն ծուլացողներին՝ որոնց մասին Դավիթ մարգարեն ասում է՝ «Ննջեցին և ոչինչ չգտան» (Սաղմ. ՀԵ 6): Այլ նախանձախնդիր լինենք սրբերից ամենաարիներին՝ ովքեր ամեն ժամ՝ նեղության՝ վշտի և տառապանքների մեջ լինելով՝ ոչ միայն չդադարեցին աղոթել՝ այլև գիշեր-ցերեկ անխոնջ հսկում էին:

Իսկ մենք՝ որ խաղաղության ու անդորրության մեջ ենք՝ ծուլանում ենք անգամ անհրաժեշտ աղոթքները կատարել: Իսկ սրանում հարատևող ընտրյալների համար քնելն ավելի դժվար էր՝ քան արթուն մնալը՝ իսկ արթնությունն ավելի սիրելի էր՝ քան նիրհելը: Իսկ մենք, այս ամենն ամբողջովին թողնելով՝ ներհակորեն ենք վարվում. ննջելը գերադասում ենք արթնությունից՝ որովհետև երբ անզգայաբար ննջում ենք՝ չենք խորհում:

Դարձյալ արթնության և աղոթքի մասին:

Երբ արթուն ենք լինում, մտաբերում ենք մտացածին կարիքների մասին բոլորովին մոռանալով վիհը՝ որը մեր ոտքերի տակից ձգտում է մեզ կուլ տալ՝ իսկ չնչին նեղության դեպքում բերանբաց դեգերում ենք: Եվ ոչ միայն այս՝ այլև աղտոտ խորհուրդներով տարուբերված՝ ծփում ենք՝ ինչը մթնեցնում է մեր լուսավոր միտքն ու նսեմացնում մաքրափայլ հոգին՝ որի պատճառով այսպես արթուն մնալը եղկելի է դառնում: Որովհետև նրա համար՝ ով գիշերն անքուն մնալով չարունակ հարում է չարին՝ ավելի լավ է ննջել՝ քան այսպիսի արթնությամբ բանական միտքն անբանության փոխարկել:

Անհրաժեշտ է նախանձախնդիր լինել բարուն և ճշմարտությամբ մեր անձերն արթնացնելով գնալ եկեղեցի՝ ժամերգությանը մասնակցելու՝ և հեղձուցիչ հոգով աշխարհական գործերով չզբաղվել՝ այլ անզբաղ ու անձանձրույթ խորհրդով Աստծու առջև կանգնել՝ անձերի շահի և տեսնողների օգուտի համար: Եվ մարմնավոր հոգսերը պատճառ չբերել՝ քանզի դանդաղաշարժների ու ծույլերի համար փակ է Երկնքի արքայության դուռը:

Աղաչում եմ՝ արիացե՛ք և փութացե՛ք՝ որովհետև եթե չկարողանանք լիարժեք կերպով կատարել Տիրոջ հրամանը՝ որ ասում է՝ «Ամեն ժամ պետք է աղոթել և չձանձրանալ» )տե՛ս Ղուկ. ԺԸ 1(՝ գոնե անհրաժեշտից չխուսափենք և առանց աղոթքի օրը չանցկացնենք՝ այլ ժրաջանությամբ հաստատուն կենանք՝ որպեսզի հանդերձյալ բարիքներին՝ անճառելի ու անպատմելի ուրախությանը՝ հասնել կարողանանք:

Շնորհներով և մարդասիրությամբ մեր Տիրոջն ու Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին՝ Որին վայել է փառք՝ իշխանություն ու պատիվ՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ՎԵՐՋ



# ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ


1. «Աստվածաշունչ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1994 թ.
2. «Ժամագիրք»
3. «Մեկնութիւն ժամակարգութեան», Զմյուռնիա, 1759 թ.
4. Գաբրիէլ Ավետիքեան, «Բացատրութիւն շարականաց», Վենետիկ, 1814 թ.
5. Նորայր Արք. Պողարյան, «Ծիսագիտություն», Նյու Յորք, 1990 թ.
6. Աբել Արք. Մխիթարեանց, «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1874 թ.
7. «Արարատ» ամսագիր, ս. Էջմիածին, 19151917 թթ.
8. Խոսրով Անձեւացի, «Մեկնութիւն ժամակարգութեան», Կ. Պոլիս, 1840 թ.
9. Մաղաքիա Արք. Օրմանյան, «Հայ Եկեղեցւոյ ծիսագիտութիւնը», «Հայ խոսնակ» ամսագիր, 19331936 թթ.
10. Խոսրով Անձեւացի, «Մեկնութիւն աղօթից», Կ. Պոլիս, 1730 թ.
11. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, 1729 թ.


## Օգտագործած ձեռագրեր
## Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան


9646 Աստուածաբանական հանրագիտարան

717 Կարգաւորութիւն հասարակաց աղօթից

10199 Օրէնք ՑԺԲ հայրապետացն վասն ժամասացութեան

6562 Վասն հասարակաց աղօթից

1979 և 2018 Պօղոս Տարօնացի Բացատրութիւն ժամակարգութեան աղօթից

7117 Վասն Ալէլուին մեկնութիւն

8106 Վասն բուրվառին

1888 և 4853 Ստեփանոս Սիւնեցի «Ի խորհուրդ եկեղեցւոյ»


# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Մուտք ........................................ 5

Նախաբան ........................................ 11

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԿԱՐԳԸ ........................................13

Երկրպագություն դեմքով դեպի արևելք, Աստծու պարգևը հայ ազգին, Սուրբ Եկեղեցին ընդհանրական աղոթքի վայր, Եկեղեցի

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀՍԿՄԱՆ ՄԱՍԻՆ ........................................ 21

Գիշերային ժամ, «Տէր շրթանց»-ի մասին, «Տէ՛ր՝ գի բազում», «Յիշեսցուք ի գիշերի», «Զարթուցեալք», «Տէ՛ր ողորմեա», «ԶՔէն Գոհանամք», Սաղմոսների կանոնը, Սաղմոսների բացատրությունը, Կանոնագլուխ, Օրհնության երգը, «Թագաւոր յաւիտեան», «Ալէլուիա»

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ........................................ 36

«Երեք մանուկների» երգը, «Հարց», «Երեք մանուկներ» -ի երգի մեկնությունը, «Մեծացուսցէ», Յուղաբերների Ավետարանը, «Ողորմեա», «Տէր յերկնից», «Փառք ի բարձունս», Առավոտյան երգ, Սուրբ Աստված, «Մանկունք», «Սիրեցի», Արարչական երգ

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ........................................63

ՃԱՇՈՒ ԵՐՐՈՐԴ ԺԱՄ ........................................ 67

Սուրբ Հոգու գալուստը Երրորդ ժամին, Սուրբ Հոգու շնորհները

ՃԱՇՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄ ........................................ 71

ՃԱՇՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ ........................................ 74

ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ........................................ 77

«Խոնարհեցո», «Ապրեցո», Մեսեդի, «Համբարձի», «Որ բնակեալ է»

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ........................................ 85

«Շնորհի՛ր մեզ Տէր», «Տէրն է իմ լույսը»

ՀԱՆԳՍՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ........................................ 88

ՀԱՎԵԼՎԱԾ ........................................ 91

Ժամակարգություն, Սաղմոսասացություն, Շարականների մասին, Օրհնություն, Մաղթանք, Քարոզ, Բարեխոսություն, Հարցեր պաշտամունքի մասին, Ընթերցվածք և Հավատամք, Մոմ վառելը և խնկարկելը, Այլ լեզուներից փոխառած բառերը, «Ալէլուիա», Բուրվառի խորհուրդը, Կոչնակի մասին

ՎԵՐՋԱԲԱՆ ........................................ 106

Եսայի վարդապետի խոսքը, Հորդորական խոսք հոգեպես արիացած գինվորությանը

Ցանկ օկտագործած գրականության ........................................ 109

# ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ, ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑԻ, ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ,
ԵՍԱՅԻ ՆՁԵՑԻ, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ,
ՄԱՏԹԵՈՍ ԴՊԻՐ

Աշխատասիրությամբ՝ Արամ Դիլանյանի

Խմբագիրներ՝ Վարդան Դևրիկյան
Աննա Մկրտչյան

Սրբագրիչ՝ Վանուհի Եղիչյան

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու
Քրիստոնեական Դաստիարակության
և Քարոզչության Կենտրոն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1997